



Ա. ՅՈՒԳՈՎ

Կ.Ա. ՏԻՄԻՐՅԱԶԵՎ



Հայոց Հռոմէ





3 SEP 2013
29 JUL 2010

Գ Ի Տ Ա Կ Ա Ն - Մ Ա Ս Ա Զ Ա Կ Ա Ն

57q


3n-80

Ա. ՅՈՒԳՈՎ

Կ. Ա. ՏԻՄԻՐՅԱՆՉԵՎ

ԿՅԱՆՔԸ ՅԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

ԱԿԱԴԵՄԻԿ Բ. Ա. ԿԵԼԵՐԻ ԿՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Կ. Ա. Տ Ի Մ Ի Ր Յ Ա Ն Չ Ե Վ

Ե 781
91

ՊԵՏԱԿԱՆ
ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
1939

23 SEP 2013

12669

ԱՐՄԵՆԻ ԳԼՈՒԽ

ԶԱՐՀՈՒՐԵԼԻ ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

Մոտ քառասուն տարի առաջ, 1898 թվին, անդիլ-ական մեծ գիտնական, աշխարհառչառչակ ֆիզիկոս Վի-լյամ Տոմսոնը—լորդ Կելլինը—մահվան դատավճիռ կարդաց յերկրի վրա բոլոր ապրողներին:

—Կանցնի մի չորս հարյուր, հինգ հարյուր տարի, —ասաց գիտնականը, —և ամեն ինչ՝ վոր ապրում է, ամեն ինչ՝ վոր չնչում ե—և' մարդիկ, և' կենդա-նիները, և' թռչունները, և' ձկները, և' նույնիսկ բույսերը,—այդ բոլորին վրա կհասնի անխուսափելի և տանջալի մահը—բոլորը չնչահեղձ կլինեն:

Տոմսոնի խոսքը գիտական աշխարհի համար ո-րենք եր: Քանի վոր Տոմսոնը համարձակվել ե ամբիոնի վրայից ի լուր ամենքի հայտարարել իր սարսափելի նախագուշակությունը, ապա ուրեմն, պարզ ե, վոր նա ամեն ինչ նախորոք հաշվել, ստուգել, հիմնավո-րել ե: Դեռևս գեղաք չի յեղել, վոր Տոմսոնի խոսքն անտեղի հնչի: Դեռևս վոչ մի մարդու—վոչ Փիզիկո-սի, վոչ մաթեմատիկոսի—չի հաջողվել յերեան հանել թեկուզ մի ամենատաննչան սխալ՝ Վիլյամ Տոմսոնի աշ-խատություններում և հաշիվներում:

Իսկ այս անդամ ամեն մեկն ել կարող եր ստուգել գիտնականի հաշվարկումը և համոզվել, վոր իսկա-պես չորս հարյուր, հինգ հարյուր տարի հետո մթնո-լորտի մեջ վոչ մի գրամ թթվածին չի մնա: Իսկ յեթե ողում թթվածին չինի, չի կարելի չնչել և կիսեղդվին թե՛ մարդիկ, թե՛ կենդանիները:



А. ЮГОВ
К. А. Тимирязев
Жизн и деятельность
Гиз Арм. ССР, Ереван. 1939 г.

1973
40

ԻՍԿ ՈՒԻՐ ԿԱՆՀԱՅՏԱՆԱ ԹԹՎԱԾԻՆԸ

Բայց ո՞ւր կանհայտանա թթվածինը: Նախ, — պնդում եր ջոմսոնը, — նա կծախավի կենդանիների և մարդկանց չնշառության վրա: Այսուհետեւ — այրվելու վրա: Զե՞ վոր ինչ ել, վորտեղ ել վոր այրվի — ինի դա փայտ, նավթ, քարածուխ, — անխուսափելիորեն ողի թթվածինն ե ծախսվում: Այրումը հենց վորեն նյութի միացումն ե թթվածնի հետ: Այդ միացման ժամանակ տաքություն ե անջատվում, հաճախ յերեւ վում ե նաև վառ լույս — կրակ, — այնքան շիկանում են զանազան նյութերը թթվածնի հետ միանալիս:

Մարդու և կենդանիների որգանիզմը նույնական անընդհատ այրվում ե մոմի կամ լամպի մեջ յեղած նավթի նման: Յեվ անդադար նոր ու նոր «վառելանյութ» ե մտնում կենդանի մարմնի անհամար բջիջների մեջ, նրանց պրոտոպլազմայի մեջ, որգանիզմի ստացած սննդանյութերից:

«Մոմի կամ լամպի մեջ յեղած նավթի նման», — ասացինք մենք: Սա սոսկ համեմատություն չե — այս տեղ մեծ ե իսկական նմանությունը:

Արտաշնչեցեք սառն ապակու վրա — նա «կքրտնի», նրա վրա ջրի մանրագույն կաթիլներ կնատեն: Ուրեմն ձեր թոքերից արտաշնչած ողի մեջ ջուր կա: Բայց չե՞ վոր ջուրը բաղկացած ե թթվածնից և ջրածնից: Թըժվածինն այստեղ վերցված ե շրջապատի ողից: Իսկ ջրածնը ձեր «սեփականն ե», նա առաջացել ե ձեր ուղանիզմի բջիջներից:

Ահա նավթի վառվող լամպին սառը ապակի յեն դնում — նա «քրտնում ե»: Դա այրումից առաջացած ջուրն ե, վոր նստեց ապակու պատերին: Այստեղ ել թթվածինը վերցվում ե շրջապատող ողից: Իսկ ջրածնը պատկանում ե նավթին:

Մի նմանություն ես:

Եեթե բաժակի մեջ պարզ կրաջուր լցնենք (կրաջուրը կարելի յե ձեռք բերել դեղատնից) և ապա մի խողովակով ող արտաշնչենք նրա մեջ, կրաջուրը

կպղտութիւն: Եեթե այրվող մոմը՝ ո՞նենք բանկայի մեջ ապա մեջ կրաջուր լցնենք, այս դեպքում նույնութեա ջուրը կպղտութիւն: Այս յերեսույթի ազատնառութիւնը միացալ ողի թթվածնի հետ: Առաջացավ ածխաթթու դադ: Հենց այս գաղն ել պղտորեց ջուրը, անլուծելի նստվածք առաջնելով:

ԱԴԱՀ ԳԱԶԸ

Թթվածինն աղահ ե: Նա չափաղանց ուժեղ ձրդում ունի դեպի շատ ու շատ նյութեր: Այս անտեսանելի գաղի ատոմներն ուղղակի հարծակվում, վրա յնն պրծնում ուրիշ նյութերի ատոմներին և ամուր, շատ ամուր միանում են նրանց հետ: Անհամար ատոմների այդ սոսկալի բախումից առաջանում ե տաքություն, յերբեմն ել շատ պայծառ լույս, իսկ վորպես մնացորդ միշտ ստացվում ենոր, արդեն բարդ նյութեր և նրանց հաղմի մեջ՝ անպայման թթվածին:

Նույնիսկ յերկաթնելեայրվում մաքուր թթվածնի մեջ, այրվում ե անասելի պայծառ լույսով, հրթիռի նման չորս կողմը շլացնող կայծեր շաղ տալով: Մովորական ողի մեջ յերկաթն աստիճանաբար ե այրվում, այսինքն գանդաղորեն միանում ե թթվածնի հետ: Ժանդը վոչ այլ ինչ է, յեթե վոչ դանդաղ այրված յերկաթ:

Մեր բախուից այդ մոլեգին ու կատաղի գաղը մեջ շրջապատող ողի միայն մեկ հինգերորդ մասն ե կաղմում, իսկ մնացած չորս հինգերորդ մասը՝ պատն ե: Այդ գաղը «ծույլ ե». Նա այրմանը չի ողնում: Ողի մեջ աղոտը թթվածնի հետ միայն խառնուրդ ե կաղմում և վոչ թե քիմիական միացման մեջ ե գտնվում: Թթվածինը կարծես թե ջրիկացած, նոսրացած ե աղոտով:

Սակայն յենթադրենք, թե ամբողջ մթնոլորտը համատարած մաքուր թթվածին ե, վորի ատոմները

Համակված են ուրիշ նյութերի ատոմներին միանալու
այնքան սարսափելի ուժով ու անզուսպ ձգտումով:

Այն ժամանակ յերկրագումը բռնված կլիներ մի
համատարած հրղեհով:

Մաքուր, աղոտով չնոսրացած թթվածինը կլա-
փեր յերկրի յերեսին յեղած բոլոր անտառները, ամ-
բողջ քարածուխը, փայտե բոլոր կառուցվածքները:
Այդ դեռ քիչ ե. դրեղնոուտներն ու շոգեքարշերը
հրթիռների պես կվառվեյին թթվածնի մեջ:

Այդքա՞ն մեծ ե թթվածնի ձգտումը նույնիսկ դե-
պի մետաղները:

Իսկ ի՞նչ կլիներ մարդուս հետ: Ծանր հիվանդնե-
րը, չնչահեղձ յեղողները մաքուր թթվածին են շրն-
չում, և թեթևանում ե նրանց դրությունը: Հալանո-
րեն մենք նո՞ւյնպես ավելի հեշտ կլնչեյինք մաքուր
թթվածնային մթնոլորտում: Հնարավոր ե, վոր այդ-
պես ել լինի: Բայց վոչ յերկար ժամանակով: Ազո-
տով չնոսրացած թթվածինը չափաղանց արագ կայրեր
մեր որդանիզմի նյութերը:

Հիշեցեք թե ինչ ե լինում մարմանդ այրվող մար-
իս, յերբ դցում են թթվածնի մեջ: Ի՞նչ հիանալի յե-
րոցավառվում նա ամենապայծառ բոցով: Յեկ ի՞նչ-
պես արագ ե այրվում:

Այդպես ել մարդու հետ ե լինում: Յերբ կյանքը
հաղիվ ե մխում, յերբ հիվանդը չնչահեղձ ե լինում,
յերբ թուլացած չնչառությամբ նա այլևս ուժ չունի
սովորական ողից բավարար քանակությամբ թթվա-
ծին ձեռք բերելու իր արյան համար, այն ժամանակ
յերեվան ե դալիս ամենամաքուր թթվածնով լցված
ոեղինե բարձր, և կյանքի մարմող կրակը նորից ե բո-
ցավառվում:

Բայց և այնպես առողջ որդանիզմի համար ամե-
նից լավը թթվածնի այն պարունակությունն ե, վար
իս մթնոլորտում: Հենց ողի այդ բաղադրությանն ե
հարմարվել մարդու և կենդանիների արյունը:

Առանց թթվածնի չկա՛ կյանք, չկա՛ այրում:

Ի՞նչով եր չիՄՆԱՎՈՐՈՒՄ ՏՈՄՍՈՆ իր
ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յեկ ահա այդ կենսատու ելիքսիրի մի չորս-հինգ
հարյուր տարվա ընթացքում ամբողջովին ծախսվելու
վտանգով եր սպառնում մարդկությանը մեծ Փիզի-
կոսը:

Յերկրագնդի վրա առլրում և անընդհատ չնշում
են մոտ 2 000 000 000 (յերկու միլիարդ) մարդ և ան-
համար քանակությամբ կենդանիներ: Ի հարկե, նրանք
քիչ քանակությամբ թթվածին չեն կլանում մթնոլոր-
տից: Թթվածինը թոքերից գուրս և գալիս՝ այնտեղ
մարմնի ածխածնի և ջրածնի հետ միանալուց հետո, —
դուրս և գալիս վոչ թե մաքուր վիճակում, այլ ածխա-
թթու գաղի և ջրի կազմում:

Այնուամենայնիվ այդ ող ասվածդ ելի մի ամբողջ
ովկիանոս և կազմում մեր գլխավերել... Նույնիսկ
հինգ հարյուր տարում վոչ մարդիկ, վոչ կենդանիները
չեն կարող ծախսել մթնոլորտում յեղած ամբողջ թթվ-
ածինը: Այնուամենայնիվ, — առում ե Տոմսոնը, —
թթվածնի մսխմելու, հատնելու մեջ մարդկությանն
սպառնում և գլխավորապես քարածիսի անդադար ա-
ճաղ այրումը: Այստեղ նույնպես թթվածինը վոչ մի
տեղ չի քանա ոդից, այլ կիերագառնա մթնոլորտ՝
սծխաթթու գաղի և ջրի կազմում:

Իսկ մի՞թե չի կարելի քարածումի վառելը դադա-
րեցնել: Արդելել միանդամ ընդմիշտ:

Բայց այդ կնշանակի վերագառնալ վայրենի վի-
ճակին: Կկանդնեն բոլոր մեքենաները, բոլոր շարժիչ-
ները, բոլոր գործարաններն ու Փարբիկաները: Յեկ
մարդկությունը մերկացած, ցրտահար, քաղցած-
գերջ ի վերջու կդառնա այն, ինչ վոր մի ժամանակ յե-
ղել ե նրա կապկանման և քարանձավարնակ նախա-
հայրը:

Այդպես, ուրեմն, կործանումն անխուսափելի յե-
քարածուխ վառելով՝ մարդն անխուսափելիորեն
«կվառի», «կփչացնի» ողում յեղած ամբողջ թթվա-

ծինը, կիբոխարկի այն ածխաթթվի ու ջրի և շնչահեղձ կլինի: Յեվ դրա վերջնական ժամկետը հինգ հարյուր տարի յէ, հայտարարեց Տոմսոնը:

Երան նախագուշակությունը տարածվեց վողջ աշխարհով մեկ: Այդ մասին հոգ տարան առաջին հերթին բուրժուական լրագրավաճառներն ու լրագրողները, վորոնք միշտ տենչում եյին շամեցուցիչ նորություններ, մանավանդ յերբ խոսքը վերաբերում է բաղմաթիվ մարդկային զոհերով աղետներին ու դժբախտություններին:

Իսկ սրանից ավելի ել ի՞նչ կարող ե լինել: Թրթվածնի պակասությունից շնչահեղձ յեղող վողջ մարդկություն: Յեվ լրագրավաճառները, Փելյեսոնիստները յեռ ու զեռի մեջ եյին, պատկերելով դալիք համաշխարհային աղետի սարսափները:

Տոմսոնի նախագուշակությունից սուանձնապես զոհ եյին ամեն տեսակի տերտերները, հոգեորականները, սկսած Անդրեյյի նրանց դիմավորից—Քենտերբրիի արքեպիսկոպոսից: Իսկ նրա՞նց ինչ: Նրանց ի՞նչ ոգուտ, վոր մարդկությունը հինգ հարյուր տարի հետո շնչահեղձ ե լինելու:

Բայց և այնպես նրանք վոչ ողակաս խանդով, քան լրագրավաճառները, յեկեղեցական ամբոխներից սկսեցին իրենց «Հոտի» մեջ տարածել գիտնականի ահավոր նախագուշակությունը: Աշխարհի պատմության մեջ յեկեղեցին առաջին անգամ եր, վոր զոհ եր մնում գիտությունից...

— Լոռում եք,— ասում եյին քարոզիչները,—ինքը դիտությունն և նախատեսում աշխարհի մոտալուտ վախճանը: Մեծ ֆիզիկոսը հաստատում է սուրբ գրքի մարդարեսությունը: Ապա ուրեմն ել ինչի՞ համար ե վողջ այս յերկրային ունայնությունը... Ել ինչի՞ համար են հասարակության վերակազմության հոգաերը, աղստամբությունները, հեղափոխությունները: Ել ինչո՞ւ համար ե հարուստների և իշխանություն ունեցողների դեմ մղվող աղայքարը, քանի վոր շուտով և

աղքատներին, և՛ հարուստներին սպասում ե անխուսափելի և բոլորի համար հալասար կործանումը: Զե՞ վոր մեր ծոռների թոռներին արդեն վիճակված ե ընդմիջտ վերջ տալ մարդկության պատմությանը և ընդունել ընդհանուր ու տանջակի մահը: Ուրեմն ապաշխարհեցեք ձեր մեղքերը և խաղաղվեցեք:

Տոմսոնի գուշակությունից յեկեղեցականները շտապեցին այդպիսի յեղբակացություններ հանել: Իսկ գիտնականները: Նրանք լոռմ եյին: Բոլորին ել շատ եր ձնշում մեծ Փիզիկոսի անսխալական հեղինակությունը: Բացի դրանից, նրա հաշվարկումները բոլորին ել ճիշտ եյին թվում:

ԲՈՒԽԱԲԱՆԸ ՖԻԶԻԿՈՍԻ ԴԵՄ

Հենց այդ ժամանակ հեռավոր Ռուսաստանից լրացեց հանդիստ ու վստահ մի ձայն.

— Տոմսոնը սխալվել է: Մարդկությանը վոչ մի շնչահեղձություն չի սպառնում:

Այդ խոսքերը, ինչպես և Տոմսոնի խոսքերը, արտասանվեցին դասախոսական ամբիոնից ի լուր ամենքի: Դա մարտահրավեր եր:

Բայց ո՞վ եր այդ մարտահրավեր չպրտողը: Այդով եր, վոր համարձակվում եր սխալի մեջ բռնելիքն՝ Տոմսոնին: Մի գուցե նույնքան հոչակված Փիզիկոս: Վոչ: Այդ Մոսկվայի համարարանի բռնապանության պղոփեսոր կլիմենտ Արկադյեվիչ Տիմիրյազեվն եր:

Դեռ այդ ժամանակ Տիմիրյազեվը գիտական խոչըր աշխատություններ ուներ, նրա անունը հարդառքով եր արտասանվում նաև արտասահմանում: Այնուամենայնիվ, դուրս դալ ճշգրիտ գիտությունների այնպիսի հեղինակության դեմ, վորպիսին Տոմսոնն եր, չափազանց համարձակ և հանդուգն քայլ յերևաց:

Մոսկվայի բռնապանի յելույթից հետո մի քանի ամիս անցավ և անդլիական գիտական ժուռնալներից մկում լույս տեսավ հենց իրեն՝ Տոմսոնի հողվածը, վորտեղ նա վճռականացես հայտարարում եր իր սխա-

և մասին և հետ եր վերցնում իր զարհութելի հախառուշակությունները:

Բայց ինչո՞ւմն եր իսկապես Տոմսոնի սխալը: Յեվ ի՞նչ ուժ կարող ե կանխել մարդկության խեղղամահ լինելը:

Տոմսոնի սխալն այն եր, վոր նա մարդկության վերահաս վտանգը չեր տեսել այնտեղ, վորանդ նա իրոք թագնված ե: Հարցը թթվածինը չի: Պարզվում ե, վոր հինգ հարյուր տարի հետո մարդիկ այդ կենացարդ գաղի պակասելը դեռ չնկատած՝ արդեն չնշտհեղձություն կզբան մի ուրիշ գաղի— ածխաթթվի առատությունից:

Սակայն այդ հոմաշխարհային աղետից մարդուն կիրկի կանաչ տերեւը: Այո: Կեչու, լորենու, հաճարենու, կամ կաղամախու սովորական կանաչ տերեները: Վերջապես ամենասովորական խոտը, վորը մենք տրորելով անցնում ենք, բողիկ ճակնդեղի փրչերը և այլն:

Բայց մի՞թե Տոմսոնը չդիտերի տերեւներն ընդունակ են ոդը մաքրել ածխաթթվից և նրան թթվածին վերադարձնել: Վոչ, նա այդ շատ լավ դիտեր: Այնուամենայնիվ նա լրիվ չեր հաշվի առել կանաչ ովկիանոսի վորդ հզորությունը:

Տիմիրյագեղեվին— այդ բուսաբանին եր հենց պատիվ ընկել յերեան հանելու մեծ Փիզիկոսի հաշիվների մեջ արտահայտված բուսական աշխարհի թերագնահատությունը:

— Բայց և այնպես,— վերապահություն եր անում Տիմիրյագեվին իր դասախոսության մեջ,— կանաչ տերեւը մեզ «չի դավաճախ» միայն այն դեպքում, յեթե մարդկությունը խելքի դա, յեթե մարդկությունն անխնա կերպով չփոքնչացնե բույսերը, ինչպես դաժան թշնամի, այլ ամեն կերպ աջակցի բույսերին՝ նրանց փրկարար մեծ աշխատանքում: Բայց նույնիսկ այդ դեպքում ել,— ասում եր Տիմիրյագեվը,— կարող ե դալ այնպիսի ժամանակ, յերբ միայն բույսերն ան-

զոր կլինեն պայքարելու վերահաս ազետի դեմ, և ինքը մարդը ստիպված պիտի լինի սովորելու զնուր բույսի մոտ, վորպեսդի կանաչ տերեկց փոխ առնի նրա հարմարանքներն ու յեղանակները և փորձի առաջ անցնելու նրանից:

Այդպես եր ասում Տիմիրյագեվը:

Իսկ վո՞րտեղից ե մթնոլորտում առաջանալու այդ չարաբաստիկ և մարդկությանը չնչահեղձությամբ սպառնացող գաղի ավելցուկը: Յեվ սովորական կանաչ տերեւն ինչպե՞ս կարող ե կանխել վերահաս աղետը:

Առաջին հարցին մենք արդեն կարող ենք պատասխանել. ածխաթթուն անընդհատ կուտակվում և մարդկանց և կենդանիների չնչառությունից և գանազան վառելանյութերի այրվելուց: Այդ գաղը բարդ է. նա կազմվում և մթնոլորտի թթվածնից և կենդանի ու չնչող որդանիզմների ածխածնից, կամ թե այրվող գառելանյութի ածխածնից: Վառելանյութի գլխավոր չտեմարանները գետնի տակն են: Դա քարածուխն է: Նրա պաշարները վիթխարի յեն: Յեթե քարածուխը շարունակ վառենք ու վառենք, ապա վերջի վերջո մթնոլորտն այնպես կիշանա, կաղտումի ածխաթթվից, վոր մեր հետնորդերն արդեն չեն ել կարողանա չնչել:

Ինչ վերաբերում ե յերկրորդ հարցին—կանաչ տերեւին— մենք կակսենք շատ հեռվից. նախ պատմենք, թե ի՞նչ տեղի ունեցավ 1772 թվի ոգոստոսի 18-ին: Ի դեպ, պետք ե ասել, վոր կլիմենտ Արկադյեվիչ Տիմիրյագեվը խորհուրդ եր տալիս հիշել այդ թվականը:

ՄՈՒԿԸ ՅԵՎ ԱՆԱՆՈՒԽԻ ՓՈՒՆՁԸ

Այդ որը մեծ քիմիկոս Պրիստլին (կամ Պրիստլյը) մի դարմանալի փորձ կատարեց, վորը խիստ զարմացրեց իր ժամանակակիցներին: Զրի տակ չուր տված բանկայի մեջ նա մի դրեց: Մուկը շատով սատ-

կեց: Պարզ ե, վոր ապակէ բանկայի մեջ ողը փչացել եր և անպետք եր դարձել չնչելու համար:

Այն ժամանակ Պրիստլին— ելի նախադպուշական միջոցներ ձեռք առներով, վորպեսզի ներս չժռղնի դրսի ողը, — ջրի տակ չուռ տված բանկայի մեջ դրեց մի փոքր փունջ սովորական անանուն և մի քանի որ թողեց այնտեղ: Յեվ ի՞նչ... Այժմ ապակէ անոթի մեջ բաց թողած մուկն արուեն կարողանում եր չնչել—ողը մաքրվել ե:

Արդեն ոլարդ եր, վոր ողը կարող եր մաքրել, անմնաս դարձնել միայն անանուխի փունջը: Հենց այդպիսի բացատրություն ել ավեց Պրիստլին իր փորձին, թեև նա մինչև վերջն ել չկարողացավ հասկանալ. թե այդ դեպքում ինչ ե տեղի ունենում:

Ինչպես տեսնում եք՝ այդ փորձը շատ հասարակ եր: Այժմ ել, ով ասես, հեշտությամբ կարող ե կրկնելայդ փորձը: Այնուամենայնիվնա. շշմեցրեց Պրիստլին ժամանակակիցներին: Պրիստլիի փորձով արդեն պարզված ու ապացուցված եր այն նոր կապը, վոր կարուսական և կենդանական աշխարհների միջև, բանից պարզվում ե, վոր բույսերը վոչ միայն վորպես մուռնդ են ծառայում կենդանիներին. և մարդկանց, այլ և մաքրում են ողը, նորից պիտանի յեն դարձնում այն չնչելու համար:

Այդ մի անմահ հայտնագործում եր գիտության մեջ՝ բուսական աշխարհի և կենդանական աշխարհի միջև յեղած նյութերի շրջանառության վերաբերյալ:

Յերբ մարդը կամ կենդանին չնչում են, ողի թը վաճախնը կլանվում ե արյան մեջ: Որդանիզմի մեջ նա ժիանում և անհամար բջիջների նյութի հետ, տաքություն և արտադրում, իսկ հետո արտաշնչվում ե, բայց արդեն վոչ թե ապատ վիճակում, այլ տծխտթըթվի և ջրի կաղմում:

Նույն բանն ե տեղի ունենում նաև այրման ժամանակ: Այդպիսով ողը հետզհետե հաղենում ե ածխաթըթվով:

Յեվ ահա Պրիստլիի անանուխի վնջի փորձից յերեվաց, վոր բույսն ածխաթմուն քալքայում ե, ճեղքում և թթվածինն ապատ և արձակում: Միանգամից յերկու նապատակի և սպանված—ողից հետացգեց հեղձուցիչ ածխաթմուն և ողը հետ ստացավ իր թթվածինը:

Թվում եր, թե զրանից ավելի ել վոչինչ պետք չեր Պրիստլին: Հին ժամանակներում գիտնականներից բացառիկ մարդիկ կարող եյին պարծենալ, վոր իրենց կենդանության օրոք, իրենց ձեռք բերածն ընդունվեր և մուծվեց զիտության գանձարանը:

Սակայն, յերբ շուտով Պրիստլին ցանկացավ իր բարեկամ գիտնականների առաջ բացատրել իր նշանակոր փորձը, նա լիովին ձախողության մատնվեց: Ինչքան ել վոր չարչարվեց, գժբախտ Պրիստլին չհաջողվեց փորձը կրկնել:

Յեվ ահա մեծ գիտնականը, վորը հայտնադործել ել ողի նորոգվելու գաղտնիքը, անտառների և դաշտերի կենդանարար գործունեյության գաղտնիքը, տանջալից տարակուսան գով կանդ առավ իր կրկնակի փորձերի ձախողման առաջ: Ճիշտ ե, հետազում նա հասավ ճշմարիտ կուհման:

Սակայն գիտնականների հետագա սերունդները միայն մինչև վերջն ուսումնասիրեցին այդ գաղտնիքը — և անանուխի վնջի, և Պրիստլիի կրկնագործերի անհաջողության գաղտնիքը:

Ամբողջ գաղտնիքն այն եր, վոր Պրիստլիի առաջին հաջող փորձի ժամանակ անանուխի փունջը լավ եր լուսավորված յեղել արևի ճառագայթներով, իսկ կրկնակի փորձերի ժամանակ՝ վատ:

Հետևապես կանաչ տերեկի հրաշալի գործունեյության գաղտնիքը արևի մեջ ե, նրա ճառագայթների մեջ: Մեն-մենակ կանաչ տերեկը մթության մեջ անդոր և ածխաթմուն քալքայել և նրանից թթվածինն ապատել:

Իսկ ի՞նչն ե զրա պատճառը: Յեվ ի՞նչ ե կատար-

վում կանաչ տերեփ մեջ, յեղբ արկի ճառագալթներն ընկ-
նում են նրա վրա:

Այդ բոլոր հարցերի ճշգրիտ և աներկբա լուծումն իր անունն անմահացրեց ոռւս բուսաբան Կլիմենտ Արկադյեվիչ Տիմիրյանի վրա: Նրա զարմանալի փորձերը, նրա նըբագույն և գերարաւիտ գործիքները կարծես թե հնարավորություն ելին տալիս յուրաքանչյուրին, ով ցանկանում է, իր սեփական աշքերով դիտելու արեի ճառագայթների թագում աշխատանքը կանաչ տերեկի փափուկ մարմնում:



Նե. 2. կ. Ա. Տիգրանյանէվը Բալթիկ ծովի ափին 1895 թվական

ՀԱԳԱԴՈՅԵՑԻ ՆԻՀԱՐ ՄԱՐԴԵ

1903 թվի ապրիլի 17-ին Տիմիրյազեվը, վուր ցարական կառավարության կողմից հեռացվել եր Մոսկվայի համալսարանից իր հեղափոխական հայոցքների

Ա այն բանի համար, վոր նրան ուստանաղները չափազանց շատ ելին սիրում, Անդլիայում ամենաբարձր պատվի արժանացավ, վորակին վարեկ ժամանակի բաժին եր ընկել վոչ բրիտանական գիւղականներին:

Նրան հրավիրեցին Լոնդոն՝ կարգալու հերթա-
կան, այսպես կոչված, կրունյան դասախոսությունը,
նվիրված տասնյոթերորդ դարի գիտնական կրունք
հիշատակին:

Այդպիսի դասախոսություն կարդալու համար հրավիրվում ելին միայն դիտությաս մեջ վորեե նոր և նշանավոր հայտնագործում արագ համաշխարհային ամենամեծ դիտնականները:

Ասենք՝ ունկնդիրներն ել հասարակ ուսանողներ չե-
յին, նրանցից յուրաքանչյուրը մետահռչակ անուն ու-
ներ գիտության մեջ։ Ով ել վոր լրներ, այնուամենայ-
նիվ մի քիչ յերկյուղալի յեր դասախոսություն կար-
գալ այդպիսի ունկնդիրների առաջ։ Բայց և այնպես
Մոսկովյան բուսաբանը վոչ միայն չչփոթվեց, այլ և
նույնիսկ իր յելույթն սկսեց մի թեթև և սրամիտ կա-
տակով, անդլիացիներին հիշեցնելով իրենց հայրենա-
կից Սվիֆտի մեծ աշխատության մասին։

— Յերբ Գուլիվերն առաջին անգամ դիտեց Լազու-
գոյի ակաղեմիան, — սկսեց Տիմիրյաղեվը, — ամենից
առաջ նրա աչքին ընկալ լղարիկ տեսքով մի մարդ,
վորը նստել և աչքը հառել եր ապակե անոթի մեջ
դրված վարունգին։ Գուլիվերի հարցին, տարրորինակ
մարդը, վորպես պատասխան, բացատրեց, վոր ահա
արդեն ութ տարի յե, ինչ նա ընկղմված և այդ առար-
կայի զննողության մեջ, այն հուսով, վոր կլուծի արե-
գակի ճառագայթները վորսալու և նրանց հետադա-
դործադրման ինդիբը։ Նախնական ծանոթության հա-
մար, — շարունակեց Տիմիրյաղեվը, — յես պետք և
խոստովանեմ, վոր ձեր առաջ հենց այդպիսի մի տա-
րորինակ մարդ և կանգնած։ Յերեսունհինգ տարուց
ավելի յես աչքերս հառել եմ, յեթե վոչ ապակե անո-
թի, մեջ դրված կանաչ վարունգին, ապա ինչ վոր

Կ. Ա. Տիմիրյանկեվ—

Դրան միանդամայն համարժեք մի բանի՝ ապակե խո-
զովակի մեջ դրված կանաչ տերևի, գլուխո տրաքաց-
նելով արեկի ճառագայթները շահեկան կերպով մթե-
րելու հարցը լուծելու վրա:

ԿԱՆԱՉ ՏԵՐԵՎԻ ԳԱՂՏՆԻՔԸ ✎

Տիմիրյագեվի հետազոտությունները, վորոնց
արդյունքը յեղավ նրա կրունյան դասախոսությունը,
մինչև խորքերը բաց արին արեգակի և յերկրի վրա
գոյություն ունեցող կյանքի միջև յեղած կապը:

Պարզվեց, վոր արեկի և կյանքի միջնորդը կանաչ
տերևն և — քլորսֆիլի հատիկները, վորոնք ցրված
են նրա տերևամսի մեջ:

Ածխաթթուն մթնոլորտից ծծվում է տերեկի ներսը
և այնտեղ, նրա կանաչ նյութի — քլորսֆիլի ներսում
տրոհվում է ածխածնի և թթվածնի: Այդ աշխա-
տանքը — ածխաթթվի տրոհվելը թթվածնի և ածխած-
նի — կատարում են արեկի միայն այն ճառագայթ-
ները, վորոնք կլանվում են քլորսֆիլի կողմից, և
վոչ թե նրանք, վորոնք անցնում են տերեկի միջով,
կամ արտացոլվում են մակերեսից:

Արեգակի ճառագայթը խարխլում, բաժանում և
ածխածնի և թթվածնի անտեսանելի մասնիկները, պո-
կում են նրանց իրարից:

Յերբ նրանք կցվել եյին և դարձել բարդ գազ —
ածխաթթու (իսկ այդ տեղի յե ունենում կամ կենդա-
նի որդանիզմի մեջ, կամ այրվող վառելանյութի
մեջ), — նրանց մասնիկներն ամուր բախվել եյին
իրար: Ինչպես յերկաթի կտորով կայծաքարին խփե-
լիս, այնպես ել թթվածնի և ածխածնի անհամար
մասնիկներն իրար բախվելուց առաջացել եր ջերմու-
թյուն, բայց: Հենց այդ պատճառով ել արտաշնչած
ողը տաք ե: Իսկ յերբ ածուխը, այդ գրեթե զուտ
ածխածնի, «այրվում ե», այսինքն միանում ե թրթ-
վածնի հետ, մենք կը ենք տեսնում և անտանելի
տաքություն զգում: Վորպեսպի ամուր կցվեն և ած-

խաթթվի մի մասնիկը կազմեն թթվածնի և ածխածնի
ստոմները, նրանք պետք ե դեն զցեն իրենց «անձնու-
կան» ուժային լիցքի մի մասը, տրածությանը հանձ-
նեն իրենց եներգիայի մի մասը՝ ջերմության ձեռվ:

Թթվածնի և ածխածնի ստոմները նորից աղատե-
լու, իրարից պոկելու համար պետք ե վերադարձնել
նրանց այն ուժային լարվածությունը, վորով նրանք
լցված եյին առաջ և վորից նրանք բեռնաթափվել եյին
ջերմությամբ, յերբ միացել ու ածխաթթվի մասնիկ
եյին կազմել:

Զերմությունը փախվում է աշխատանքի, և աշ-
խատանքը փոխվում է ջերմության: Այդ բանը, վոր
հայտնագործել են Ռոբերտ Մայերն ու Հելմուցը,
որենք և ամբողջ աշխարհի համար: Այդ որենքին մենք
այնպես ենք ընտելանում մանկությունից, աշակեր-
տական նստարանից, վոր նույնիսկ զարմանում ենք՝
«իսկ ի՞նչ կար այստեղ առանձնապես հայտնադործե-
լու... Այդ այնքան պարզ բան ե. մուրճով սկսիր
խիել մեխի գլխին — մեխը կտաքանա: Աշխատանքը
փոխվեց տաքության: Արդեն ամեն մեկին ել պարզ ե,
իհարկե, վոր շոգեքարշը շարժվում ե շոգու ուժով,
խի շոգին արտադրվում ե քարածիի տաքությամբ: Հետեւապես այստեղ տաքությունը փոխվում է աշխա-
տանքի»:

Այո, այդ որենքը պարզ ե: Ամեն աշխատանքում
ել սովորել են կիրառել այդ որենքը, սակայն վոչ
կանաչ տերեկի աշխատանքում, կամ, ավելի ճիշտ, այն
աշխատանքում, վոր արեգակի ճառագայթները կտ-
տարում են կանաչ տերեկի մեջ:

Տիմիրյագեվը հենց նրանով ե մեծ, վոր ամե-
նաստույզ ու անվիճելի փորձերով ապացուցեց, թե
այստեղ նույնպես, կանաչ տերեկի մեջ, արեկի լուսային
եներգիան վոչ մի տեղ չի չքանում, այլ փոխվում է
աշխատանքի, արեկի ճառագայթը տրոհում ե ածխա-
թթուն ածխածնի և թթվածնի:

Քլորսֆիլի կլանած՝ արեկի ճառագայթների ուժը
ծախսվում է կարծես ածխածնի և թթվածնի մասնիկ-

Ներին լիցք տալու վրա: Յեկ այն ժամանակ, հետ
ստանալով իրենց նախկին «անձնական» լիցքերը,
նրանք կտրվում են իրարից և հետ են հրում իրար:

Արևի ռւժով նորից լիցք ստացած և ազատագրված
թթվածինը թռչում է ողի մեջ: Իսկ ո՞ւր և կորչում
ածխածինը:

ՄԵՆՔ ՍՆՎՈՒՄ ԵՆՔ ՈԴՈՎ

Հենց այստեղ ե, վոր սկսվում է բոլորովին հե-
քիաթային պատմություն: Դուրս ե գալիս, վոր ազա-
տագրված ածխածնի մասնիկները, արեգակի հաշվին
հետ ստանալով իրենց «անձնական» ռւժային լիցքը,
մնում են կանաչ տերեկի փափուկ մսի մեջ: Այստեղ
ածխածնի մասնիկներին միանում է ջուրը, իսկ չե՞
վոր դրանից ավել վոչինչ հարկավոր չի, վորպեսզի
նախ առաջանա շաքար, ապա նրանից ել՝ խսկական սո-
լա: Այդ, հենց այն ոսլան, վորից կիսել են յեփում,
հենց այն, վորից համարյա ամբողջովին կազմված ե
կարտոֆիլը:

Այդ ոսլան կոչտակտորների ձևով կարելի յետես-
նել միկրոսկոպով՝ կանաչ տերեկի փափկամսի մեջ:
Այդ կոչտակտորները յողով կապույտ են ներկվում,
վորպիսի յերեսույթը հատուկ է յուրաքանչյուր ոսլա-
յի:

Հետագայում բույսը ոսլան նորից վեր ե ածում
շաքարի:

— Բայց ինչո՞ւ տերեները քաղցր չեն, — կարող
ե այսպիսի հարց ծագել:

Պարզվում ե, վոր տերեները միայն «Փարբիկան»
են, վերամշակման վայրը: Յեկ պիտի ասել, վոր այդ
«Փարբիկան» որինակելի յե, նրա արտադրանքն ամե-
նափառ պառկած չի մնում, այլ անմիջապես հասցվում է
«սպառողին»: Հենց վոր չուժվող ոսլայի մասնիկները
վեր են ածվում լուծվող շաքարի, այդ շաքարը բույ-
սերի հյութով անմիջապես քշվում — տարվում է
տերեկից: Չե՞ վոր նա, այդ շաքարը, վորպես սննդա-

նյութ հարկավոր ե ամբողջ բույսին՝ աճելու համար,
պատրդները հասունացնելու համար: Բայց յերբեմն
բացառություններ են լինում:

Մի անգամ կլիմենտ Արկադյեվիչ Տիմիրյազեվովը
հանգստանում եր կլինի մոտ, Դեմյանովոյում: Հան-
կարծ մեծ բուսաբանին բերում են լորենու մի քանի
տերմներ, վորոնց վրա ինչ վոր տարութիւնակ սպիտակ
խալեր կային:

— Կլիմենտ Արկադյեվիչ, ի՞նչ բան ե այս, —
հարցըին նրան, — ո՞ս վորեւ հիվանդություն չի՞:
Կլիմենտ Արկադյեվիչը ժամաց:

— Վո՞չ, այդ շաքար ե, — պատասխանեց նա և
բացատրեց, վոր յերբեմն ուժեղ շողերին, յերբ տերե-
ները խոնավություն շատ են դոլորշիացնում, շաքարը
բյուրեղանում է ուղղակի տերեսամուի մեջ:

Սակայն ոսլայով և շաքարով չի սպասվում կա-
նաչ տերեների զարմանալի աշխատանքը: Ոսլային
միանում են ազոտի և ծծմբի մասնիկներ, վորոնք
ձեռք են բերում արմատները հողից, և այդ շատ
բարդ վերափոխության արդյունքը լինում է սպիտա-
կուցը:

Մյուս սննդանյութերի նման, սպիտակուցը տե-
րեվից նույնպես տեղափոխվում է բույսերի մյուս
մասները, հացարույսերի մեջ՝ գլխավորապես դեպի
հատիկները: Իսկ հատիկը — ոսլայի և սպիտակուցի
այդ շահմարանը — մեր հացն ե:

Այդպիսով բույսը կերակրվում է ողով և նրանով
կերակրում ե նաև մեզ: Ահա քեզ և սարսափելի ած-
խաթթուն, վորը ժամանակին սպասնում եր խեղել
աշխարհիս յերեսին յեղած բոլոր չնչավորներին: Յե-
թե նա դոյլաթյուն չունենար ողում, մարդկությունը
նույնիսկ մեկ տարի ել չեր կարող ապրել — սովոր
կվոչնչացներ և՛ կենդանիներին, և՛ մարդկանց, և՛
բույսերին, վորովհետև այն ժամանակ կանաչ տերեկը
վորպեղից պետք ե ածխածին վերցներ իր սննդա-
փարբիկայի համար:

ԱՐԵՎԻ «ՊԱՀԱԾՈՆԵՐԸ»

Ողը մաքրելով և մարդու ու ամբողջ կենդանական աշխարհի համար սնունդ պատրաստելով՝ ամենեին ելչի սահմանափակվում կանաչ տերեւի և արեւի ճառագայթների միատեղ աշխատանքը։ Ուրան փայտանում է, վեր և ածվում փայտանյութի։ Իսկ փայտանյութ են վոչ միայն փայտաշեն տներն ու խրճիթները, այլ և ցախը, վառելիքը։ Բավական և ողի թթվածինը վրա հասնի փայտի ածխածնին — իսկույն կրոնկվի ազատագրված եներգիայի բոցը։ Բայց չե՞ վոր թթվածնի և ածխածնի ատոմներն այդ եներգիան մի ժամանակ ստացել եյին արեւի ճառագայթներից։ Այդ ճառագայթները մի ժամանակ կլանվել եյին տերեւի քլորոֆիլի կողմից և գործադրվել եյին ածխաթթվի քայլայման վրա, նրանից ածխածնն ու թթվածինը բաժանելու վրա, նրանց լիցք տալու վրա։ Իսկ ազատված ածխածնը, ինչպես մենք դիտենք, կուտակվելով ծառի մեջ, առաջացրել և նրա մարմնի մեծ մասը։

Մի՞թե դրանից հետո չի կարելի ասել, վոր վառարանում «այրվում են» արեւի ճառագայթերը, նրանց «պահածոները»։

Այդ անվանն ե'լ ավելի մեծ չափով արժանի յե քարածուխը — հնագույն ժամանակների ձարիստերի (պտերի) հսկա թավուտները, վոր թաղված են միլիոնավոր տոնն հողի տակ — այդ մամլած ու դրեթե զուտ ածխածնը։

Դրեղնոուտների, շողենավերի, շողեքարշերի և Փարբիկաների վառարաններում այդ «պահածոները», այդ սե, «մամլած արեգակը», նորից կենդանի կրակ և լույս և դառնում։

ՏԻՄԻՐՅԱԶԵՎԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Դրա հետ միասին անխուսափելիորեն ողից ծախում, պակասում և թթվածինը, մի բան, վորն այնքան վախեցրեց Տոմսոնին, և արտագրվում է ածխաթթու,

վորի մեջ Տիմիրյազեվը նախատեսնում եր գալիք իսկական վտանգը։

Մթնոլորտի մեջ ամեն մի տասը հազար լիտր ողին ընկնում է միայն յերեք լիտր ածխաթթու։ Յեթե այդ նշին քանակությունը կրկնապատկվում է վորեւ բնակելի սենյակում, բժիշկը պարտավոր է խոտանել (անպետք համարել) այդպիսի ողը։ Յերբ ածխաթթվի պարունակությունն ողի մեջ հասնում է ողի ամբողջ ծավալի մեկ հարյուրերորդականին, ապա այդպիսի ողը չնչելուց մարդ ծանր է զգում իրեն, նեղվում է։ Յերբ այդ տոկոսը բարձրանում է տասը հարյուրերորդականի, վրա յե հասնում մահը, ողը թունավորում — մահացու յե դառնում։

Մեկ մարդը մեկ տարվա ընթացքում մեկ տասերորդական տոնն ածուխ և արտաշնչում ածխաթթվով։ Իսկ ինչքա՞ն ածխաթթու յեն դուրս հանում բոլոր գործարանային և շողեքարշային ծխնելույզները, բոլոր բենզինի շարժիչները, բոլոր տնային վառարանները։

Բարեբախտաբար, վորքան ողի մեջ աճում է ածխաթթվի պարունակությունը, այնքան արագ և նրան քայլայտ կանաչ տերեւը։ Այդ քայլայումն ամենից լավ տեղի կունենա այն դեպքում, յերբ ողի մեջ յերեք հարյուր անգամ ալիքի շատ ածխաթթու լինի, քան կա սովորական ողի մեջ։

Առարկելով Տոմսոնին, Տիմիրյազեվը բերեց այսպիսի թվեր։

1 հեկտար անտառը կարող է պահել 30 մարդու չնչառությունը.

1 հեկտար յեգիալտացորենը կարող է պահել 150 մարդու չնչառությունը.

1 հեկտար շաքարեղեղը կարող է պահել 340 մարդու չնչառությունը։

Այն յերկար տարիները, վորոնք ծախսվել եյին «ապակե խողովակում յեղած կանաչ տերեւը» դիտելու վրա, անողուտ չեյին անցել։ Կլիմենտ Արկադյեվիչը

զիտեր իր բույսերի ուժը։ Նա հաշվեց այդ կանաչ ովկելիանոսի հզորությունը, վորը մարդագետինների տեսք քով փուլում և մեր վոտքերի տակ և անտառների ազմկոտ վարագույրով փակվում և մեր պլիավերեավում։

Յեվ այդ խորն իմացությունը Տիմիրյաղեվին հնարավորություն տվեց ասելու. «Վո՞չ, մեծ Փիղիկոս սխալվում ե։ Մարդկության համար յերեք յեւք կա. կամ բույսը ինքը մեզ կփրկի, կամ մենք ոգնության կդնանք նրան և ընդհանուր ուժերով կմեծածացնենք կյանքի շրջապառյալը յերկրի վրա, կամ թէ չե, վերջապես, այդ շրջապառյալը կհասնի մինչեւ գորոշ սահմանի, և ածխածնի մի մասը հարկավոր կլինի վերածել անշարժ վիճակի՝ մարդու համար ավելի ոգտակար ձևով. — բայց մահ շնչառպառությունից, — վո՞չ մի դեպքում»։

Տիմիրյաղեվին ինչի՞ մեջ եր տեսնում հնարավոր ողնությունը բույսին։ Նախ, իհարկե, խնամքով վերաբերմունքի մեջ դեսի յուրաքանչյուր կանաչ տերեւ, այնուհետեւ՝ անտառներ տնկելու, զարդացնելու մեջ, կանաչ մասսիվներ ստեղծելու մեջ, դարավոր արգելանտառներ ստեղծելու մեջ։

Բայց և այնպես Տիմիրյաղեվը քաջ գիտակցում եր, վոր յեթե արդյունաբերության կարիքների համար քարածուխ վառելու գործն առաջ գնա այն թափով, ինչ թափով այժմ ե գնում, ապա վերջիվերջո կանաչ տերեւը նույնպես անզոր կդտնվի չարիքի առաջն առնելու համար։

— Այն ժամանակ, — հայտարարեց Տիմիրյաղեվը, — թող արդեւք դրվի քարածուխ հանելու և վառելու գործի վրա։

— Իսկ մեր «մեխանիկական ստրուկնե՞րը», մեքենանե՞րը, շարժիչնե՞րը, ֆարբիկանե՞րն ու դործարաննե՞րը։ Իսկ ի՞նչ անենք նրանց հետ։ Ինչո՞վ «կերակրենք» նրանց։

— Հենց այն արևի ճառագայթներով, վորով «կե-

րակրվում են» նրանք այժմ։ Միայն վոչ թե «պահածծոների» ձեռվ, այլ «թարմ», գործոն ճառագայթնեծով։ Յեվ Տիմիրյաղեվը պարզաբանելով իր միտքը, մի դեպք պատմեց Ստեֆենսոնի — առաջին շողեքարը հնարողի — կյանքից։

Մեկ անգամ Ստեֆենսոնը նստած եր պատշգամբում իր բարեկամ, յերկրաբան Բուկլանդի հետ։

— Ասա ինձ, Բուկլանդ, հարցը յաց Ստեֆենսոնը, — ի՞նչն ե շարժման մեջ գնում այդ շողեքարը։

— Մեքենավարի ձեռքը, — պատասխանեց Բուկլանդը։

— Վո՞չ, — առարկեց Ստեֆենսոնը։

— Այն կրակը, վոր վառում են կաթսայի տակ։

— Նորից վո՞չ, — ասաց շողեքարը հնարողը, — նրան շարժում ե արեւը, վորը լույս ու շերմություն ե տվել այն հեռավոր դարաշրջանում, յերբ ապրում եին այն բույսերը, վորոնք հետագայում ածուխ դարձան, և այժմ մեքենավարն այդ ածուխը լցնում ե վառարանը։

Արևի «պահածոներից» — անմիջականորեն դեսլի արևի ճառագայթները — ահա այն ճանապարհը, վորով գնալու յե մարդկությունը, վորպեսզի խուսափի ածխածնից շնչահեղձ լինելու վտանգից։

Նմանվելով կանաչ տերեւին, արևի եներդիան վորոսալու այդ զարմանալի գործիքին, ապագայի Փիղը՝ կոսներն ու քիմիկոսները կհնարեն արև «վորսողներ»։ Կոսներն ու գաղտնաբառները կլինեն, քան արևելի քլորոֆիլորոնք ավելի ձեռնտու կլինեն, գան արևելի գլորոֆիլորոնք մարդկության կործանումը։ Յեվ պիտով կկանխվի մարդկության կործանումը։ Յեվ յերբեք, յերբեք չի վերջանա թթվածինը, և մարդիկ չեն խեղղվի ածխաթթվով։ Այդ բոլորը անտեղի յերկոյուղ ե, վոր հրահրում են նրանք, ում ձեռնտու յե այլ։

Տիմիրյաղեվը Տոմսոնի դեմ ունեցած իր ջախջախիչ յելութը վերջացրեց այնպիսի խոսքերով, վորոնով յերբեք չեր վերջացել ցարական սարսափելի ժա-

մանակներում համալսարանական պրոֆեսորի վոչ մի դասախոսություն։

«Մենք դատողություններ ենք անում մի քանի հարյուր տարի հետո մթնոլորտի հնարավոր ապահովության մասին, — ասաց Տիմիրյաղեվը։ — իսկ յեթե մենք տեղափոխվեյինք... մի քանի քայլ գենը՝ մեր մոսկովյան խուլ անկյուններից մեկը, ապա հավանաբար կհամոզվեյինք, վոր մեր կողքին մարդիկ ապրում են գրեթե այնպիսի մթնոլորտում, վորի՝ հեռավոր ապագայում յերկրի վրա յերեան գալու մասին մենք այժմ այնպիսի սարսափով ենք խոսում։ Մենք մտահագված ենք հնարավոր սովոր, կամ ավելի ձիշու, միույն ճերմակ հացի պակասությամբ, վորը կարող է աեղի ունենալ մի յերեսուն տարի հետո, բայց մի՞թե իսկական սովոր այժմ չի կանգնած մեր շեմքին։

... Հոգանք այն մասին, վորպեսզի այս լուսավոր և տաք դահլիճից մեզ համար տեսանելի լինի հեռախոր, խալար ու քաղցած գյուղը։ Վորպեսզի, յերբ հանդէն կրակները, և հանդարտվեն քաղաքի իրարանցումը, գիշերը, յերբ մենք յերես առ յերես մնանք մեր խղճի հետ, վորպեսզի այն ժամանակ ել այդ գիշերային խալարում դեպի մեզ մեկնվեն դեռևս վոչ այնքան առաջ հզոր, իսկ այժմ, վոչ իր մեղքով, անզոր ձեռքերը, վորպեսզի յուրաքանչյուր վոչ պարզ հնչյունի, յուրաքանչյուր շնչյունի մեջ լսենք մտնուների հեռավոր հառաջանքը և շարունակ կրկնվող միննույն բառը՝ «հա՛ց»։

Այսպես վերջացրեց իր գիտական դասախոսությունը կայսերական համալսարանի պրոֆեսորը։ Այդ արգեն «խոռվություն» եր, այդ արդեն ապստամբության կոչ եր, կոչ՝ տապալելու նրանց, վորոնց մեղքով անզոր ելին դարձել այդ՝ «դեռևս վոչ այնքան առաջ հզոր ձեռքերը»։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՍՍՐԱՆՆԵՐԸ

Դրա մեջ եր վողջ Տիմիրյաղեվը։

Արդեն շատ հեռու յեն գնացել մեզնից ցարական սարսափելի ժամանակները, և նրա համար, ով իր կյանքի գոնե մի ծայրով չի ընկել այդ ժամանակների մեջ, դժվար է նույնիսկ պատկերացնել, թե ինչքան արտասովոր բան եր գիտնականի համար — այն ել ուստական գիտնականի համար — այդպես վերջացնել իր գիտական դասախոսությունը։

«Պրոֆեսորը, գիտնականը վոչինչ չպիտի իմանա, բացի սոսկ գիտությունից, բացի իր սրվակներից ու վորձանոթներից։ Նրան վայել չի խառնվել կյանքին, հասարակական և պետական գործերին։ Նրա լարութուրիան տաձար է։ Տղետ ամրոխը մուտք չպիտի ունենա այնտեղ, ինչպես պրոֆեսորը վոչ մի գործ չպիտի ունենա այդ ամրոխի թշվառության, տանջանքի և հուզումների հետ։ Յեկ վոչ միայն գիտնականը պետք է հեռու քաշվի հասարակական պայքարից, ոյլ և այն պատանին, վորն առաջին անդամ մտնում է գիտության տաձարը։ Այսուհետև նա միայն ուսանող է և պարտավոր է լսել և հնազանդվել պրոֆեսորերին։ Իսկ այնտեղ — «փողոցում» — առանց նրան ել կկատավարվեն։ Բանվորները գործադուլ են անում և աղստամբում։ Այդ վերաբերում ե միայն գործարանատերին և վոստիկանությանը։ Գյուղերում մեռքանատերին և վոստիկանությանը։ Գյուղերում մեռքանատերին և սովից։ Այդ վերաբերում ե միայն նահանգի նորմը են սովից։ Այդ վերաբերում ե միայն նահանգի

տիրոջը — նահանդապետին։ Նա կմտածի՛ այդ մասին։ Իսկ ուսանողը ժողովրդի հանդեպ իր պարտքը լիովին կատարում է նրանով, վոր դասախոսություններ է լսում, հաճախում է գործնական պարապմունքներին։ Գիտությունների դասընթացն անցնելով՝ նա իր ժամանակին ոգուտ կրերի ժողովրդին — կդառնա առաջնակոր, բժիշկ, ինժեներ»։

Այս եր այն պատվիրանը, վորին անշեղորեն պետք է հետևելին ուսական կայսերական համալսարանների և՝ պրոֆեսորը, և՝ ուսանողը։ Վա՛յ նրան, ով կմերժեր այդ պատվիրանը։ Այդպիսի դեպքում ուսանողների հետ ամենելին ձեականություն չելին անում։ Յերբ բազմամիլիոն ժողովրդի ճնշումից և աղքատությունից վրդովված ուսանողները հավաքվում ելին ժողովի, նրանց վրա հարձակվում ելին կազակները՝ հարայ-հրոցով և մտրակներն ողում թափահարելով։ Անողոք դատաստան եր տեղի ունենում։ Ղեկավարներին բանտ ելին տանում ջարդած և արյունլվա, մնացածների դեմ համալսարանի վարչությունը գոնիքակ դատ եր բաց անում. — տասնյակ և հարյուրավոր պատանիներ, «դայլի տամսեր» ձեռքներին, ընդմիշտ վոնդվում ելին բարձրագույն դպրոցից, կամ զինվոր ելին քշվում։ Իսկ զինվորության տալը ուսունողի համար նշանակում եր տարիներ շարունակ չարչարանքի և ծաղրանքի յենթարկել մի ինչ վոր «զուչի»՝ ֆելդֆերելի կողմից, վորի գլուխը զորանցում այն միտքն ելին խցկում, թե ուսանողը «ներքին թըշնամի յե»։

Զնայած այդ բոլոր պատիժներին, այնուամենայիվ, ուսական կայսերական համալսարանների պատմությունը ուսանողական գործադուլների, հուզումների, ապստամբությունների մի անվերջ շարան է։ Ուսանողների լավագույն մասը յերբեք չեր դավաճանում ժողովրդին։ Ուսանող Ալեքսանդր Ռուլյանովը, Վլադիմիր Իլյիչ Լենինի յեղայրը, մահապատի յենթարկեց կայսեր դեմ կազմակերպված դավադրությանը

մուսնակցելու համար։ Նրան առաջարկեցին ներուժ լոնդրել։ Նա հրաժարվեց։

Իր ժամանակի անկայառ և անվեհեր ուսանողների թվին եր պատկանում նաև Պետրոգրադի կայսերական համալսարանի ուսանող կլիմենտ Տիմիրյազեվը։

Կլիմենտ Տիմիրյազեվը ՅԵՎ ՈՍՏՁԵՑԱՆ ԲԱՐՈՒԾ

Վաթունական թվականների սկզբներին ժողովրդական լուսավորության մինստր Պուտյատինը հաւաքարաններում մտցրեց այսպես կոչված «մատրիժալսարաններում մտցրեց այսպես կոչված «մատրիժալսարաններ»։ Դրանք տեղեկագրեր ելին. կուլներ»։ (մատյաններ)։ Դրանք տեղեկագրեր ելին. նշանակվում և արձագորոնց մեջ թվանշաններն ելին նշանակվում և արձագորոնց մեջ թվանշաններն երեն պահում ուսանողը։ Հասուն մարդկանց, բարձրագույն դպրոցի ուսանողին. ներին, նորից վերածեցին գիմնազիստների։ Բացի դրանից՝ պարզ եր, վոր հենց այն ուսանողների վարքն եր «վատ» համարվելու, վորոնք հեղափոխականության ելին տրամադրված, իսկ «խելոք», «լսող» համարվելու ելին նրանք, ովքեր մեջք ելին ծոռւմ և քծնում իշխանության առաջ։ Ուսանողները գործադուլ ելին անում։ Նրանց մեջ առաջինը Տիմիրյազեվն եր։ Բայց «ընտանիքն առանց այլանդակի չի լինի»։ Քիչ զգանվեցին նաև վախկուտ «մամայի բալիկներ»։ Վորոնք աշխարհում ամեն բանից շատ համալսարանից հեռացվելուց ելին վախենում։

Կար նաև հատուկ խմբակ ուսանողների շրջանում։ Հետապայում դրանց «սպիտակ աստառավորներ» (белոպօճառչներ) անունը տվին։ Հենց նընրանք ելին, վոր պաշտպանում ելին այն հայացքը, թե ուսանողը պետք է միայն հաճախի դասախոսություններին և հնագանդմի իշխանությանը։ Մնացածը նրան չի վերաբերում։ Այդպիսի «ակադեմիաների» կամ «սպիտակ աստառավորների» մեծ մասը ցարական բարձր աստիճանավորների և հարուստների վորդիններն ելին։

Նրանցից մեկը, Ոստղեյան մի բարոնի վորդի, սովորում եր Տիմիրյաղեվի հետ միասին։ Միշտ կոկված, ճշտապահ շարունակում եր հաճախել բոլորդասահիսություններին և լսածը խնամքով արձանագրել տետրակի մեջ, կարծես նրա շաւրջը վոչինչ չեր պատահել։ Նրան բոլորովին չելին վրդովում հարեանների դատարկված նստարանները։ Նա արհամարհանքով աչքերը կկրցած նայում եր նախասրահում հավաքված գործադուլավորներին։

Այն ժամանակ այդ կուրօւմ քիմիայի դասախոսություններ եր կարզում մեծ Մենդելեյեվը։ Պատանի Տիմիրյաղեվը, վորը գեռ այն ժամանակ գիտեր, վորի ուղին գիտնականի ուղի յե, առաջ մինչեւ գործադուլը բաց չեր թողնում Մենդելեյեվյան վոչ մի դասախոսություն։ Մենդելեյեվի յուրաքանչյուր խոսքը նրա համար իմացության և մտավոր խորը հաճույքի աղբյուր եր։ Աշխարհիս վոչ մի գանձի գնով նա չեր համաձայնի զրկվել այդ դասախոսություններից։

Յեվ ահա նա, Տիմիրյաղեվը, վորի համար Մենդելեյեվի յուրաքանչյուր խոսքն առորյա հացի նման կենսական ու անհրաժեշտ եր, — կանգնել ե լսարանի շեմքի մոտ, նախասրահում, իսկ ոստղեյան բարոնիկը, վորը գուցե սովորում ե միայն նրա համար, վորպեսզի դիպում ստանա և դառնա չինովնիկ և գանձադող, — նա լսում ե Մենդելեյեվին։

Փոթորիկը մոլեգնում եր Տիմիրյաղեվի հոգում։ «Յեվ հանկարծ այնպէս հոգեմաշ դարձավ, — հիշում եր նա հետազայում, — վոր յեթե այդ պահին մի վոր և՛ Մեֆիստոֆել «մատյանն» առաջս դներ, հավանաբար առանց յերկար ժամանելու կստորագրեցի, և վոչ թե թանաքով, այլ արյունով»։

Բայց և այնպես պատանին անձնատուր չեղտվայտ՝ նրա համար ամենասարսափելի վորձությանը։ Իսկ չե՞ վոր վոչ միայն մենդելեյեվյան դասախոսությունները, այլ և նրա սեփական ամբողջ ապագան մազից եր կախված։ Նրան կարող ելին արտաքսել համալսարանից, առենք հետազայում արտաքսեցին ել։

Այդպես եր պատանի Տիմիրյաղեվը, այդպես ել նա մնաց մինչեւ վերջը։ Շատ հետո, յերբ նա արդեն վաթսունից անց եր, ակամայից հիշում եր իր այդ պատանեկական որերի մասին։ Մոսկվայի համալսարանում, ուր Կլիմենտ Արքադյեվիչը պրոֆեսոր եր, բոնկվեց ուսանողական գործադուլ։ Յե՞վ պրոֆեսորները, և' այն ժամանակվա թերթերն ուսանողներին ամոթանք ելին տալիս, նախատում ելին։ — Համալսարանը գործարան չե՛։ Դուք բանվորներ չեք։ Դասախոսը կապիտալիստ չե։ Զեր գործադարձ անմիտ բան ե։

Միայն պրոֆեսոր Տիմիրյաղեվն եր, վոր բացահայտ կերպով պաշտպան դուրս յեկավ գործադուլու վորներին։ Հենց այն ժամանակ ել նա հիշեց ոստղեվյան բարոնիկին, Մենդելեյեվի դասախոսությունները և իր գայթակղությունը, վորից նա դուրս յեկավ անքիծ խղճով։

«Յեվ ահա այժմ, — հիշում եր Տիմիրյաղեվը, — յոթ տասնամյակի մոտ, յերբ կարող ես քո հեռավոր անցյալին վերաբերվել վորպես անկողմնակալ հանդիսատես, յես շնորհակալություն եմ հայտնում իմ ճակատագրին, կամ ավելի ճիշտ, ինձ շրջապատող միջավայրին, վոր վարժեցի տնապես, ինչպես վարկեցի։ Դիտությունը չիմախավ իմ ձեռքից, — նա յերբեք չի փախչի նրանից, ով սիրում ե նրան անշահախնդիր և անկեղծ կերպով։ Իսկ ի՞նչ կդառնար իմ բարոյական խարակտերը*), յեթե յես ամուր չկանգնեյի իմ տուածին գայթակղության առաջ, յեթե առաջին բարոյական պայքարը վերջանար կոմպրոմիսով**։

Ասում են՝ վերջին գործադուլն անմիտ բան եր, — շարունակում եր նա։ ասում են՝ համալսարանը գործարան չե, իսկ դասախոսը՝ կապիտալիստ։ Բայց ի՞նչի համար են ասում այդ անհեթությունը, յերբ ակներեն ե, վոր այդ վոչ մի կազ չունի իրականության հետ։

*) Արականեր—բնակորություն, բնույթ։

**) Կոմպրոմիս—վախ, զիջում։

Յեթե համեմատության դիմելու լինենք, ասկա պետք է ավելի շուտ մի այլ, նույնպես զուտ ռուսական յերնույթի դիմենք — բանտերում արվող հացաղունեցին: Զե՞ր վոր այդ հացաղուներին դիմողները (համենայն դեպս այնպիսի լուրջ մարդիկ, ինչպիսին Զերնիշեվսկին ե) չեն մտածել, վոր դրանով նյութական վնաս կհասցնեն իրենց բանտապետներին»:

«ԱՐՀԵՍՏԱՆՈՅ ՅԵՎ ՎՈԶ ԹԵ ՏԱՀԱՐ»

Գիտությունը լույս և ուժ պիտի լինի վողջ ժողովութիւնը համար, և վոչ թէ սպասավորուհի հարուստ ների և տոհմիկների առաջ։ Գիտնականը — դա իբ ժողովրդի ամենաուժեղ և ամենալուսավոր զավակն է։ Ի՞նչպես և նա համարձակվում իր սրվակներով ու անոթներով զբաղվելիս մոռացության տակ ժողովրդական աղքատությունը և տղիտությունը։

— Հաբորատորիան արհեստանոց ե, և վոչ թե
տաճար,— վորոտում եր իր պատասխան «պատվի-
րանները» Տիմիրյազելը, «կատաղի կլիմենտ»-ը, ինչ-
պես կոչում եին նրան իր ընկերները և համախոհները:

Նա զայրույթով ու ծաղրանքով եր դիմավորուա-
այն կեղծավոր ու շահախնդիր հայտաբարություննե-
րին, թե դիտնականին և ուսանողին վայել չե քաղա-
քականությանը խառնվել, այսինքն աջակցել ժողո-
վը դին ինքնակալության դեմ մղվող պայքարուամ։

Տիմիրյաղեղի կարծիքով, իսկական գլուխական
պետք է միշտ իր ժողովրդի առաջին շարքերում լինի:
Նա իր խոսքը պետք է նվիրի վոչ միայն բարձր զի-
տությանը, այլև կարիքից ու ցարական կարգերից
ճնշված, անդրադեալ ու խավար ժողովրդական զանգ-
մածների ուսամբության գործին:

վածների լուսավորության գույն
Թե ինչպիսի բարձր խնդիր եր դնում պըսփե-
սոր Տիմիրյաղեկն այն ժամանակվա բոլոր կրթված
մարդկանց առաջ և ժողովրդի նկատմամբ վորպիսի
պատճենանալովություն եր դնում նրանց վրա, այլ

մասին նա մի անգամ արտահայտվեց իր վառ ու պատ-
կերավոր խոսքի ամրող ուժով:

ՏԵՐԵՎՆԵՐԸ ՅԵՎ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Այս դեպքը պատահվեց Մոսկվայի մոտ—Պետրովս-
կո-Ռազումովսկի (ներկայումս Տիմիրյագեվյան)՝
ակադեմիայում կարդացած դասախոսության ժամա-
նակ։ Այդ ժամանակ դեռ տրամվայներ չկային։ Տի-
միրյագեվը Մոսկվայից գալիս եր կառքով։ Ուսանող-
ներն իրենց սիրելի պրոֆեսորի, իրենց ընկերոջ, հո-
վանավորի և խորհրդատվի ժամանումից դեռ շատ
առաջ հավաքվել եյին միատեղ, վորպեսզի նախապես
քննարկեն իրենց կյանքի ամենից ցավոտ և ամենից
պլիսավոր հարցերը և ապա արդեն վերջնական խոսքի
համար դիմեն ուղղակի կլիմենտ Արկադյելիչին։

«Տիմիրյաղեվն աշխատս ասաց».— Հերիք եր մեկն
ու մեկը վեճի ժամանակ ասեր այս դարձվածքը, և
վիճաբանությունը դադարում եր: Ուսանողները դի-
տելին, վոր Տիմիրյաղեվը յերբեք չի կեղծում. Տի-
միրյաղեվին վոչ վոք չի վախեցնի: Նա միակն է, վոր
ակադեմիայի խորհրդում բացահայտ կերպով պայքա-
րում է ակադեմիան զորանոցի վերածելու դեմ: Նա
նույնիսկ չի թաղցնում իր համակրանքը գործադու-
լավորների և հեղափոխականների նկատմամբ:

Մի անգամ պրոֆեսոր Տիմիրյաղելը, զայրացած,
աշքերը փայլեցնելով, նետվեց այն սենյակը, ուր նըս-
տած եյին ձերբակալված «դործադուլավորներ» և
կատաղությամբ շեմքից հեռացրեց պահակին.

— Դուք չեք համարձակվի ինձ ներս չթողնելու.
Աս պրոֆեսոր եմ ի ոշում եմ եմ ուսանողների մոտ:

Ներս մտավ և հուզված սեղմեց ձերբակալվածների մոտ։
Ներս մտավ և հուզված սեղմեց ձերբակալվածների մոտ։
Այդպիսին եր նա, հեղափոխական ուսանողության անվեհեր բարեկամը և հովանավորը, և
այդ եր պատճառը, վոր դասախոսելու նորատակով
նրա յուրաքանչյուր ժամանումը «պետքովցիների» համար տոն եր։

... Հավաքվել և սպասում եյին նրան։ Հաղիվ եթ
նա ներս մտել — ուսանողներն անմիջապես շրջապա-
տեցին նրան։ Ուսանողներով շրջապատված՝ Տիմի-
րյազեվն անցավ թանգարան։ Այստեղ նա պարապում
եր նրանց հետ բույսերի Փիզիոլոգիայի մասին։ Սա-
կայն ջերմ ու հուզումնալից խոսակցությունը, վորը
սկսվել եր դեռևս ակադեմիայի բակից, չեր դադարում
նաև այստեղ։

Ուսանողները Տիմիրյազեվի հետ իրենց այնպես
եյին զգում, ինչպես ավագ ընկերոջ հետ։ Նրանք զի-
տէյին վոր Տիմիրյազեվը չի բարկանա, յեթե ուսու-
նողն սկսի վիճել նրա հետ և պնդի իր տեսակետների
վրա։ Տիմիրյազեվն ինքը տաքանում եր վեճի մեջ։

Այդպիսի տարածայնությունների մեջ նա միշտ
միայն նպատակ ուներ մի բանի հասնել — ճշմարտու-
թյան։ Յեվ յեթե խոսակցին հաջողվում եր ապացու-
ցել իր արդարացի լինելը, Տիմիրյազեվը սիրով հա-
համաձայնում եր։

— Այո՛, պրոֆեսո՛ր, մենք ել ենք գնահատում
գիտությունը, — տաքացած բացականչեց Տիմիրյազե-
վի հետ զրուցող ուսանողներից մեկը, բայց մենք չենք
մոռանում, վոր այն ժամանակ, յերբ մարդկության
գիտուն մասը գեղեցիկ փայլ ե ստանում արևի տակ,
այնտեղ, շախտերի խորքերում մարդիկ ևն վոր-
փրում։ Հենց նրանք, ում մասին, հիշո՞ւմ եք, նեկ-
րասովն ասել ե՛

Ո՞ւմ կոչտ ձեռքերն են աշխատում
Յեվ հարդանքով մեղ թողնում
Արվեստի դիտության մեջ ընկղմվել,
Կրքին, յերաշին անձնատուր լինել...

Տիմիրյազեվը, լսելով ուսանողին, կարծես ցան-
կանալով առարկել նրան, մի քանի անդամ բարձրացրեց
իր նիհար, նյարդային ձեռքը և նորից ցած թողեց։

Հանկարծ նա սթափվեց, նայեց ժամացույցին
— դասախոսությունն սկսելու ժամանակն եր։

Նա կարծես թե այդպես, առանց առարկման թո-
ղեց ուսանողի բոլոց ասածները։

Դասախոսությունը քլորոֆիլի մասին եր, կանոչ
տերեւի մասին։ Ինչպես միշտ վոգեորչելով և տաքա-
նալով իր սիրած նյութի պարզաբանմամբ, վորին
առաջ եր նա իր վողջ կյանքը, Տիմիրյազեվը վառ
տվյալ եր նա իր վողջ կյանքը, Տիմիրյազեվը վառ
պատկերներով ունկնդիրներին նկարագրեց տերեւների
համաշխարհային մեծ աշխատանքը։

— Այսուամենայնիվ մարդն անարդարացի յե տե-
րեւների նկատմամբ, — կոկիծի զղացումով արտա-
րեց կիմբենտ Արկադյավիչը։ Դարերի ընթացքում
մարդը համառորեն հարժարվել ե նրան վերագրել վոչ
միայն անհրաժեշտ, այլ նույնիսկ ոգտակար որդանի-
դեր։ Տերեւների վրա նայում ելին վորովես զարգա-
րանքի, վորը դուցե անոգտակար չե մարդու համար,
բայց միանգամայն անպետք ե բույսի համար։ Այս-
տեղ Տիմիրյազեվն ունկնդիրներին հիշեցրեց Կոփլովի
հայտնի առակը՝ «Տերեւները և արմատները»։ Այդ ա-
ռակի մեջ փայլող արևի շողերի մեջ հավիտենականա-
վես լողացող և բարերեկ հով անող տերեւներն ամբար-
տավանում են արմատների առաջ։ Առակախոսը տերեւ-
ներին ի ցույց ե գնում նրանց անոգտակարությունը և
նրանցից պահանջում ե դոնե հասարակ շնորհակայու-
թյուն հայտնել արմատներին, վորոնք կերակրում են
նրանց։

— Կոփլովը զրպարտել ե տերեւներին, — բացա-
կանչեց Տիմիրյազեվը հուղված։ Մենք, ձեզ հետ
միասին, հենց նոր համոզվեցինք, վոր տերեւները
նույնպես կերակրում են բույսին, վոր առանց նրանց,
ինչպես և առանց արմատների, ծառն ապրել չի կա-
րող։

Բոլորի համար պարզ ե, — շարունակեց նա, — թե
Կոփլովն ում եր հասկանում արմատներ ասելով և ում
տերեւներ ասելով։ Տերեւներն այդ մենք ենք, «արվես-
տի, գիտության մեջ ընկղմվածներս», մենք, վոր
ոգտվում ենք լույսից և ողից և պարապ ժամանակ

«կրքին, յերազին անձնատուր լինում»: Իսկ արմատները — այդ նրանք են,

Ով թափառում ե կյանքի ճամբեքում
իսպար ու խոր գիշերում,

Ում կոչտ ձեռքերն են աշխատում....

կարդաց Տիմիրյաղեվը նույն նեկրասովյան բանաստեղծությունից մի հատված, վորը և մատնացույց երարել իր հետ վիճող ուսանողը:

Տիմիրյաղեվը, վոր խորապես ծանոթ եր համաշխարհին պոեզիային, սիրում եր ամենից հաճախ հիշել նեկրասովի, քան թե ուրիշ պոետների բանաստեղծությունները:

Ժողովրդական մեծ բանաստեղծ նեկրասովը կիրականությունիցի համար թանդ եր վորպես այնպիսի պոետ, վորի ցարի և կալվածատերերի դեմ զայրուցով համակված բանաստեղծություններով՝ հեղափոխականների մեկ սերունդ չեր, վոր դաստիարակվում եր:

— Յեթե համաձայնենք տերեւների հասցեյին աւղղված կորիլովյան ամբաստանությանը, — շարունակեց գիտնականը, — ապա, իհարկե, համեմատությունն այդպիսի տերեւների հետ մեզ համար միայն վիրավորական ե և խայտառակություն:

Բայց իսկական տերեւների հետ համեմատելը բոլովին հաճոյական կլիներ: Ինչպես տերեւները՝ մենք մեր արմատների համար ուժի աղբյուր պետք ե հանդիսանանք, գիտության ուժի, այն ուժի, առանց վորի յերբեմն անողնական կախ են ընկնում ամենից հզոր բազուկները: Ինչպես տերեւները՝ մենք պետք ե ծառայենք մեր արմատներին, վորպես լույսի հաղորդիչներ — գիտության լույսի, այն լույսի, առանց վորի հաճախ խավարի մեջ կործանվում են ամենից աղնիվ ձիուերը:

Յեթե մենք մերժենք մեր այդ կոչումը, յեթե մեր լույսը խավար պիտի լինի, կամ յեթե առակախառսի մատացածին տերեւների նման մենք ծառայությամբ

չպիտի հատուցենք մեր արմատներին նրանց մատուցած ծառայության վոխարեն, յեթե ստանալով մենք վոխարենը վոչինչ չպիտի տանք, այն ժամանակ մենք տերեւներ չենք լինի: Այն ժամանակ մենք իրավունք չունենք մեզ մեծարել տերեւ անունով, այն ժամանակ բնության բառարանի մեջ կդտնվեն մեզ համար ուրիշ, նվազ հաճոյական համեմատություններ: Սունկ, բորբոս, պարագիտ — ահա այն համեմատությունները, վոր այդ գեղքում սպասում են մեզ այդ բառարուում:

Այսպես վերջացրեց պրոֆեսոր Տիմիրյաղեվն իր զասախոսությունը կանաչ տերեւի և քրորոֆիլի մագասախոսությունը կանաչ տերեւնողին — այդպես հասպան: Այդ պատասխան եր ուսանողին — այդպես համարանը՝ ցնցված ու հիացած՝ լուր եր:

Յեզ հանկարծ ծակահարությունների և վողջույնի վոգեռված բացականչությունների վոթորիկը խախտեց լուրությունը: ..

ԿԱՏԱՐԻ ԿԼԻՄԵՆՏԸ

Այդպես ուրեմն — տերեւներ լինել ժողովրդի համար՝ այդ համեմատության ամենալավ, իսկական իմաստով: Ահա ինչ եր պահանջում «կատարի կլիմենտ»՝ և՛ գիտնականներից, և՛ ուսանողներից, և՛ իր ժամանակի բոլոր կրթված մարդկանցից:

Սակայն յեթե իրեն՝ Տիմիրյաղեվի մասին լիովին աեղին և ասել պոետ Տյուտչելի խոսքերով թե՝

Մարդկության բարձր ծառին

Դու լավագույն տերեւն եյիր,

Մնջած նրա մաքուր հյութով,

Աճած արեի պայծառ շողերով,

ապա նրա ընկերներից — բուրժուական պրոֆեսորներից շատե՞րն եյին, վորոնք կկարողանային խուսափել պարագիտային սունկի և բորբոսի հետ համեմատվելուց:

Տիմիրյաղեվն այնպիսի հեղափոխական չեր, վշտի
իրեն բացառապես և լիովին նվիրում ե ցարական իրա-
վակարգի դեմ մզվող պայքարին։ Նրա կյանքի գործը
գիտությունն եր:

Նա գտնում եր, վոր իսկական գիտությունը հեղափոխական սարսափելի ուժ և և ինքնըստինքյան ընդունակ և գինամիտի նման կործանելու կապիտալիստական հանցավոր հասարակաբարբարությունը: Դրա համար բավական ե միայն ժողովրդի մեջ լուսավորություն տարածել:


Հետազայում Տիմիրյաղելն ըմբռնեց իր այդ
սխալը։ Արդեն խորը ծերության հասակում նա սոս-
կալի ատելություն առաջ բերելով բուրժուական պրո-
ֆեսորների մեջ և սարսափի մեջ գցելով նրանց, հաս-
տատապես և համոզված հայտարարեց։

— Գնդացիրների հետ պետք է խոսել գնդացիրների լեզվով։ Խոկ խոսքերով—պըոպագանդանել անել գնդացրս բդներին։

Սակայն իրեն լիովին հեղափոխական գործունեությանը նվիրելով անդամ, «կատաղի կլիմենտը» իր հրեղեն խռաքերով, ցաբական իրավակարգի ամբողջ զազրելիության իր անվայիս մերկացումներով ըստ հարվածներ եր հասցնում միապետությանը:

Թվում եր, թե Տիմիրյաղելի միտքը, անօրդեն
բանի միտքը, վորնայդ գիտության նկատմամբ առա-
ջին անդամ կիրառեց ճշգրիտ գիտությունների մեթո-
դը, սկսած և անքակտելի կերպով դամված լինելը,
սպետք և անքակտելի կերպով դամված լինելը,
ապեկտրոսկոպին*), գործիքներին, սրվակներին, քի-
միական բարդ ռեակցիաներին և մաթեմատիկական
հաշվարկումներին:

*) Սպեկտրոսկոպ—գործիք, վորի միջացով կարելի յեւ վորուչել վոչ միայն յերկը վրա դանված ամեն տեսակ նյութի բաղադրությունը, այլև կարելի յեւ նույնիսկ վորոշել, թե ինչից են կազմված մեղնից ամենից հեռու գտնվող աստղերը: Տիմիրյան գելն աշխատելով սպեկտրոսկոպով՝ հայտնագործեց, թե արևի ճառագայթի վոր մասն է կանաչ տերևելի քլորոֆիլի մեջ քայլայում ածխաթթում:



Նկ. 3. *Sիմիրյաղեվի լաբորատորիայի պատշգամբը գործիքներով*

ԶԵ՞ վոր Տիմիրյաղեվն ստեղծել ե ավելի քան
հարյուր գիտական աշխատություն, գրել ե ավելի
քան հարյուր հիսուն հոդված, թարգմանել ե ուսւե-
րեն արտասահմանյան տասնյակ գիտական աշխատու-
թյուններ, կարդացել ե հսկայական քանակությամբ
զեկուցումներ և հրապարակային գասախոսություն-
ներ:

Նա հնարեց չափաղանց արժեքավոր գործիքներ,
վորոնցով հետազոտում են արեկի ճառագայթի կատա-
րած աշխատանքը կանաչ տերևի մեջ:

Այդ գործիքներն իրենց կատարելությամբ և պար-
զությամբ հիմքմունք ելին պատճառում նույնիսկ
քիմիկուններին և Փիզիկուններին:

Այդպես ե, որինակ, նրա նշանակոր միկրոելեկո-
մետրը, վորի ողնությամբ կարելի յէ անալիզի յեն-
թարկել աներեակայելի փոքր քանակության դազը—
ջրամի մեկ հարյուրմիլիոններորդականի չափով:

Տիմիրյաղեվը չափաղանց ծանրաբեռնված եր գի-
տական աշխատանքներով:

Իր խոստովանությամբ նա յերբեմն ուղեղի աշ-
խատանքի այնպիսի լարվածություն ե ապրել, վոր
ձեռքերն ու վոտքերը սառել են,— այնքա՞ն շատ
արյուն ե կլանել ուղեղը:

Յեկ այնուամենայնիվ մինչ ինքնամոռացություն
ընկղմված իր լարուատորիա-արհեստանոցի աշխա-
տանքներում, Տիմիրյաղեվը վորպես նրբաղույն աելո-
մոդրաֆ գործիք, վորն արձագանքում ե յերկրի կեղե-
վի ամենահեռավոր և հազիվ զգալի տատանումնե-
րին,— առանց հապաղելու արձագանքում եր հասա-
կական կյանքի յուրաքանչյուր դեպքի:

Այստեղ նրա համար գոյություն չուներ «հեռուն»

և «մոտիկը»: Այդպես եր «կատաղի կլիմենտն» իր պա-
տանեկության առաջին որերից սկսած:

...Վաթսունական թվականների սկիզբն եր: Ռու-
սաստան լուրեր են հասնում Լանկաշիրում (Անգլիա)՝
տիրող սովոր մասին: Տասնիննամյա պատանին գրիչ է
վերցնում իր ձեռքը և այն ժամանակվա հայտնի «կար-
միք» ժուռնալում— «Ոտեչեստվեննիյե զապիսկի»—ում
—յերեան ե դալիս նրա «Սովը Լանկաշիրում» հոդ-
վածը:

Ապստամբություն ե բարձրացնում Գարիբալդին
— իտալական ժողովրդական հերոսը— և անհավասար
կովի մեջ է մտնում ավստրիական կայսերական լծի
դեմ: Յեկ ահա հեռավոր ու ցուրտ Պետերբուրգում
հանգիստ չի մնում պատանի կլիմենտի ջերմ սիրու:

Համալսարանից վտարվելու, ձերբակալվելու, աք-
սորվելու վտանգի տակ դնելով իրեն, նա նույն ժուռ-
նալում պապալը ե տալիս իր հոդված— կոչք՝ «Գա-
րիբալդին Կապրերում»: Այդ հոդվածը հրաշքով ան-
ցավ գրաքննությունից, քանի վոր նրա մեջ ավստրի-
ական կայսրի մասին ասածներից շատ բան բացահայ-
տուրեն ուղղված եր ոռուական կայսրի գեմ:

— Եհ, ի՞նչ կա վոր, — կարող են ասել վոմանք.
— այսր պատանեկություն եր, ե՛... Քի՞չ պատանիներ
այն ժամանակ փորձեցին, ինչ-վոր անդրջրհեղեղյան
փշտովներով զինված, փախչել Գարիբալդու մոտ:

Վոչ: Տիմիրյաղեվի համար այդ պատանեկական
հափշտակություն չեր: Անցել ելին վոթորկալի վաթ-
սունական թվականները: Գարիբալդու ապստամբու-
թյան վորոտը լոել եր: Տիմիրյաղեվը գարձել եր բու-
սարանության դոկտոր, պրոֆեսոր, նշանավոր գիտ-
ական: Նա հաճախ եր լինում արտասահմանում—
Ֆրանսիայում, Իտալիայում:

Ֆրանսիայի հարավում, տաք և կապուտակ ծովի
ափին, յերանավետ մի անկյուն կա— Նիցցան: Գոնե-
մեկ անգամ այնտեղ լինելը մարդիկ բախտավորու-
թյուն ելին համարում իրենց համար: Անդրովկիանո-

սյան յերկրներից նույնպես գալիս եյին այնտեղ։ Իսկ ողբովեսոր Տիմիրյաղեվը, չնայած բոլորովին մոտ եր ապրում Նիցցային, բայց վոչ մի անդամ չեղավ այնտեղ։ Թվում եր, թե նա խուսափում ե այդ վայրից։ Իսկ այնտեղ, պետք ե ասել, ապրում եր իր ընկերը—Ռուսաստանից եմիգրացիայի յենթարկված պրոֆեսոր Կովալեվսկին, և Տիմիրյաղեվը չափազանց շատ եր ուղղում հանդիպել նրան։ Բայց և այնպես Տիմիրյաղեվը չգնաց Նիցցա։

Այուս իսկապես նա խուսափում եր այդ վայրից։ Բայց ինչո՞ւ։ Այդ հանելուկը նա ինքն ե պարզում իր հիշողությունների մեջ։

«Յերիտասարդ հասակից Գարիբալդու յերկրպագուն լինելով՝ յես սկզբունքորեն խուսափում եյի Փրանսիացիների կողմից գրավված՝ մեծ խտալացու հայրենիքից, վոր այդ բանը յերբեք չներեց կավուրին*։»

Կամ մի ուրիշ փաստ ևս։ Այդ տեղի ունեցավ 1870 թվին, Փարիզում։ Տիրմիրյաղեվը, վորն արդեն այն ժամանակ բուսաբանության մագիստրոս**) եր և հայտնի յեր արտասահմանում քլորոֆիլի մասին կատարած իր գիտական աշխատանքով, 1868 թվից գիտական արտասահմանյան գործուղման մեջ եր գտնըլում։

Նա աշխատեց Գերմանիայում՝ մեծ Փիդիկոսներ և՛ քիմիկոսներ Հելմհոլցի, Կիրխհոֆի, Բունզենի մոտ, մոտ, իսկ այժմ Փարիզում լսում եր նշանավոր Բունզենգոյի ։ Պիտական հողագործության հոր դաստիոնությունները։

1870 թիվը Փարիզյան կոմունայի նախորյակին եր։ Փարիզն արդեն աշեկոծվում եր։ Քաղաքական

*) Կալուր-Խուսալական մինիստր, Գարիբալդու ժամանակակից։ Կալուրը Նիցցան—Գարիբալդու հայրենիքը—զիջեց Փրանսիական կայսր Նապոլեոն Յ-րին։

**) Մագիստրոս—դիտական աստիճան ե։

խարդախ, ժողովրդին խարող և համաժողովրդական կասկածելի քվեարկությամբ սկզբում նախագահի պաշտոնի սողոսկած, ապա կայսր գարձած նապոլեոն Յ-րդը մորիլիզացիայի յենթարկեց բոլոր ուժերը—և վուտիկանական, և կամավորական միապետական ուժերը—վորպեսզի ճնշի հեղափոխական խմորումը։

Պրովոկացիոն ձևով փողոցային կոնֆլիքտ սարքելով՝ միապետականները սպանեցին հեղափոխական ժուռնալիստ Նուարին։ Համալսարանական պրոֆեսորներից մեկը դասարանում պաշտպանեց մարդասպանին։ Յերբ այդ պրոֆեսորը վերադարձավ համալսարան դասախոսություն կարգալու, ուսանողները որստրուկցիա (խանգարչություն) սարքեցին նրա զեմ, — նրանք մի ամբողջ ժամ աղմկեցին, դոփեցին հատակը, սուլեցին։

Նրանց հետ միասին պրոֆեսորները զուլում և զոփում եր նաև ոռւս գիտնական, բուսաբանության մագիստրոս Տիմիրյաղեվը։

Վոչ, այնտեղ, ուր հարկավոր եր ամուր կանգնել ճշմարտության կողմը, ճնշված մարդու կողմը, կեղեգված թեկուղ և «ոտար» ժողովրդի կողմը, — այնտեղ կլիմենտ Տիմիրյաղեվը մնում եր մինչեւ իր կյանքի վերջը վորպես կրակոտ պատանի։

ՏԻՄԻՐՅԱՂԵՎԸ ՅԵՎ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

... Գյուղը սովում ե։ Յերկու տարի անց վրայերբորդ տարին գյուղացիական ուժասպառ հողերը բերք չեն տալիս։ Սարսափելի սովն ընդդրկում ե ամբողջ նահանգներ։

Յեվ ահա մենք քսաներեքամյա յերիտասարդ Տիմիրյաղեվին տեսնում ենք վորպես գլխավոր մասնակից մենդելեյկյան հայտնի վորձերի, վոր կատարվում եյին հանքային ոլարարտացման բնագավառում։

Դրանից վոչ շատ առաջ, թեև համալսարանից արտաքսված՝ ուսանողական հուղումներին մասնակ-

շելու համար, այնուամենայնին, վորպես ազատ ունկը կընդիր, նա վերջացնում է համալսարանը։ Յեզ 1866 թվին համալսարանական խչխանությունը ստիլված և լինում «կարմիր» ուսանողին վոսկե մեղալ տալ՝ նրա «Օ պեչոնիկ մահացած աշխատության համար։

«Պեչենոչյան մամուռներ»— հենց միայն այդ անունից արդեն ինչվոր չոր բան ու ձանձրույթ ե փշում։ Թվում ե, թե միայն նեղ կարինետային մասնավետին ե հարմար այդպիսի աշխատանքը, վոր ընդհանուր վոչինչ չունի ժողովրդի կարիքների և կյանքի հետ։ Յեզ հանկարծ, մի տարի անց (1867 թվին) Տիմիրյաղեվը Մենդելեյևի հետ միասին հետազոտում և գյուղացիական խողուկ դաշտերը։ Նրա ուղեղն ամբողջովին կլանված ե այնպիսի հանքային պարարատնությունությունով, վորն ընդունակ կլինի գոնե մի քիչ բարձրացնել գյուղացիական տնտեսությունների աղքատիկ բերքը։ Բայց չե՞ վոր Տիմիրյաղեվը բուսաբան եր, և վոչ թե գյուղատնտես։

Բայց և այնպես «Պեչենոչյան մամուռների» հեղինակի այդ առաջին քայլի մեջ յերեաց Տիմիրյաղեվի գիտնականը։ Մինչև իր կյանքի վերջը նա պետք ե անդադրում ապացուցի և քարոզի, վոր բուսաբանությունը անշատ չի հոգագործությունից։ Միայն հոգագործի դաշտերում, միայն գործնականում բուսաբանությունը կարող ե ապացուցել իսկական գիտություն կոչվելու իր իրավունքը։ «Յերկու հասկ այնտեղ, ուր այժմ մեկն ե», — ահա սրա համար ե, վոր ձեռք-ձեռքի տված՝ պետք ե պայքարեն և՛ բուսաբանը, և՛ ազգոնոմը։ Ի՞նչ պետք ե անի գիտնական-բուսաբանը դրան հասնելու համար։ «Սովորել հենց բույսի կարծիքն իմանալ», — ապատասխանում եր պըռֆեսոր Տիմիրյաղեվը՝ իր ուսուցիչ Բուսենդոյի բառերով։ «Հարցնել հենց բույսի կարծիքը»— այդ նշանակում ե բույսի վերաբերյալ զանազան փորձեր դնել, նրանից իմանալ, թե ինչ նյութեր են ահրաժեշտ նրան, և ինչ նյութեր՝ վնասակար։

Այդ պատգամով պրոֆեսոր Տիմիրյաղեվը դաստիարակել է իր հազարավոր ունկնդիրներին, — «պետրովցիներին», վորոնք հետազում դարձան գյուղատնտեսներ։ Այդ ճշմարտությամբ ղեկավարվեց նաև խորհրդային կառավարությունը, վողջ Միության մեջ կազմակերպելով մարզային ագրոնոմիական կայաններ՝ սարքավորված գիտության վերջին խոսքի համաձայն։

Միմիայն այժմ, սոցիալիզմի ժամանակ, յերր գյուղացիական խղճուկ, մանր հողակտորները փոխարինվել են կոլտնտեսությունների անընդորկելի հողային գանգվածներով, միմիայն այժմ իրականացավ Տիմիրյաղեվի աննահանջ յերազը, — վոչ թե միավորներով, այլ հազարներով և տասնյակ հազարներով հաշվել փորձադաշտերի և փորձակայանների քանակը։

Բայց և այնպես, նույնիսկ այն ժամանակ, տարի որոք հենվելով իր գիտության վրա, այլև այննվիրվածության վրա, վոր նրա գաղափարների նկատմամբ ցուցաբերում եյին իր յերիտասարդ աշխատակիցները, Տիմիրյաղեվը ջանում եր անել այն բոլորը, ինչ վոր հնարավոր եր՝ լաբորատորիան և գիտական փորձը հողագործի դաշտերին մոտեցնելու համար։ Նա անկեղծորեն հավատում եր, վոր այդպիսով հնարավոր կլինի չքավոր գյուղացուն ազատել սովամահության վտանգից։

Անրերությունից տուժածների ողտին տված եր մի դասախոսության ժամանակ նա զայրույթով բացականչեց։

— Այժմ միմիայն ինչվոր շքեղրինյան գեներալները չեն ընդունում, վոր Ռուսաստանին կերակրում ե գյուղացին։ Իսկ նա հողն ե համարում իրեն կերակրողը... Սակայն նա, ով կերակրում ե Ռուսաստանին, ինքը կիսաքաղց ե...։

Այնուհետեւ այդ դասախոսության մեջ, կարծես մոռանալով «սունկերի» մասին, ժողովրդի «պարզիտների» մասին, վորոնց մասին ինքն ասում եր մի ժամանակ և վորոնք առանց մնացորդի խժոռամ եյին

Հողագործի վողջ աշխատանքը, Տիմիրյաղեվը տար-
կելով գիտության նկատմամբ իր ունեցած անսահ-
ման հավատով, քիչ եր մնում աշխատավոր գյուղա-
ցիության աղքատության դիմավոր պատճառը համա-
րի գյուղատնտեսական գիտությունների թույլ դար-
դացումը մոռասատանում:

— Գյուղացու իսկական կերակրողը վոչ թե
հողն ե, այլ բույսը, — ասում եր Տիմիրյաղեվը: —
Յեվ հողագործության վողջ արվեստն այն ե, վոր
աղատի բույսին, հետեապես և հողագործին, «հողի
հշանությունից»:

Ի՞նչ եր նշանակում այդ — «աղատել հողի իշխա-
նությունից»: Տիմիրյաղեվն այդ բանը ցայտուն կեր-
պով ցույց տվեց 1896 թվին Նիժեգորոդյան ցուցա-
հանդեսի իր գյուղատնտեսական պավիլոնի տասնյակ
հազարավոր այցելուներին:


Այդ ցուցահանդեսում յուրաքանչյուր մարդ կա-
րող եր համոզվել, թե ինչպես ապակե մեծ անոթնե-
րում, ուր հողի տեղ բոլորովին պարզ ջուր եր լցված,
կարճ ժամանակում աճել ելին հսկայական բույսեր։
Շատերը, իրենց աչքերին չհավատարով, յերկար ժա-
մանակ մեխաված ելին մնում Տիմիրյաղեվի բույսերի
մոտ: Հողից աղատ, լվացված մաքուր արմատներն
ամբողջովին ընկղմված ելին ջրի մեջ: Յեվ բանկայի
մեջ մի ավաղի հատիկ անդամ չկար:

Հանելուկը շատ պարզ եր ու հասարակ. — Ջրի մեջ
լուծված ելին բույսի սննդառության համար անհրա-
ժեշտ աղերը:

Այդ տիմիրյաղեվյան, ինչպես միշտ, ցայտուն
պրոպագանդան եր հանքային պարարտանյութերի ող-
տին:

Կարելի յե ցորենը, տարեկանը, կորեկն աճեցնել
ջրի մեջ, մանրած ապակու, ապակե ուլունքների վրա
և բերք վերցնել, յեթե իհարկե այդպիսի արհեստա-
կան «հողի» մեջ լինեն բույսին անհրաժեշտ բոլոր
աղերը:

Հենց այդ եր, վոր ուղում եր ապացուցել Տիմի-



Նկ. 4. Տիմիրյաղեվի ջերմոցը Նիժեգորոդյան ցուցահանդեսում 1896 թ.

րյագեվը: «Ազատվել հողի իշխանությունից» նշանակում եր սկսել հանքային պարարտանյութերի ոգտագործումը: Այն դեպքում ամեն տեսակի հող ել ավելի արդավանդ կղառնա, քան ամենաուժեղ սևահողը:

Քիչ գյուղացիներ չայցելեցին ցուցահանդեսը: Նրանց ճնշող մեծամասնությունը գյուղացիական հարուստ ցեցեր եյին, վորոնք առանց այդ ել արդեն դիտելին և՛ գյուղատնտեսական մեքենաների, և՛ պարարտանյութերի կարևորությունն ու այդ բոլորից ել կարող եյին ձեռք բերել: Բայց նրանք իրենց բարորությունը ձեռք եյին բերել վոչ թե հանքային պարարտանյութերի, այլ բատրակների եժան աշխատանքի չնորհիվ:


Ի միջի այլոց, յերեմն այցելում եյին նաև չքառոր գյուղացիության պատղամավորությունները, վուոնց զեմստվոններն եյին կազմակերպում—ուղարկում:

Այդպիսի պատղամավորներից մեկը յերկար ու զարմանքով գիտեց Տիմիրյազեվի ցուցահանդեսը, ապա գլուխն որոքեց և բույսը ցույց տալով ասաց՝

— Ես չելավ... Ես իսկական չեն, ես հո աչքակապություն ա...

Ցուցահանդեսը, ժողովրդի համար ունեցած իր արդյունքներով, չարդարացրեց Տիմիրյազեվի հույսերն ու ակնկալությունները, նրա հոգում թողնելով դառնության զգացմունք և չաղոտացող հույս, վոր, վերջապես, կղա այն ժամանակը, վորի մասին նա յերազել ե, կղա «Հողի իշխանությունից» և յեղանակի քմահաճույքից ազատագրված հողագործ-բուսաբանի, հողագործ-գիտնականի ժամանակը:

Յեկագ այն, կոլտնտեսական-բուսաբանի, կողմանտեսական-ագրոնոմի այդ ժամանակը, բայց Տիմիրյազեվին վիճակված չեր ապրելու մինչև այդ ժամանակները:



Նկ. 5 Կ. Ս. Տիմիրյազեվին իրեն համալսարանի պրոֆեսոր ընտրելու
տարին 1877թ.

1877 թվից սկսած Կլիմենտ Արկադյեվիչ Տիմի-
րյազեվը դասախոսություններ եր կարդում Մոսկվա-
յի համալսարանում:

Այստեղ նույնպես, ինչպես և Պետրովսկի ակադե-
միայում, իր պրոֆեսորության առաջինորերից սկսած
մինչև վերջը, այսինքն մինչև 1911 թիվը, յերբ հա-
մալսարանը յենթարկվեց կառավարության ավեր-
մունքին, խեղճացած կամ թե կայսերասեր սեհարյու-
բակային պրոֆեսուրայի մեջ Տիմիրյազեվն ուսանող-
ների միակ հավատարիմ ընկերն ու պաշտպանն եր:

«Զեմ կարող լոել»— խղճմանքի հարցերում հե-
տեւիւղի իր այդ բարձրագույն պատգամին, Կլիմենտ
Արկադյեվիչը 1901 թվին շատ խիստ կերպով ընդհար-
վեց ցարական իշխանության և համալսարանի ագմի-
նիստրացիայի հետ:

Կիեվի 183 ուսանող զինվորության եյին տրվել
գործադույներին մասնակցելու պատճառով։ Կառա-
վարությունը գործում եր 1899 թվի այսպես կոչված
«ժամանակավոր կանոններով»։ Յեվ կանոնները կի-
բառելու առաջին գեղքն եր այդ։

Ուսանողությունը հուզված եր։ Այն ժամանակ
ըուսավորության մինիստր Վաննովսկին առաջարկեց
պրոֆեսորներին՝ ուսանողների վրա «բարոյական ազ-
գեցություն» գործել։ Գիտական խորհուրդը հավաք-
վեց։ Այդ խորհրդում Կլիմենտ Արկադյեվիչն առա-
ջարկեց ուսանողների վրա «բարոյական ազգեցու-
թյուն» գործելու փոխարեն խնդրել մինիստրին լիովին
վերացնելու «ժամանակավոր կանոնները»։ Մակայն
մնացած պրոֆեսորները վախենում եյին պաշտպանել
Տիմիրյազեվի միջնորդությունը և ուսանողներին
ուղղված մի կոչ հորինեցին, վորով թախանձում եյին
դադարեցնել «անկարգությունները»։ Տիմիրյազեվը
չլրաժարվեց ստորագրել այդ խայտառակ փաստա-
թուղթը և խորհրդին հանձնեց իր առանձին կարծիքը։
Գիտական խորհրդին նիստի ժամանակ սև պրոֆե-

ուրացի նրկայացուցիչներից մեկը ՓՀՀացրեց Տիմի-
րյազեվի հասցեյին.

Այդպիսի կարիճներին, վորոնք դեմ են գնում
պաշտոնակիցներին, պետք ե ցած գցել սանդուխքից։

Տիմիրյազեվը թողեց նիստը և հեռացավ։ Իսկ մի
քանի որ հետո ուեկտոր Տիմոմիրովից ստացավ զգի-
լուության հասնող սիրավիր, կեղծավոր մի նամակ։

«Մէծարգու Կլիմենտ Արկադյեվիչ։

Յես Զեղ պետք ե անհանգստացնեմ մի շտապ գոր-
ծով։ Զե՞ք կարող արդյոք բարի լինել ասելու,
թե այսոր յես վո՞ր ժամին կարող եմ Զեղ գտնել
տանը։ Իսկ յեթե հարմար կլինի Զեղ համար,
ապա մի՛ մերժեք գալ ինձ մոտ վարչություն, ցե-
րեկվա ժամը մեկից մինչեւ յերկուսը։ Միշտ Զեղ
ծառայելու պատրաստ և անկեղծորեն Զեղ նվիր-
ված։

Ա. Տիմոմիրովի»:

Դեհ, այդպիսի նամակից հետո կարելի՞ յե վորոն-
եալ բան սպասել, բացի ամենադուրեկան զրուցից։
Տիմիրյազեվը ներկայացավ։ Ի դեպ ասած՝ «ան-
կեղծորեն նվիրված» ուեկտոր Տիմոմիրովը Կլիմենտ
Արկադյեվիչին ամենակատաղի կերպով ատողներից
եր։ Նա Տիմիրյազեվին հանձնեց մինիստրի հարցու-
մը։ — ի՞նչ հիման վրա յե պրոֆեսոր Տիմիրյազեվը
խուսափել իր ուղղակի և սրբազն պարտականու-
թյունից — ուսանողների վրա բարոյական ազգեցու-
թյուն զործելուց։

Կլիմենտ Արկադյեվիչը տվեց իր բացատրություն-
ները։ Գործը կարծես թե քննեց։

Շուտով Տիմիրյազեվը Գլազովյի նշանավոր հա-
մալսարանի հրավերով դնաց Անգլիա՝ համալսարանի
հորելյանական հանդեսին մասնակցելու համար։

Այնտեղ Կլիմենտ Արկադյեվիչը հանդիսավոր պա-
րագաների մեջ, միջնադարյան արարողություններով,
բարձրացվեց գիտական բարձրագույն աստիճանին—
գոկտորի աստիճանին։ (Նա պատկերված ե նկարում
գոկտորի բերեալով և փառահեղ պատմուճանավ)։

Անդլիայից վերադառնալուց հետո կլիմենտ Ար-
կադյելիչին նոր «Հրավեր» եր սպասում, բայց այ-
անդամ ուսումնական շրջանի հոգաբարձվի կողմից:

«Ուսումնական շըջանի հոգաբարձուն, հավաս-
տիցնելով իր հարգանքը կլիմենտ Արկադյելի-
չին, պատիվ ունի խոնարհաբար խնդրելու նորին
գերազանցությունից՝ չնորհ բերել իր մոտ ընդու-
նելության որերից մեկում, ցերեկվա ժամը 1-ից
մինչև 3-ը: Մոսկվա 22 ողոստոսի—1901 թիվ:
№ 16566»:

Հոգաբարձուն նեկրասովը յերկար ծամծմեց և,
վերջապես, հայտարարեց Տիմիրյազեվին, վոր մի-
նիստրը հրամայել ե «ի ցույց դնել նրան» ուսանողու-
թյան վրա «բարոյական աղղեցություն» գործելուց
հրաժարվելու համար:

Տիմիրյազեվը զայրացած պահանջեց, վոր հոգա-
բարձուն ցույց տա նկատողության բնադիրը: Հոգա-
բարձուն կտրականապես մերժեց նրա խնդիրը:

Տիմիրյազեվը հայտարարեց, վոր կհրաժարվի: Հոգաբարձուն չեր սպասում այդ: Տեղում անհանգիստ շարժումներ արավ: Վախեցավ: Սկսեց հավատացնել, վոր այդ նկատողությունն «ըստ եյության դատարկ
բան և և կարեք չկա ուշադրություն դարձնել նրա
վրա»: Բայց Տիմիրյազեվն ընդհատեց նրա բացատրու-
թյունն ու դուրս յեկավ: Հաջորդ որը նա պաշտոնա-
կան դիմում տվեց հեռանալու մասին:

Այդ վախեցրեց վոչ միայն հոգաբարձվին: Ինքը
մինիստր Վաննովսկին անհանգիստ եր և շփոթված, --
Տիմիրյազեվի հրաժարականի լուրն արդեն տարածվել
եր համալսարանում, և «խաղաղեցման» վոխաբեն
պետք եր սպասել նոր պոռթկում: Իսկ ժամանակներն
առանց այդ ել այնպես եյին, վոր ժամ առ ժամ սպա-
սում եյին, թե ոեկտորի բնակարանը դրոհի կենթար-
կեն: Ամեն տեղ վոստիկաններ և լրտեսներ եյին դըր-
ված, վորոնք թագնվում եյին ծածկերի տակ:

Յեթե վոչ դայլի ատամ, ալա աղվեսի սո՛չ,
գնացին քծնելու գրադիրները...

Նեկրասովի այս տողերը, վոր այնքան սիրում եր
է լիմենտ Արկադյելիչը, լրիվ տալիս են և՝ հողաբարձ-
վի, և՝ մինիստրի վարմունքը: Յեվսա, և մյուսն սկսե-
ցին կլիմենտ Արկադյելիչին համոզել, վոր «ի ցույց
դնելը»— այդ, գիտե՞ք ինչ, վոչ մի ընդհանուր բան
շունի նկատողության հետ: և առհասարակ, ինչպես
հոգաբարձուն գրել եր Տիմիրյազեվին.— «Այդ գործը
յեթե կուզեք, կարելի յե բոլորովին մի կողմ գցել,
քանի վոր մինիստրն այդ արժանի չի համարում մեծ
ուշադրության»:

Սակայն իզուր եյին ստորանում ու քծնում յերկու
«գրադիրները»: Տիմիրյազեվը վճռականորեն հրաժար-
վում եր հետ վերցնել հրաժարականի մասին տված իր
հայտարարությունը:

Յեվսա միայն այն բանից հետո, յերբ Փակուլտետի
պրոֆեսորները լրիվ կաղմով այցելեցին կլիմենտ Ար-
կադյելիչին իր բնակարանում և յերկար ու ջերմորեն
խնդրեցին նրան վերադառնալ,— նա վերջապես համա-
ձայնվեց այդ բանին:

Սակայն նա վոչինչ չգիջեց:

Իր վերադարձի առթիվ հոգաբարձվին գրած՝ նա-
մակում Տիմիրյազեվն զգացնել տվեց, վոր ինքն ա-
ռաջվա նման պնդում ե իրենը, վոր «մեր համալսարա-
նական յերիտասարդության աղադան նշանակալի չա-
փով կախված ե պրոֆեսորների բարերար աղղեցու-
թյունից», միայն թե «իրենց խոսքի մեջ ազատ խղճի
թելադրանքով ղեկավարվող պրոֆեսորների բարերար
աղղեցությունից»:

Բոլոր Փակուլտետներից ուսնաողներն հավաքվել
եյին դիմավորելու իրենց կատաղիին և Անկաշորին: Հսկայական լսարանն այնպես լիքն եր, վոր ուսանող-
ները յերեք-յերեք նստել եյին իրար ծնկների վրա: Ամֆիթատրոնի նստարանների միջև յեղած տարածու-
թյունները լիքն եյին մարդկանցով: Ծափահարելու
համար մարդիկ ստիլված եյին ձեռները բարձրացնել
ուլիններից վերեվ — այնքան նեղվածք եր:

Ներս մտավ կլիմենտ Արկադյելիչը։ Հուզված,
ներփային, դեմքի նուրբ գծադրությամբ, բարակ և
յերկար, ճերմակող մորուսով, — ճիշտ այնպես, ինչպես
յերեւմ ե այս դրքում տպված նկարի մեջ, ուր նա
բերեա ե դրել, — նա արագ ու թեթև քայլվածքով
դաց, ինչպես միշտ, իր դասախոսական յերկար սեղա-
նի մոտ։ Ծափահարությունները յերկար ժամանակ չե-
յին դադարում։

Նա կանդ առավ և իր յերկար, նիհար մատների
ծայրերով թեթևակի հենվեց սեղանին։ Թովում եր, թե
ամեն ինչ այնպես ե — ինչպես միշտ։ Հիմա կսկսի դա-
սախոսությունը . . . Սկզբում թեթևակի կակագելով . . .
կազա ավելի ու ավելի տաքանալով, մինչև վոր նրա
դասախոսությունն արձանագրող ուսանողներից ամե-
նահամառն անգամ մի կողմ կոնի մատիտը, վորակեողի
այլևս վոչնչի մասին չմտածի և վոչ մի գրել այլն և
չկտրի նրան լսելու վայելքից, վորակեողի հափշտակ-
ված նրա բերանից լսի ու լսի արձուվ հաղեցված
ոքանչելի պոեման, վորը կոչվում ե «բույսերի Փի-
փոլոգիա»։


Բայց նա լուռ կանդնել եր, վորակեազի խոսելուց
առաջ գոնե մի փոքր խաղաղացնի հուզաւմը։ Վոչ,
հիմա դասախոսության մասին մտածելու անգամ կա-
րեք չկա։

Նա լսարանի վրա բարձրացրեց իր խոշոր, ճառա-
գայթող աչքերը — թշնամիներին սարսափ աղղող տի-
միրյագեվյան յերկնադույն աչքերը։ Բայց այժմ նրանք
փայլում եյին միմիայն գգվանքով, ուրափությամբ և
նրանց հետ հանդիպելու հուզմունքից, վորոնց հետ
չեր ել կարծում, թե կհանդիպի, և վորոնց համար
այնքան շատ եր տվել իր հոգու կրակը։

Բարձրացրեց նիհար ձեռքը։ Ուզում եր ինչպո-
րան ասի։

Բայց ծափահարությունների վորոտը և ծաղիկնե-
րի անձրւը նրան հնարավորություն չտվին խոսելու։

Այն ժամանակ նա, լուռ ու զգացված, ձեռքերը
մեկնեց լսարանին . . .



Կուրսերի պատղամավորները, հուզմունքից ընդ-
հատվող ձայնով կարդացին կլիմենտ Արկադյելիչին
ուղղված իրենց վողջույները։ Նա արցունքն աչքերին

գրկեց և համբուրեց ուսանող պատգամավորներին:

Ապա, յերբ ամեն ինչ լոեց, Տիմիրյաղեվն սկսեց խոսել:

— Պարոնայք... — ասաց նա հուզված, — յես յեկել եմ այստեղ բույսերի Փիզիոդիֆայի դասախոսություն կարդալու, բայց տեսնում եմ, վոր հարկավոր եմի վորեւ ավելի ընդարձակ բան ասել: Յես միշտ համոզված եմ յեղել Զեր իմ նկատմամբ տածած համակրանքի մեջ, բայց այն, ինչ այժմ ե տեղի ունենում, յես յերբեք չեմ սպասել... իմ պարտքն եմ համարում խոստվանել Զեր առաջ: Յես դավանում եմ յերեք առաքինություն՝ դրանք են՝ հավատը, հույսը և սերը: Յես սիրում եմ գիտությունը, վորպես ճշմարտության համելու միջոց, հավատում եմ ոլրոգրեսին և հույս դնում եմ Զեղ վրա:

Նրա այդ խոսքերը նորից ծածկվեցին ծափահարություններով:

— Այն բնական հուզմունքը, վոր զգում եմ յես, — դողացող ձայնով վերջացրեց Տիմիրյաղեվը, — խանգարում ե ինձ այժմ դասախոսությունն սկսելու:

Նա լոեց և շտապ քայլերով հեռացավ կողքի դըռնով: Լսարանը վողելորության աղմուկով և ծափահարություններով մոլեզնեց նրա հետեւից:

Պատանի և յերախտապարտ սրտերն այդպես հատուցեցին Տիմիրյաղեվին այն իրեն համար սարսափելի զոհաբերության դիմաց, վոր նա անուած եր առանց տատանվելու՝ հեռանալով համալսարանից և թողնելով իր իսկ ստեղծած լարորատորիան հանուն այն հարյուր ութսուներեքի:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

Այդ նույն հարյուր ութսուներեքի վեճակով այդ ժամանակ մտահոգված եր նաև Վլադիմիր Իլյիչ Լենինը:

Նա վտարանդիության մեջ եր արտասահմանում: Ահա թե ի՞նչ եր գրում նա «Խոկրա» թերթում, իր «183

նւանողների զինվորության տալլ»*) հոդվածում:

«Մեր կրթված դասակարգերի լավագույն ներկայացուցիչներն ապացուցեցին և կառավարության կողմից տանջանքի յենթարկված հազարավոր հեղափոխականների արյունով հաստատեցին բուրժուական հաստրակության փոշին իրենց վոտքերից թոթափելու և սոցիալիստների շարքերում գնալու իրենց ընդունակությունն ու պատրաստակամությունը: Յեվ սոցիալիստի կոչմանն արժանի չե այն բանվորը, վորը կարող ե անտարբերությամբ նայել այն բանին, թե ինչուս կառավարությունը զորք ե ուղարկում ուսանող յերիտասարդության դեմ: Ուսանողը ոգնության և գնացել բանվորին, — բանվորն ել իր հերթին պետք ե ոգնության գա ուսանողին: Կառավարությունն ուղղում ե հիմարացնել ժողովրդին, հայտարարելով, թե քաղաքական բողոքի ձգտումը մի դատարկ անկարգությունն է: Բանվորները պետք ե հրապարակով հայտարարեն և բացատրեն ամենալայն մասսաներին, վոր այդ կեղծիք ե, վոր բռնության, անկարգության, սանձարձության իսկական ոջախը —ուսանողին ինքնակալ կառավարությունն ե, վոստիկանության և չինովնիկների ինքնիշխանությունը»:

Այդպես առաջին անգամ իրար ձայնակցեցին Լենինը ու Տիմիրյաղեվը:

Հիշելով նրանց վերջին «հանդիպման» մասին, չի կարելի մոռանալ նրանց այդ առաջին «հանդիպումը»: Դեռևս բոլշևիկներին չճանաչած, դեռևս շատ բաների մասին դատելով անողնական, միամիտ կերպով, ինչպես յերազող, Տիմիրյաղեվն այնուամենայնիվ հարյուր ութսուների գործում և մտածեց, և վարվեց, և արտահայտվեց բոլշևիկի պես:

ԳՈՐԿԻՆ, ՏԻՄԻՐՅԱՋԵՎԸ, ՊԱՎԼՈՎԸ

Միևնույն դարաշրջանի հզոր և առաջավոր մտածողների միջև միշտ ձգտում ե զոյլություն ունենում,

*) «Խոկրա» № 2, 1901 թ. փետրվար:

վորը վերջիվերջո նրանց բերում հասցնում է իրար և
անխուսափելիորեն միացնում է նրանց աշխատանքը,
թեկուղ նրանցից մեկը դիտնական լինի, իսկ մյուսը
քաղաքագետ կամ դրոդ:

Դեռևս 1911 թվին, առանց իրար հետ ծանոթ լի-
նելու, Մաքսիմ Գորկին և Տիմիրյազեվը ձայնեցին
միմյանց:

Տիմիրյազեվն իր «Բույսերի կյանքը» դրքի առա-
ջաբաններից մեկում հպարտությամբ և առանց իր
ուրախությունը թագնելու դրում եր. «... Բոլորու-
թին նորերս Մաքսիմ Գորկու հոգվածում, վորն այն-
քան ջերմորեն հանդես է դալիս պաշտղանելու յերի-
տասարդ սերունդը ժամանակակից գաղափարների ա-
ռամեն տեսակի վատառողջ հոսանքներից, յես կարդա-
ցի հետեւյալ տողերը. «Զարմանում ես, թե Խերսոնի
նահանգի Սնեղովո ավանում, կամ Պերմի Ռոստով վրո-
ւութիւն գիտեն Տիմիրյազեվին: Հաճախ են հարցնում
նրա «Բույսերի կյանքը» դրքի մասին: Մտածում եմ,
թե մի՞թե իմ գիրքն արդեն ընկել է նրա Նիլի*) — յե-
սիտասարդ առողջ սերնդի այդ ներկայացուցչի ձեռ-
քը...»

Դրանից հինգ տարի անց Գորկին և Տիմիրյազեվը
պատահեցին յերես առ յերես:

Պատահեցին և անքակտելի դաշինք կնքեցին հա-
մաշխարհին պատերազմի տարիներին: Յեվ մեծ դե-
ղարվեստագետի ու մեծ գիտնականի այդ դաշինքը
սարսափելի յեր նրանց համար, ովքեր Տիմիրյազեվի
տրտահայտությամբ, «արյունը վեր են ածել վոսկու»,
— սարսափելի յեր կապիտալիստների համար:

Ռուսաստանում Տիմիրյազեվն առաջիններից մեկն
էր, վոր ճանաչեց Իվան Պետրովիչ Պավլովի հանճարը:
Այդ դեռևս այն ժամանակ եր, յերբ իր փորձերի և
աշխատությունների մասին Պավլովի նախնական հա-
ղորդումները (աշխատանքներ ու փորձեր, վորոնք հե-
տադայում նրան հոչակեցին վողջ աշխարհում) միայն

ծաղրանք կամ վայրենի թշնամանք եյին առաջ բերում
գիտնականների մեջ:

Սակայն Պավլովը նույնպես սիրում և դնահատում
էր Տիմիրյազեվին: Դժվար թե մեկ ուրիշն այնքան
հիանալի, ուժեղ և համառոտակի — իսկական «պավ-
լովյան» ձեռվ — կարողանար մեղ տալ Տիմիրյազեվի
դեմքը:

«Կլիմենտ Արկադյեվիչ Տիմիրյազեվն ինքը, ինչ-
պես և նրա ջերմ սիրած բույսերը, վողջ կյանքի ըն-
թացքում ձգտել և դեպի լույսը, կուտակելով իր մեջ
մտքի և վեհ ճշմարտության գանձերը: Նա ինքն ել
հենց լույսի ազբյուր եր բազմաթիվ սերունդների հա-
մար, վորոնք կյանքի դժվար պայմաններում ձգտում
են դեպի լույս ու գիտություն և ջերմություն ու ճշ-
մարտություն են վիճուպամ»:

Այսպիս մարդկության բարձունքներում կանգ-
նածները հեռվից տեսնում և վողջունում են իրար:

ՀԱՅՐԸ ՅԵՎ ՄԱՅՐԸ

Տիմիրյազեվը միշտ ասում էր, վոր ամեն տեսակի
անարդարության դեմ պայքարելիս անհաշտ դիրք
բռնելու համար ինքն առաջին հերթին պարտական ե իր
ծնողներին — Արկադիյ Սեմյոնովիչին և Ադելախիլա-
կլիմենտյելինա Տիմիրյազեվներին:

Նրանց հիշատակին նվիրելով իր գլքերից մեկը,
նա գրում է.

«Գիտակցությանս առաջին նշույներից սկսած,
այն խավար պահին, յերբ պոետի խոսքերով ասած՝
«հայրենի հարկի տակ չեր ընկել մաքուր մարդկային-
կյանքի վոչ մի պտղարեր հատիկ», դուք խոսքով ու
որինակով ինձ անսահման սեր ներշնչեցիք դեպի ճշ-
մարտությունը և յեռացող ատելություն՝ դեպի ամեն
տեսակի, առանձնապես հանրային անարդարության
դեմ: Ձեզ եմ նվիրում այս եջերը, վորոնք ընդհանուր
ձգտումով շաղկապված են գիտական ճշմարտությա-
նը և բարոյական, հասարակայնորեն — բարոյական,
սոցիալիստական ճշմարտությանը»:

*) Նիլ-Գորկու «Մեջաններ» պիեսի հերոսն է:

ժամանակը, վորի մասին այստեղ խոսում ե Տիմիրյաղեվը, իսկապես ՚սավար ժամանակ եր ոռու ժողովրդի կյանքում: Կիմինտ Տիմիրյաղեվը ծնվել է 1843 թվին: Նրա մանկությունն անցել է Նիկոլայ 1-ի, ինչպես Լեվ Տոլստոյն և անվանել «Նիկոլայ Պալկինի», և ինչպես այն ժամանակվա արտասահմանյան ժուռալներում ու թերթերում ելին գրում նրա մասին՝ «Յեվրոպայի ժանդարմի» տիրապետության վերջին տարիներում:

Նիկոլայ առաջինը վախեցած եր ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխության ահեղ որինակից, վորի ժամանակ թագավոր Լյուդովիկ 16-րդը և թագուհի Մարիա-Անտուանետուան ապստամբած ժողովրդի կողմից մահապատժի ելին յենթարկվել: Նա ինքն իր տիրապետությունն սկսեց դեկարբիստների ապստամբության դատաստանով, ապստամբություն, վորը քիչ եր մնում Ռոմանովների վողջ դինաստիայի դահն ու կյանքն արժենար: Այդ պատճառով ել Նիկոլայ 1-ինը չքավականացավ նրանով, վոր «ոռուական պետության» սահմաններում տրորվեց հեղափոխական մտքի ամենափոքր կայծն անդամ: Նա վախենում եր, վոր այդ կայծերը «քամու թեռվ» կգան այնտեղից, արտասահմանից: Յեվ քաջ հրշեցապետի նման նա իր «Հրշեջ խմբով» նետվում եր ամեն տեղ, ուր հեղափոխական հրդեհի վտանգ եր տեսնում:

1848 թվին հունդարական ժողովուրդը, հերոս հեղափոխական կոչուտի առաջնորդությամբ ապստամբեց կայսր Ֆրանց Իոսիֆի դեմ: Ֆրանց Իոսիֆը փախավ: Հունդարական ժողովրդական հեղափոխությունը մոտ եր լիակատար հաղթության:

Սակայն այդ ժամանակ Նիկոլայ առաջինը՝ Հունդարիայի վրա շարժեց հսկայական ընտիր մի բանակ: Հունդարացիք կովում ելին կատաղի կերպով: Սակայն նրանք մի բուռն ելին և գեներալ Պանկեվիչի բանակը չախախեց: Ֆրանց Իոսիֆը վերադարձավ թագուրելու: Այն ժամանակվա ուռական կառավարական թերթերն ու ժուռալներն այդ պատժիչ արշավը

հոչակում ելին վորպես ցարական զենքի մեծ, հերոսական արշավանք և չտեսնված հաղթանակ:

Հավատարիմ հպատակները ցնծության մեջ ելին: Յեկեղեցիներում չորսհակալության մաղթանքներ ելին անում:

Սակայն այդ «հաղթանակներին» բոլորովին այլ կերպ ելին վերաբերվում Տիմիրյաղեվների ընտանիքում—այդ հին կալվածատիրական տանը, ուր թվում եր, թե պետք ե տոննելին ցարական հաղթանակը: Ահա թե ինչպես և հիշում այդ ինքը՝ Կլիմենտ Արկադյեվիչը (1848 թվին նա հնդամյա յերեխա յե յեղել):

«Յես գիտակցաբար ավելի քան քսան պատերազմ եմ ապրել, և ահա դրանցից ամենառաջինից — 1848 թ. հունդարական արշավանքից—յերկակի տպավորություն եմ ստացել: Այն ժամանակ, յերբ շրջապատներում բոլորն ել ցնծության մեջ ելին հաղթանակների առթիվ, տանը յես հորիցու և մորիցու լսում ելի դժբախտ հունդարակերպութիւնը ու նրանց հերոս կոչուտի մասին և կենդանի կերպով յերկու նկար եմ հիշում լոնդոնյան պատկերներից: մեկը պատկերում եր պարտվածների հերոս կոչուտի հաղթական մուտքը Լոնդոն, իսկ մյուսը դույց եր տալիս, թե ինչպես լոնդոնի հայտնի գարեջրադործարանի (Բարկլի և Պերկինս) բանվորները փայտերով ծեծում են հաղթողների հերոս տիրահոչակ գեներալ Հայնաուտին: Այդ վոչ պակաս քան յոթանասուն տարի սրանից առաջ եր: Այդքան վաղ իմ մեջ ըուն գրած սկեպտիկական միտքն ակամայից յերեան եր գալիս հետագա յուրաքանչյուր պատերազմի ընթացքում»:

Տիմիրյաղեվների ընտանիքում այդ 48 թվի մասին պահպանվել ե նաև հետեւյալ ավանդությունը:

Ինչպես և լինում՝ մի անգամ զրուցակիցներից մեկն ուզում ե խոսք դուրս քաշել Արկադյի Սեմյոնովիչից:

— Ասացեք, ի՞նչպիսի կարյերա յեք դուք պատրաստում Ձեր չորս վորդիների համար:

Արկադյի Սեմյոնովիչը կատակի ավեց: Բայց

Հյուրը ձեռք չեր քաշում։ Այն ժամանակ Սրբագի
Մեմյոնովիչն ասաց նրան.

— Ինչպիսի կարյե՞րա։ Ահա՝ թե ինչպիսի. Հինդ
Հատ կապույտ բլուզ եմ կարելու, ինչպիսին հագնում
են ֆրանսիական բանվորները, հինդ Հատ հրացան և
գնելու և մյուսների հետ գնալու յենք Զմեռային սկա-
լատի վրա։

Տիմիրյագեվի հայրը պարծենում եր այն բանով,
վոր ինքը ծնվել ե հենց այն տարին, յերբ պայթեց
Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունը։
Այդ հեղափոխության ամենահականավոր գործիչներից
մեկի՝ Ռոբերտյան մասին, վորի անձնավորությունն
ամեն կերպ զբարդանքի յեր յենթարկվել բուրժուա-
կան պատմաբանների կողմից, — Արկագիյ Սեմյոնո-
վիչը հաճախ եր խոր համոզմունքով ասում փոքրիկ
Կլիմենտին։

— Աղնիվ մարդ եր նա, մաքուր, սուրբ մարդ
եր…

«Յես միշտ տարվում եյի պատմությամբ, — հի-
շում և իր դպրոցական մանկության որերի մասին Կլի-
մենտ Արկագիյեվիչը։ Յեվ առանձնազետ իմ ուշադրու-
թյունը դրավուամ եյին ճշմարտության և ազատու-
թյան համար մարտնչողների տրագիկորեն վսեմ կեր-
պարանքները, վորոնք ճակատագրական կերպով զոհ
դնացին այդ պայքարին — Գրակոսները, Հուսը, Մո-
րը, Բրունոն, Ռոբերտյանը… մինչև այդ տխուր ցու-
ցակը մեր աչքերի առաջ ավարտող ժորեսն ու Կնդ-
մենտը»*։

*Գրակոսները — Տիմիրյոսը և Կայոսը, հոռմայեցի յեղ-
քայրներ, ապրում եյին մեր թվագրությունից առաջ 2-րդ դա-
րում։ Յերկուսն ել ընկան ժողովրդի համար մղված պայքա-
րում, սպանվեցին հոռվմեյական ավագանիների (պատրիկների)
ձեռքով։

Հուս Յան (1369—1415) — չեմ ժողովրդի առաջնորդ։ Պայ-
քարում եր բարձր հոգեորականության և կաթոլիկ յեկեղեցու
դեմ։ Այրվեց խարույկի վրա Հուսի պատի և կաթոլիկական

Կլիմենտ Արկագիյեվիչի մայրը — Աղելաիդա Կլի-
մենտյեվնան — անդլուհի յեր։ Բայց նրա ընտանիքը
վաղուց եր ապրում Ռուսաստանում։

Աղելաիդա Կլիմենտյեվնայից ել իր վորդին ստա-
ցավ նուրբ գեղարվեստական դաստիարակություն,
վորով նա հետագայում այնքան աչքի յեր ընկնուամ
Համալսարանական գիտնականների մեծամասնության
մեջ, գիտնականներ, վորոնք հաճախ միակողմանի
եյին, «ինչպես Փլյուսը» (լոգուռուցք)։

Ինքնըստինքան համկանալի յե, վոր Կլիմենտ Ար-
կագիյեվիչի հետագա աշխատանքներն արվեստներն ու-
սումնասիրելու բնադրավառում — անդադրում բազմա-
գարդապետների ու քահանաների կոնստանցայի ժողովի վորոշ-
չամբ։

Մոր Թովմաս (1478—1535)։ անդլիական մտածող-ուսուողիստ։
Գրել և «Ուտոպիա» հայտնի գիրքը, վորտեղ աշխատել և պատ-
կերացնել, թե ինչպիսին պետք ե լինի գալիք կոմունիստական
հասարակությունը։ 1535 թվին մահապատճի յենք-արկվեց Հեն-
րիկ Տրուի կողմից։

Բրուն Զորդան (1548—1600)։ գիտնական մտածող։ Հոռ-
քեական հոգեորականության կողմից այրվեց խարույկի վրա նրա
համար, վոր չցանկացավ հրաժարվել իր գիտական հայացքնե-
րից, վորոնք հակասում եյին յեկեղեցու ուսմունքին։

Ռոբերտյան Մաքսիմիլիան (1758—1794)։ Փրանսիական բուր-
ժուական մեծ հեղափոխության գործիչ, այն հեղափոխության,
վոր տապալեց թաղավորի և աղնվականության իշխանությունը։
Մահապատճի յենք-արկվեց հետադիմականների կողմից։

Ժորես Ժան (1859—1914)։ Փրանսիական սոցիալիստ։ իմպե-
րիալիստական պատերազմի կատաղի հակառակորդ։ Սպանվեց
կապիտալիստների կողմից ուղարկված վարձկան մարդասամանների
ձեռքով։ Կապիտալիստները վախենում եյին, վոր Ժորեսը բանվո-
րությանը դեմ կհանի նախապատրաստուղ պատերազմին։

Կեզմենտ (1864—1916)։ իմպերիալիստական պատերազմի ժա-
մանակ առաջնորդում եր իւլանդագիների ազստամբությունն
Անդլիայի ճնշման դեմ։ Մահապատճի յենք-արկվեց անդլիական
կառավարության կողմից։

կողմանի ընթերցանությունը, այցելությունն աշխարհ-
հի լավագույն պատկերասրահները, — այդ բոլորը
զարդացրեց և լիակատար դարձրեց ընտանեկան դաս-
տիարակությամբ գցված սաղմերը:

Պրոֆեսոր Տիմիրյագեվը նկարչության լավագույն
գիտակներից եր: Կլանված լինելով այնպիսի հատուկ
հետազոտություններով, վորոնք նրան համաշխարհա-
յին հռչակ բերին, դրա հետ մեկտեղ նա ժամանակ
գտավ իր սիրած անդլիական նկարիչ Տերների մասին
յեղած գիրքը թարգմանել ոռուերեն և առաջարան
գրել նրան:

Ի միջի այլոց անգլերենը, ինչպես և գերմաներենն
ու ֆրանսերենը, Տիմիրյագեվի համար այնպես եյին,
ինչպես մայրենի լեզուն: Իր հռչակավոր կրույան
դասախոսությունը նա անգլերեն կարդաց: Արտասահ-
մանյան լեզուներ իմանալու համար նույնպես Կլիմենտ
Արկադյեվիչն իր մորն եր պարտական:

Այնուամենայնիվ չպետք է կարծել, թե նա իր հո-
րից գլխավորապես քաղաքական դաստիարակություն
և ստացել, իսկ մորից՝ գեղարվեստական:

Աղելախիղա Կլիմենտյեվնան լիովին բաժանում եր
իր ամուսնու գեմոկրատական և հանրապետական տշ-
խարհայացքը և ինքն ել մեծացել եր գեմոկրատական
և հեղափոխական ընտանիքում:

ՎԱԹՍՈՒՆԱԿԱՆ ԹԱՎԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՏԻՄԻՐՅԱԶԵՎԸ

Կլիմենտ Արկադյեվիչի և մանկությունը, և պա-
տանեկությունն անցան այսպես կոչված ճորտատիրա-
կան իրավունքի սարսափելի եպոխույում:

23 միլիոն գյուղացիներ և նրանց աշխատանքը
լիովին պատկանում եյին կալվածատերերին— «տերե-
րին»:

Կալվածատիրոջը, «աղային», «իրավունք» եր տըր-
մած իր ճորտերի և նրանց կորդիների հետ վարդել
այնպես, ինչպես անասունների, իրերի հետ: Աղանկա-
րող եր բոլորովին «որինական» կերպով ծախել ճոր-
տին, գրավ դնել նրան: Կառավարական թերթերը

զարդարված եյին մարդկանց վաճառելու վերաբերյալ
այսպիսի հայտարարություններով.

«2-րդ կլարտալի 15-րդ մասում, չորրորդ Մեշ-
չանսկայա փողոցի № 111 տանը ծախվում ե մի աղ-
ջիկ, վորը կարողանում է սպիտակեղեն կարել և քար-
դահի վրա արդուկել ու ոսլայել, մասամբ ել կերա-
կուր պատրաստել: Նույն տեղը ծախվում են բրիլիան-
տի իրեր և դունավոր քարեր, նաև մատչելի գներով
լավ ցեղի ցուլ ու կով»:

Մեղավոր ճանաչված ճորտին ծեծում եյին և հա-
ճախ ծեծում մահամերձ լինելու աստիճան, վոմանց
ել «Ճակատն եյին ածիլում», այսինքն զինվորության
եյին ուղարկում, խակ նիկոլայ Լ կայսրի ժամանակ
զինվորությունը տեսում եր քսանչինդ տարի:

Վորապեսզի աղայական մատիկները չապականվե-
լին ««գյաղաների»» յերեսներին խփելուց, հենց ճորտ
արհեստավորներին ել պատրաստել եյին տալիս հա-
տուկ «յերեսծեծիչներ»: Ահա թե ի՞նչ եր ճորտատիրա-
կան իրավունքը:

Գյուղացիությունն այդ բոլոր ճնշումներին պա-
տասխանում եր ազգարակներ հրդեհելով, առանձնապես
դաժան կարվածատերերին սպանելով, բունտերով և
ապստամբություններով:

Գյուղացիների վիթխարի ապստամբությունը—
պուգաչովյան ապստամբությունը, վորը սասանեց
Յեկատերինա 2-րդի գահը, պայթեց 1773 թվին: Այդ
ապստամբությունը, ավելի ճիշտ՝ այդ գյուղացիական
պատերազմը— փրփրեց ու մոլեգնեց յերկու տարի շա-
բունակ և ընդգրկեց համարյա Ռուսաստանի կեսն ու
Արևմտյան Սիբիրը:

Պուգաչովյան շարժումը ճնշվեց գաղանաբար,
վորապեսզի և «հետազա դարերում մարդիկ սաստվեն»:
Բայց այնպես դուրս յեկավ, վոր ավելի շուտ «սաստ-
վեց» ինքն ազնվականությունը: Յեկ թեկ ճորտատի-
րական իրավունքը լիովին վերականգնվեց իր բոլոր
սարսափիներով, բայց արդեն վոչ ցարերը, վոչ նրանց

Կ. Ա. Տիմիրյագեվ—5

«Հավատարիմ ծառաները» չկարողացան մոռանալ Պու-
գաշովին:

Նրա մասին նվիրական հուշեր պահեց նաև ժողո-
վուրդն իր յերգերի և ավանդությունների մեջ: Գյու-
ղացիական հուզումները թագավորներից վոչ մեկի
տիրապետության որով չդադարեցին և ուժեղացան
հիսունական թվականների վերջերին — Սեվաստոպոլի
անհաջող կովից հետո:

Իշխող ազնվականության ամենից ավելի հեռա-
տես և խելոք ներկայացուցիչների գրվածքները լիքն
են «նոր, մի գուցե ավելի սպառնալի պուզաչովչինա-
ցի» սպասումներով և նախազուշակություններով:

Սակայն նրան, այդ նոր պուզաչովչինային, բու-
ռոն կերպով սպասում ու կանչում-հրավիրում եյին
ժողովրդի լավագույն զավակները — հեղափոխական
գրողներ՝ Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրույուրո-
վը, Գերցենը և Պիսարեվը:

Յարական կառավարությունն իրեն զգում եր
ինչպես պաշարված ամրացի մեջ: Կախաղաններն ու
քանտերն արդեն անզոր եյին կանխելու բոլորի կողմէց
նախազգացվող հեղափոխական փոթորիկը:

Վորոշվեց գյուղացիներին «ազատագրել»:

— Լավ է ազատությունը տալ վերևից, քան սպա-
սել, վոր այն վերցնեն ներքեւից, — ասում եր Ալեք-
սանդր Զրու ցարը:

Ճիշտ այլպես եր մտածում նաև մեծ իշխանուհի
Յելենա Պավլովնան: Ահա թե ի՞նչ եր գրում նա մինիս-
տըր Միլյուտինին՝ մանիֆեստը հրապարակելուց վոչ
շատ առաջ.

«Յես իմ պարտքն եմ համարում նախազգուշացնել
Զեդ, վոր ինչպես հայտնում են իմ մարդիկ, յեթե գե-
տորվարի 19-ին վոչինչ չինի, խաժամուժը հանդիս
կգա Զմեռային պալատի մոտ»:

Սակայն, միայն նոր պուզաչովչինայի յերկուղը
չեր, վոր ցարին դրդում եր գյուղացիությանն ազո-
տել ճորտական կախումից: Դրդում եր այդ անել նաև

կապիտալիստական արդյունաբերության զարգացու-
մը: Ֆաբրիկանտներին, առևտրականներին և գործա-
րանատերներին չափից դուրս հարկավոր եյին «ազատ»,
կամավոր վարձվող բանվորներ: Իսկ ճորտերի բաղմա-
միլիոն զանգվածների վրա ամուլ նատել եր աղան:

Այստեղ յերկու պարագիտների—աղայի և կապի-
տալիստի շահերը կարծես թե ընդհարվում եյին: Բայց
ցարը սիրաշահեց և' սրան, և' նրան:

«Յարական վողորմածությունը» սարսափելի խա-
բեբայություն դուրս յեկավ գյուղացիների համար:
Նոր խարդախ և խորամանկ որենքով գործը դրված եղ
այնպես, վոր գյուղացիներն ազատ արձակվելով՝ աղ-
քատիկ հողակտոր եյին ստանում: Ազատ արձակված
ճորտ գյուղացին հաճախ իր նախկին տիրոջ վոտներն
եր ընկնում և աղերսում իրեն պահել ճորտության
վիճակում, քանի թիոր «ազատության մեջ» նախկին
ճորտական ստրուկին սպասում եր ավելի դաժան տե-
րը՝ սովորական:

Այնպես գուրս յեկամի, վոր կալվածատերն ա-
ռաջվա պես մի կտոր սև հացով ամբողջովին վնում
եր իր յերեկվա ստրուկի և նրա ընտանիքի աշխա-
տանքը:

Յեվ, ի հարկե, շատ գոհ եյին գործարանատերերն
ու ֆաբրիկանտները, քանի վոր ստացան յերկար ժա-
մանակ իրենց ակնկալած՝ հողագուրկ գյուղացիու-
թյան մեջ եժան բանվորական ուժ հավաքելու հնա-
րավորությունը:

Այդպես եյին «ցարական վողորմածության» ար-
դյունքներն ու պտուղները: Յեվ նորից փոթորկեց
«Արմյազայիր*» ծովը», նորից խոռվություններ, ա-
պրատամբություններ տեղի ունեցան, հրդեհեցին ապա-
րակները, գյուղացիները տեղտեղ բռնի գրավեցին
կալվածատիբական հողերը:

*) Արմյազայիր—գյուղական կոչու չներկված կտորից կարա-
գենազգեստ, մեզ մոտ՝ չուխա:

Կառավարությունը դրան պատասխանեց պատժիչ արշավախմբերով, կախաղաններով և տաժանակեր աշխատանքի դատավարությունով:

Շուտով պատմության դասագրքերում արդեն յուրացված «զգատարար ցար» անունը փոխարիկվեց մի այլ՝ գաղտնի անունով— «կախող ցար» անունով։ Յարական «ուժորմների» թմբիլից ոթափեց նաև հասարակության կրթված մասը։ Ե'լ ավելի անողոքությամբ վերսկսվեց և՝ ընդհատակյա պայքարը, և՝ ցարական կարգերի բացահայտ ու բարձրագույն քրնադպությունը։ Ակսվեցին ուսանողական հոգում ները։ Այդպիսի հուզումներից մեկին դործոն մասնակցություն ունեցավ նաև պատանի Տիմիրյաղեկը։

Կառավարությունը մի ճեռքով քիչ-միչ զիջումներ եր շպրտում հասարակության կրթված մասին, իսկ մյուսով ուշադիր նշան բռնելով, նրա միջից ճանկում եր իր առավել վտանգավոր թշնամիներին—դուրս դուիչներին, «խառնակիչներին», ղեկավարներին, — մահապատժի յեր յենթարկում նրանց, բանաարկում եր կազմատներում, գանդաղությամբ մահացնում եր աքսորով։ Վիլյույսկում կամ Վերխոյանսկում։

Յարական կառավարությունը բարձրագույն դրայրոցի շուրջը «փիշերապահներ» եր զրել, նրանցով պաշտել եր գրականությունը, գրողներին։ Հասարակության կրթված մասի ճնշող մեծամասնության առաջ ամուր կերպով փակված եր դեպի ժողովություն ուղիղ ճանապարհ։ Հեղափոխություն բարձրացնելն անհնարին եր։ Խավար ու ցրված բազմամիլիոն գյուղացիությունը զբկված եր ղեկավարությունից։ Ֆարիկա-գործարանական անվում, դեռ նրա ժամանակը չեր յեկել՝ դառնալու չքավորական և միջակային գյուղի տուածնորդող ու հաղթական դաշնակիցը՝ ընդգեմ ցարի, ազնվականության, բուրժուազիան և կուլակության։

Այնուամենայնիվ համալսարաններն ամուր եյին մնում։ Նրանք ավելի ու ավելի եյին դառնում այն

կենտրոններն, ուր կուտակվում ու հասունանում եյին պահեստի ուժերը՝ գալիք հեղափոխության համար։ Կառավարությունը մոլեգնում եր։ Բայց արդեն հարմար ժամանակակը ձեռքից բաց եր թողնված— ժանդարմոններս այլևս անկարելի յեր կանգնեցնել մտքերի ազատագրման շարժումը։ Զե՞ վոր համալսարանը վրակ դպրոց չեր ազնվականության համար,— այն լցրել եյին «ռազնոչինները», այսինքն վոչ-աստիճանավոր և վոչ-մեծազարմ յերիտասարդությունը։ Այդ յերիտասարդությունը ձգտում եր ղեպի համալսարանները, ինչպես ղեպի ղինանոցները՝ ղենք վերցնելու համար։ Իսկ զենքը նա տեսնում և գտնում եր գիտության մեջ։ Վոմանք խորանում եյին հասարակության և պետության վերաբերյալ գիտության մեջ և այստեղ զենք եյին գտնում այն ժամանակ Ծուսաստանում տիրող պետական և հասարակական կարգերի ղեմ։ Գրանում եյին այդ զենքը, սրում ու պահում եյին առժամանակ։ Ուրիշներն ազահությամբ ձգտում եյին ղեպի բնական գիտությունները և դառնում եյին... անսատվածներ։

Բացի ուսանողական հուզումների ղեմ պայքարելու զուտ վոստիկանական միջոցներից, կառավարությունն աշխատում եր բարձրագույն և միջնակարգ դպրոցները վորքան կարելի յե քիչ թողնել նրանց, ում նա արհամարհանքով անվանում եր «խոհարարի յերեխաներ»։

Այդպես ցարական կառավարությունը, ինչքան իր ուժերը ներում եյին, ժողովրդին հեռու յեր պահում գիտությունից։

Սակայն համալսարանն այնուամենայնիվ մնում եր «քաղաքականորեն անբարեհույսների» ձեռքին, վորում զինանոց։

ՄՏՔԵՐԻ ՏԻՐԱԿԱՆԵՐԸ

Բացի համալսարաններից, վաթուանական թվականներին մի ամրոց ել կար, ուր բուն դրած մի բուռն

Ժարդիկ յերկար ժամանակ սպառնալիք ու յերկյուղ
եյին ցարի և իշխող գասակարգերի համար:

Այդ միջնաբերդը գրականությունն եր: Իսկ այդ
մի բուռը խիզախներին կարճի յե թվել անուն-անուն:
Գրող-հեղափոխականների գլուխ եյին կանգնած Զեր-
նիշելվակին, Դոքրուլյուքովը, Պիսարեվը և արտասահ-
մանից՝ Գերցենը:

Նրանց նախորդը մեծ քննադատ-հեղափոխական
Վիսարիոն Բելինսկին եր: Նրան նույնպես, ինչպես և
հետագայում Տիմիրյազեվին, կատաղի եյին կոչում—
կատաղի Վիսարիոն:

Գերցենն ապրում եր տարագրության մեջ: Այդ
պատճառով ել նա ամբողջ կոկորդով մեկ կարող եր
ասել վողջ ճշմարտությունը ցարական կառավարու-
թյան մասին: Բայց նրա հեղափոխական յերկարա-
թաթերթը—«Կոլոկոլը» Ռուսաստան կարող եր ընկ-
նել միայն կոնտրաբանդ ձեռով:

Զերնիշելվակին, Դոքրուլյուքովը և Պիսարեվն աս-
րում եյին Ռուսաստանում: Յեվ չնայած Ռուսաստա-
նում գրաքննությունը մոլեգնում եր, բայց և այնպիս-
նրանց հեղափոխական աշխատությունները ձեռագիր
կամ ընդհատակյա հրատարակությամբ յերիտասար-
դության սեփականությունն եյին դառնում:

Գրող-հեղափոխականներն իրենց աշխատություն-
ներում ստիպված եյին դիմելու հատուկ, այսպես ա-
սած «յեղոպոյան» լեզվի, վորն այդպես և կոչում
էին հոգնական առակախոս Յեղոպոսի պատլին: Յե-
ղոպոսը ստրուկ և յեղել, բայց մեծազարմ և հարուստ
մարդկանց անողոք ճշմարտությունը խորամանկու-
թյամբ ասել և առակների ձեռով:

Յեվ Զերնիշելվակին, և՝ Դոքրուլյուքովը, և՝ Պի-
սարեվն իրենց հողվածներում հաճախ եյին ստիպված
լինում «Յեղոպոսի լեզվին» դիմելու: Վաթսունական-
թվականների ուսանող յերիտասարդությունը հաստատ-
համոզած լինելով, վոր իր մեծ սասուցիչների գրչի
տակից կարող և միմիայն անվեհեր, հեղափոխական

Ճշմարտության խոսքեր դուրս գալ, առանց դժվարու-
թյան նրանց աշխատությունները կարդում եր այն-
պես, ինչպես հարկն եր:

Այսպես, որինակ, Դոքրուլյուքովը 1860 թվին
դանվելով իտալիայում և ուսումնասիրելով այստեղի
պետական գործերը, սկսեց Ռուսաստան հողվածները
ուղարկել իտալիայի մասին: Յեվ այդ հողվածները
տպվում եյին: Յեվ ինչո՞ւ չպիտի տպվեյին, քանիվոր
այդ հողվածներում վոչ մի բառ չկար ուսական կայ-
սեր, ուսական ազնվականության և ուսական գյու-
ղացու մասին: Այդպես եր մտածում գրաքննիչը:

Սակայն այլ կերպ եր մտածում մեծ քննադատը:
Նա գիտեր իր ընթերցողին, գիտեր, վոր իր հողվածը
ճիշտ կկարդան:

Յեվ նա մտրակում եր «ոտար ցարերին»—Բուրբոն-
ներին, հաստատ կմանալով, վոր իր յուրաքանչյուր
հարվածը դիպում և Ռումանովների յերեսին: Իտա-
լիայի գյուղացիական հեղափոխությանը նախադրու-
շացնում եր սխալներից, համոզված լինելով, վոր
գրանից դաս կառնեն Ռուսաստանի հեղափոխական-
ները:

Զերնիշելվակին, Դոքրուլյուքովը, Պիսարեվը հե-
ղափոխական յերիտասարդության մտքի տիրակալներին
եյին վաթսունական թվականներին:

Մեր նշանակոր գիտնականը, ակադեմիկ իվան
Պետրովիչ Պավլովը, միշտ խոր հուզունքով եր հի-
շում այդ որերը, յերբ ինքը և իր յեղբայրները սեմի-
նարիտաներ եյին:

Ամսագրի յուրաքանչյուր գրքի համար, ուր տըպ-
ված եյին լինում Զերնիշելվակու կամ Պիսարեվի հոդ-
վածները, սեմինարիտաները հերթի եյին կանգնում:

Պավլովը յեղբայրները սովորաբար բոլորից առաջ
եյին լինում:

— Բայց յերեմն, ի՞նչ արած, ստիպված կռվով
եյինք ձեռք բերում գրքույկը, — ծիծաղելով հիշում
եր իվան Պետրովիչը:

Յեվ կլիմենտ Արկադյեվիչ Տիմիրյաղեվին եւ չեր կարողանում առանց խորը հստգմունքի հիշել վոթոր կալի վաթսունական թվականները — իր պատանեկության տարիները։ Նա սիրում եր վաթսունական թվականներն անվանել «ռուսական վերածննդի» տարիներ։

Բայց և այնպես, վորքան ելուժեղ լինելին Զերնիշեվսկու, Դոբրոլյուրովի, Պիսարեվի «վաթսունականների» սերնդի այդ պայծառ ուղեցույց համատեղության դադարները, — այնուամենայնիվ նրանց ուշադիր ի վիճակի չեր հաղթահարելու Ալեքսանդր Հ-րդ «Կախողի» տիրապետության սարսափելի դիմեր վախարը։

Դոբրոլյուրովին ու Պիսարեվը կյանքից զրկվեցին անժամանակ, համարյա պատանի հասակում*): Հեռավոր յակուտական տայգայում մարեց «աչքից ընկած գիտության վառ ջահը» — Նիկոլայ Գավրիլովիչ Զերնիշեվսկին։ Նա մարեց այնտեղ, թեև չմեռավ։ Միայն հիվանդ ծերունի դարձած՝ վերադարձավ նոյակուտական աքսորից, ուր մեծ հեղափոխականն ու գիտնականը վոչ միայն կտրված եր մարդկանցից, այլ և զրկված եր աշխատելու բոլոր հնարավորություններից։

Յեվ այնուամենայնիվ սխալեցին և՛ ցարը, և՛ ցարական սպասավորները, յերբ կարծեցին, թե այդ մարդկանց կործանումով վորբացավ հեղափոխական յերիտասարդությունը և զրկվեց առաջնորդներից ու զենքից։

Վո՞չ։ Արդեն յերիտասարդությունն առաջնորդներ ունել, առաջնորդներ, վորոնց նմանը մարդկությունը դեռ չեր տեսել։

Վո՞չ։ Արդեն հեղափոխականների ձեռքին կար

յերկու ամեն ինչ կործանող հզոր զենք։ Այն ժամանակ, վաթսունական թվականներին, առաջավոր, հեղափոխական յերիտասարդությունը դեռ սովորում երայդ զենքերի հետ վարվելու յեղանակը։

Անցավ ընդամենը մի տասնյակ տարի, և այդ զենքերի առաջին ծանր հարվածներից հիմքից ցնցվեցին կայսրների ու թագավորների գահերը և համաշխարհային կրոնների փառահեղ տաճարների կամարները։

Այդ առաջնորդներն եյին ՄԱՐԴՍԼ և ԴԱՐՎԻՆԸ։ Զենքերը — մարքսիզմն ու դարվինիզմը։

*). Ն. Ա. Դոբրոլյուրովի մեռավ 25 տարեկան հասակում, հետո «ուժորմների» տարին, 1861 թվին։ Ա. Ն. Պիսարեվը ըրում խեղավեց 1868 թվին։

նիզմով, զեկավարվելով Լենինի և Ստալինի ձեռքով,
պրոլետարական հեղափոխությունը հաղթանակեց
Ռուսաստանում:

Աշխարհի մեկ վեցերորդ մասը դարձավ հզոր և
թշնամիների համար ահարկու սոցիալիստական պե-
տություն:

Հեռու չի այն ժամանակը, յերբ մնացած հինգ
վեցերորդը նույնպես կղառնան հաղթանակած սոցիա-
լիզմի յերկրներ:

Այժմ մարքսիզմն ամուր տեղ և գրավել յուրա-
քանչյուր գիտակից բանվորի սրտի խորքում:

Բուրժուազիայի տիրապետության համար խոր-
տակիչ եյին նաև յերկրորդ հեղափոխական ուժի-
դարվինիզմի հարվածները:

Քսաներորդ դարի մեծագույն գիտնականներից
մեկը՝ Դյուրուա-Ռեյմոնը այսպես ե ասել դարվի-
նիզմի մասին.

«Այդ մի պայմանուն եր, վորովիսին գեռ չեր տեսել
գիտությունը, պայմանուն, վորն այնքան յերկար նա-
խապարաստվել եր և այնպես անսպասելիորեն վրա
հասավ, այնքան լուռ տակը դրվեց և այնքան մահա-
րեր հարվածեց:

Իր կատարած կործանման չափերով և նշանակու-
թյամբ, այն արձագանքով, վոր առաջ բերեց մարդ-
կային մաքի ամենահեռավոր մարզերում, այդ իր
նմանը չունեցող գիտական սխրագործություն եր»:

Մարքսը և Դարվինը՝ գիտական հեղափոխական
տաքի այդ յերկու հսկաները՝ ձեռք-ձեռքի տված
աշխատեցին հին աշխարհի կործանման վրա, թեև
նրանք վոչ մի անգամ չհանդիսեցին իրար, չնայած
վոր քսան տարի չափազանց մոտ հարեանության մեջ
եյին ապրում:

Դառնից, վորտեղ անմեկին կերպով ապրում եր
«դառնյան մենակյացը»՝ Դարվինը, մինչև Լոն-
դոն, ուր ապրում եր Մարքսը, յեղած-չեղածն ընդա-
մենը մի ժամվա ճանապարհ ե:

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՅԵՐԿՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՁԱՅԻՆ ՈՒԺ

Մարքսիզմը կարլ Մարքսի հեղափոխական ուսու-
մունքն է, վորը խորացրել և կենսագործել են նրա
յերկու մեծ աշակերտները — Լենինը և ՍՏԱԼԻՆԸ:

Մարքսն առաջինը բացատրեց, թե ինչպես են ա-
պահացել և հետապայում զարգացել մարդկային հա-
սարակություններն ու պետությունները: Նա ապա-
ցուցեց, վոր բուրժուական պետությունը ծառայում
է աշխատավորությանը հարստահարելու համար, և
այդ պատճառով ել բանվորությունը վոչ մի կերպ չի
կարող հաշտվել բուրժուազիայի հետ, կապիտալիստ-
ների հետ, այլ միայն դաժան և անողոք դասակարգա-
յին պայքար պիտի մղի նրանց դեմ:

Բացի դրանից, Մարքսն ապացուցեց, վոր բանվոր
դասակարգն անխուսափելիորեն կտապալի բուրժուա-
զիային և պրոլետարիատի դիկտատուրայի միջնորդ
մարդկությանը կտանի անդասակարգ հասարակու-
թյան պայծառ ու յերջանիկ աշխարհը:

Մեր ժամանակներում վոչ մի կարիք չկա բացա-
տրելու, վոր Մարքսն իրավացի յե յեղել, այնպես,
ինչպես անհրաժեշտություն չկա ապացուցելու, թե
ինչքան սարսափելի, ամենակործան ուժ դուրս յեկալ
նրա ուսմունքը բանվոր դասակարգի ձեռքին:

Պատմությունն ընթացավ այն ուղիներուի, վոր
նախատեսել եր Մարքսը: Զինված մարքսիզմով-լենի-

Սակայն նրանք բարձր ելին գնահատում մեկը ժյուսի աշխատությունները:

Մարքսը միանգամից Դարվինի ուսմունքը բնորոշեց վորպես մատերիալիզմի, հետևապես և համաշխարհային հեղափոխության մեծ ոժանդակ ուժ։ 1860 թվին նա գրեց իր ընկեր և գործակից Ենգելսին Դարվինի «Տեսակների ծագումը» նշանավոր գրքի մասին։

«Թեև չարադրված ե կոպիտ, անդլերեն, բայց այդ գիրքը մեր հայցքների բնապատմական հիմքն է տալիս»։

Իսկ Ենգելսի խոսքերով՝ Դարվինը չափազանց ծանր հարված հասցրեց բնության նկատմամբ կրոնական հայցքներին, «ապացուցելով, վոր վողջ ժամանակակից աշխարհը, բույսերը և կենդանիները, հետեվապես և մարդը, միլիոնավոր տարիներ տեսվող զարգացման պրոցեսի արդյունք են»։

Ինչպես հայտնի յեւ, ասովածաշունչը, բոլոր քրիստոնյա դավանանքների սուրբ գիրքը, ուսուցանում ե, վոր վողջ աշխարհն ստեղծվել ե ընդամենը։ Վեց որում։

1873 թվին Կարլ Մարքսը, ցանկանալով պատվել Զարլի Դարվինին, նրան նվեր ուղարկեց իր հանճարեղ գիրքը՝ «Կապիտալ»։

Դարվինը գրանից շատ զգացվեց և Մարքսին պատասխանեց այսպիսի մի նամակով։

«Ծնորհակալ եմ ձեզանից ինձ ցույց տված պատվի համար, վորն արտահայտվեց ձեր մեծ աշխատությունը՝ «Կապիտալ» ինձ ուղարկելով։ Ամբողջ ուրառվ կցանկանայի, վոր հասարակական տնտեսության խորը և կարեռ հարցերի ավելի հիմնավոր բմբանմամբ ավելի արժանի դառնայի այդ նվերին։ Թեև մեր հետազոտությունների բնագավառներն այնքան հեռու յեն միմյանցից, այնուամենայնիվ յես համոզված եմ, վոր մենք յերկուսս ել միատեսակ ձգտում ենք գիտու-

թյուն տարածելու և այդ գիտությունը վերջ ի վերը, կծառայի հոգուտ մարդկության։

Զեղ հարգող և նվիրված

Զարլի Դարվին»։

«Դառնյան մենակյացի» այդ հույսին, այդ համոզմունքին վիճակված եր լիովին իրազործվելու. յերկու նշանավոր աշխատություններն ել—և՝ «Կապիտալ»-ը, և՝ «Տեսակների ծագումը»—դարձան մարդկության իրոք սրբազն և անմահ գրքերը։

Կլիմենտ Արկադյեվիչ Տիմիրյազեվի համար վոյ միայն Դարվինի անունը, վորի հետ կապված եր նրա ամբողջ գիտակցական կյանքը, այլ և Մարքսի անունն ու աշխատությունները միշտ խորը մեծարանքի առարկա յեն յեղել։

«Դարվինի մասին ասում եյին,—դրում եր Տիմիրյազեվը,—վոր նա «մեծագույն հեղափոխականն է ժամանակակից գիտության մեջ, վոր «բերկալի յեր տեսնել, թե ինչպես Դառնի իր համեստ աշխատանոցի խաղաղ վայրից նա բոլոր մտածողների մտքերն այնպիսի շարժման մեջ դրեց, վորի յերկրորդ որինակը դժվար թե գտնվի պատմության մեջ»։

«Այն հեղափոխական շարժման մասին, վորը Դին-Ստրիտի (Լոնդոնում) խղճուկ խցիկից համակեց վողջ մարդկության վոչ միայն «գիտակցությունը», այլ և «կեցությունը», այնպիսի չափերով, վորպիսին դեռեւ վըս, անկասկած չի տեսնել պատմությունը, — ավելորդ ե յերկար խոսել ներկա պահին»։ Այսպես ե դրել Տիմիրյազեվը Մարքսի մասին։

Տիմիրյազեվի կյանքին ու գործունեյությանը նվիրված այս ակնարկում մեղ անպայման անհրաժեշտ ե, թեկուղ և համառոտ կերպով, պատմել Դարվինի նշանավոր աշխատության բովանդակության մասին, քանի վոր հիսուն տարի— կես հարյուրամյակ—

շարունակ կլիմենտ Արկադյեվիչի կյանքը և գործը
նվիրված են յեղել Դարվինիզմի համար մղվող ծանր
մարտերին:

«ՀՈԳԱՏԱՐ ՄԱՅՐԸ»

1859 թվին անդերեն լեզվով լույս տեսակ Զարլ
Դարվինի «Տեսակների ծագումը» գիրքը: Շուտով այդ
գիրքը թարգմանվեց գրեթե բոլոր լեզուներով, վո-
րոնց թվում և ռուսերեն:

Վաթունական թվականների Ռուսաստանի ցա-
րական մոլեգնած գրաքննությունն անհոգությամբ
բաց թողեց անգլիական գիտնականի այդ գիրքը:

Յեղ ինչո՞ւ բաց չթողներ այդ պատկառելի մաս-
նադիտական-գիտական աշխատությունը: Զե՞ վոր
նրանում մի բառ անդամ չկար քաղաքականության
մասին: Ավելի ճիշտ, այդ նույնիսկ ամենաոգտակարն
ե ռուս տնտեսատիրոջ համար, «ուղղակի հանրագի-
տարան... ել այդեգործություն, ել անասնապահու-
թյուն, ել աղավնաբուծություն» և վերջապես, նույ-
նիսկ մեղվաբուծություն, ել ի՞նչ ասես, վոր չկա-
յստեղ:

Այսպես եր մտածում ցարական գրաքննիչը, դնե-
լով իր «թույլատրվում ե տպել» դրոշմոցը: Յեղ ինչ-
պե՞ս մխալվեց վողորմելին: Մի տարի յել չեր անցել
այդ գրքի ռուսերեն լեզվով լույս տեսնելուց, յերբ
ակնհայտորեն պարզ յեղավ, վոր այդ աշխատու-
թյունը «աստվածընդունեմ ե», կործանիչ ե հավատի
համար, յեկեղեցու համար, հետեւապես և ցարական
պահի համար:

Իսկ ի՞նչպես Դարվինի «անասնաբուծական» և
«մեղվաբուծական» գիրքը կարող եր վնաս հասցնել
իլրոնի և յեկեղեցու ուժին:

Այն հայացքի հնագույն աղբյուրը, ըստ վորի ուշ-
իարհը և աշխարհում ամեն ինչ «ստեղծված ե» մարդ-
կային պետքերի համար, հանդիսանում ե աստվածա-

շունչը: Այստեղ նույնիսկ ասված ե, վոր արեգակն
ստեղծված ե նրա համար, վոր յերկրի վրա մարդուն
ցերեկը լույս տա, իսկ լուսինը նրա համար ե, վոր
գիշերը լույս տա, — «և յեղիցին կանթեղք ի հաստա-
տության երկնից առ ի լուսավորել զերկիր»:

Լա՛վ «կանթեղ» ե, վորի գիմաց յերկիրը — ինչ-
պես ավազի փոքրիկ հատիկը ահագին ձմերուկի մոտ:

Բայց այդ չի շփոթեցրել աստվածաշունչը ստեղ-
ծողներին: Աստվածաշնչում նույնիսկ պատմություն
կա այնմասին, թե ինչպես Հեսու Նավան կանգնեցրել
ե արեկի շարժումը, արգելել ե նրան «մայր մտնել»,
վորպեսզի նա լույս տա այնքան ժամանակ, մինչև վոր
նա վոչնչացնի իր բոլոր թշնամիներին, վորոնց հետա-
պեղում եր: Իսկ հետո թույլատրում ե՝ «Մայր մտիր,
այլևս դու ինձ հարկավոր չես»:

Ի հարկե, այժմ մեղ համար ծիծաղելի յե կարգալ
այդ հեքիաթներն այն մասին, վոր իրը աշխարհն
ստեղծված ե մարդու կարիքների և շահերի համար:
Բայց ահա մասրենու փշերը. մի՞թե նրանց նպատակը
բույսին պաշտպանելը չե: Զե՞ վոր նրանք ոգտակար
և այդ բույսին: Յեղ առհասարակ, մի տեսեք ինչքա՞ն
կատարյալ ե ամեն ինչ բնության մեջ. նապաստակը
կախկոտ ե և թույլ, բոլորը նրան — վողորմելուն — վո-
կախցնում են, և ահա ձմեռը նրան սպիտակ մորթին
չընչացնում են, և ահա ձմեռը նրան սպիտակ մորթին
նրա համար չի՞ տված արդյոք, վորպեսզի չնկատի
նրան ձյան մեջ: Նույն նպատակով չե՞ վոր ամառը նրան
դորշ մորթի յե տրվում: Զե՞ վոր այստեղ նույնպես
«հոգատար մայր բնության» կողմից նախատեսված ե
նապաստակի շահը:

Կամ կանաչ բղեղները կանաչ խոտերի մեջ: Մի՞թե
այստեղ նրանց ողուտը նկատի չի առնված: Յեթե
նրանք ուրիշ գույն ունենային, խոտի վրա անմիջապես
աչքի կընկնեյին և թռչուններն անողոքությամբ
կկոցահարեյին նրանց:

Իսկ կիզիչ անապատների յերաշտին դիմացով
բույսեկ՞րբ — սակասո՞ւլը, կակտո՞ւսը: Մի տեսե՞ք, թե

վո՞րքան կատարյալ են նրանք, վո՞րքան լավ են դիմած իրենց շրջապատող միջավայրի դեմ— տաք և չորսդի, չիկացած հողի դեմ:

Կամ ահա մի ուրիշ զարմանալի որինակ այն բանի, թե ինչպես «մայր բնությունը» հոգ և տանում իր «յերեխաների» ուժուի մասին:

Ինքնըստինքան հասկանալի յէ, վոր թևերն ողտակար են և՛ թռչուններին, և՛ թիթեռներին, և՛ բղեղներին: Բայց ահա Մադեյրա կղզու բղեղների համար թևերը վնասակար են դուրս գալիս: Այնտեղ հաճախ ուժեղ քամիներ են լինում, և թևավորութեթե բղեղներին թռած ժամանակ քամին քշում, տանում, ծովն եթափում: Այնտեղ նրանք վոչնչանում են: Ակներե և, վոր այդ կղզում բղեղներին ավելի ողտակար կլիներ միայն գետնին սողալ, և վոչ թե թռչել: Յեվ զարմանալի բան. «մայր բնությունը» ժամանակ և գտել դրա մասին ել մտածելու: Մադեյրա կղզում յեղած հինգ հարյուր տեսակի բղեղներից յերկու հարյուրը դուրկ են թևերից:

Այդպիսի որինակները չափազանց շատ են: Յուրաքանչյուր կենդանի արարածի կարծես թե իսկապես «տրված ե» այն, ինչ ամենից շատ և հարմար նրա կյանքի պայմաններին:

Իսկ ինչպես բացատրել բնության այսքան դարձանալի կատարելությունը, յեթե վոչ վորեւ բարձրագույն բանականության հոգատարությամբ դեպի յուրաքանչյուր կենդանի արարած:

Մինչեւ Դարվինի գրքի յերևան գալը կար ժամանակ, յերբ յեկեղեցու ամեն պատճական քարողիչ այդպիսի որինակներով և այդպիսի հարցերով կարող եր փակուղու առաջ կանգնեցնել և «խայտառակել» յուրաքանչյուր գիտնական բնախույզի:

Իսկապես վոր, ամեն ինչ բնության մեջ շատ և հարմար ու կատարյալ: Իսկ ինչո՞վ բացատրել այդ:

Յեվ աղնիվ գիտնականը արիարար պետք և պատասխաներ.

— Առայժմ մենք չենք կարող պատասխանել այդ Հարցին:

Իսկ յեկեղեցականների համար այդ արդեն ինքնապուհ հաղթության աղբյուր եր:

— Հենց այդ և, ե՛... Դուք, գիտնականներդ, չդիտեք, իսկ աստվածաշունչը վաղուց արդեն տվել ե իր պատասխանն այդ հարցերին: Բնության մեջ ամեն ինչ նրա համար և այդպես կատարյալ և հարմարնց ված շրջապատող միջավայրին, վորովհետեւ այդպիսին ե դուրս յեկել նա իր իմաստուն և հոգատար ստեղծողի ձեռքից: Աստված միանդամից ամեն ինչ այնպես ե ստեղծել, վորպեսզի լավ լինի և այլևս վոչ մի կարիք չլինի շտկելու կամ կիսատն ավարտելու: Նա ինքն ամեն անգամ գովարանել և իր ստեղծածը:

«Յեվ արար աստված զդապանս յերկրի ըստ տեսակի յուրյանց, և անսասունս ըստ տեսակի յուրյանց, և զամենայն զեռունս յերկրի ըստ տեսակի յուրյանց: Յեվ յետես աստված, զի բարի յե»:

ԿՈՒՅՏԻ ԽՈՏԱՆՈՂԸ

— Վո՞չ, — ասաց Դարվինն իր գրքով. — Վոչ մի բարձրագույն բանականություն նախորդ ողուտ չի նախատեսել կենդանիների և բույսերի բնությանը հարմարվելու գործում: Վոչ վոք նախորդ հոգ չի տարել, վորպեսզի յուրաքանչյուր կենդանի արարած կատարյալ լինի իր պայմաններին ու միջավայրին հարմարվելու մեջ: Այդ ինքն իրեն և ստացվել: Այդ տեղ վոչ մի նպատակ չի յեղել և չի ել կարող լինել, բայց այդտեղ յեղել ե, կա և լինի մի հասարակ, բայց հզոր և անխափանելի պատճառ:

Այդ պատճառն և մահցումը, կործանումը նրա, ով վատ և զինված, վատ և հարմարված շրջապատի բնությանը: Բայց ինչո՞վ ապացուցել, վոր չհարմարվողների այդպիսի մահցումն իրոք տեղի յե ունենում: Ապացույցներ— վորքան կուզեք: Ահա նրանցից մեկը:

Յեթե միայն խլածաղկի բոլոր սերունդները պահպանվելին, այսինքն քամին ցրեր նրա բոլոր «պարագուտտիկավոր» սերմերը և յուրաքանչյուր սերմ բուսներ և դառնար նոր խլածաղկիկ, ապա այդ դեպքում արդեն տասերորդ սերնդում խլածաղկի համար նեղ կլիներ յերկիրը: Խլածաղկիկ համատարած դորդով կծածկեր վողջ յերկրագունդը... Բայց չե՞ վոր իրականում այդպիսի բան չկա. ուրեմն խլածաղկի միլիարդավոր սերմերը վոչնչանում են, դեռևս բույս չը դարձած:

Յեթե ճանճերի բոլոր թրթուրները վողջ մնային, յուրաքանչյուրից մի ճանճ դուրս դար և նորից լիիվ պահպանվելին այդ ճանճերի սերունդները և այդպիս շարունակաբար, ապա դեռևս տասը տարի չանցած՝ ամբողջ յերկրագունդը կծածկվեր ճանճերի համատարած սև վարպույրով:

Համարյանույն արդյունքները (միայն ավելի ուշ) կստացվելին նաև մկների, առնեաների, նապաստակների, կատուների, չների, — մի խոսքով կենդանիների ուղածդ մեկ զույգի անարդել և «հարյուրտոկոյա» բազմացումից:

Իսկ ինչո՞ւ իրականում տեղի չի ունենում այդ բար: Պատասխանը պարզ է. միայն այն պատճառով, վոր և կենդանական, և' բուսական աշխարհի բոլոր տեսակների ներկայացուցիչներից ել վոչնչանում են ամեն որ, ամեն ժամ, ամեն վայրկյան առջեցուցիչ մեծ չափերով, — վոչնչանում են առանց սերունդթողնելու:

Բնությունը գոյության անընդհատ կովի ասպարեզ է, կենդանիների և բույսերի իրար հետ անընդհատ մրցակցելու ասպարեզ: Յեկ այդ մրցության մեջ հաղթողի պարզեց կյանքն և բազմանալու, իրենից հետո սերունդ թողնելու հնարավորությունը:

Մենք գիտենք, վոր խոտակերները և թոչունները բույսեր են ուտում, բայց խոտակերներին և թոչուններին ել գիշատիչ կենդանիներն են ուտում: Դա պայքար է բնության զանազան «թագավորությունների»

և զանազան «դասերի» կամ թե չե «խմբերի» միջև:

Գիշակերները նույնպես վոչնչացնում են իրար: Սակայն սրանք կոպիտ, ուղղակի, բացահայտ կովի որինակներ են, կոփի, վոր մղվում և գոյության համար: Բայց որինակ, նապաստակները, յերբեք իրար չկծելով, չե՞ վոր ելի կարող են փոխադարձաբար վոչնչացնել իրար: Յերևակայեցեք, վոր մի ինչոր տեղ նրանք այն քանակությունից ավելի լինեն, վորպիսին կարող ե կերպակը տվյալ վայրում. նրանցից վոմանց վիճակվելու յե վոչնչանալ...

Այդպես և բույսերը: Մի՞թե մենք չենք տեսնում, թե ինչպես չափազանց խիտ աճած փոքրիկ յեղնիներն իրար դեմ հողի և լույսի համար մրցելով մեղցնում են իրար:

Շատ հաճախ այդ գոյության կոփը, այդ մրցությունը հենց «յուրայինների» միջև, և՛ կենդանական մեր բուսական թագավորությունների մեջ ավելի սարեկ բարձր պատճեն անդամներն ու արմատները մի այլ տեսակի իսկ մյուսի սերմերն ու արմատները մի այլ տեսակի իսկ մյուսի սերմերն ու արմատները միջնէ մղվաղ պայքարը:

Յերկու բույս հիանալի կարող են կողք կողքի ապրել, յեթե, որինակ, մեկի արմատներին կամ սերմ ապրել, մերին հարկավոր և հողից մի տեսակ նյութ վերցնել, մերին հարկավոր և հողից մի տեսակ նյութ վերցնել, իսկ մյուսի սերմերն ու արմատները մի այլ տեսակի իսկ մյուսի սերմերն ու արմատները միջնէ միջնէ բաժանելու իրար միջև:

Այդպիսի բույսերը վոչնչ չունեն բաժանելությունը: Դեռ ավելին. և՛ կենդանական, և՛ բուսական աշխարհում «ոտարների» միջև, այսինքն, որինակ, թուչունների և ուրիշ կենդանիների միջև, կարող են նույնիսկ գոյություն ունենալ փոխադարձ ոգտակարության, փոխադարձ աջակցության հարաբերությունների:

Առանձնապես աչքի յե ընկնում ծաղիկների և վոր միջատների փոխադարձ հղտակարությունը: Ծաղիկները միջատներին տալիս են սնունդ— իրենց հյութը, իսկ միջատներն իրենց հետ մի ծաղկի փոշին տեթև:

դակուսելով մյուսին, ոգնում են ծաղիկների բեղմնավորմանը:

Իսկ յեթե միևնույն տեսակի միջատներին չեն բարձականացնում տվյալ վայրի այն ծաղիկները, վորոնց հյութով սնվում են նրանք, ապա այդ տեսակի միջատների մի վորոշ մասը վոչնչանում է:

Բայց վո՞ր մասը: Այն, վոր մի վորեւե բանով առվելի վատ, թույլ դուրս կդա իր մրցակիցների մեջ: Մի դուցե վոչնչանան նրանք, վորոնք մյուսներից ուշ են դուրս յեկել հարսնյակներից և վորոնց թեկիկներն այնպես ուժեղ և արագաթիո չեն: Այստեղ որդանիզմի մեջ յեղած մի չնչին տարբերություն կարող է հաջողություն ապահովել մի միջատի համար, իսկ մյուսին կործանում բերել:

Ինչումն է կայանում մի սերմի առավելությունը մյուսի նկատմամբ: Ինչի՞ շնորհիվ ե, վոր միևնույն բույսի սերմերից մեկը վորպես պարզե իրավունք և ստանում ապրելու և սերունդ տալու, իսկ մյուսը՝ վոչնչանում է:

— Ո՞վ գիտի, — ասում է այդ առթիվ Տիմիրյան զեկը՝ շարադրելով Դարվինի ուսմունքը: — Կարող ե պատահել, վոր այդ առավելությունը նրա կճեպի բարակության մեջն է, վորը հետացնում է նրա ծլելու պրոցեսը, բայց կարող է պատահել, վոր այդ առավելությունը կճեպի հաստության մեջն է, վորը նրան պաշտպանում է վատ յեղանակից. կարող է պատահել շուտ ծլելու մեջն է, վորը հնարավորություն է տալիս նրան առաջ անցնելու ուրիշներից, բայց կարող է պատահել, վոր, ընդհակառակն, — ավելի ուշ ծլելու մեջն է, վորը փրկում է նրան վաղ ցրտերից և պաշտպանում է նրան իր մրցակիցների բախտին արժանանալուց: Վերջապես, ամենայն հավանականությամբ գոյություն ունեն անհամար նրբագույն յերանգներ, տարբերություններ, վորոնք մենք ի վիճակի չենք վոչ միայն գնահատելու, և վորոնք այնուամենայնիվ, իրեն՝ որդանիզմի համար հսկայական նշանակություն ունեն:

Ինչ ել վոր լինի, համենայն դեպք և բուսական, և կենդանական աշխարհներում միջավայրին չհարմարվողների վոչնչանական անվիճելի և պատսուրեք գոյություն ունեցող վաստ ե: Յերբեմն միլիոն կենդանի արարածներից կենացնի յե մուռ և իրենից հետո սերունդ և թողնում միայն մեկը:


Այդպիսի անողոք և կույր խոտանումը, այդ անընդհատ «մակումը» հազարամյակնենի ընթացքում, վերջին վերջո հասդում և ավելի կատարյալ անհատների գերակշռությանը, նրանց գերակշռությանը, վորոնք ավելի լավ են հարմարվել գոյության պայմաններին:

Յեվ ալսպես, այն հարցին, թե ինչն է բնության մեջ գոյություն ունեցող այնքան հրաշալի կատարելության գոյություն ունեցող պատասխանում և բնության անպատճառը, Դարվինը պատասխանում է՝ բնության անհատական կարծես թե կատարելությունը: «Բնությունն անընդհատ կարծես թե մաքրում և իր սխալների հետքերը, — ասում է Դարվինը: — Իսկ յուրաքանչյուր պատահական հաջողություն» ամբացվում է, այսինքն ծնողներից ժառանգաբար անցնում և վորպիներին»:

Այժմ մենք արդեն կարող ենք ճիշտ կերպով բացատրել թե ինչու Մադեյրա կղզում բղեգների շատ տեսակներ անթե են:

Բղեգների այն տեսակները, վորոնք ունեցել են ամենալավ, ամենից լայն կամ ուժեղ թներ և վորոնք հաճախ են թռիչքների մեջ յեղեւ հաճախ ել վոչնչացել են. — Քամին մեծ քանակությամբ նրանց տարել ծովս և թափել իսկ այն բգեղները, վորոնք վորեւե պատահականության պատճառով վատ թներ են ունեցել, ովքեր ավելի շատ են «ստել տանը», նրանք կենդանի յեն մնացել և սերունդ են թռիչքել:

Բայց քանի վոր գոյություն ունի հատկանիշների ժառանգում և ժառանգականությունը կարծես թե թանձրանում, կուտակվում է, յեթե յերկու ծնողների



Նկա շե կ. Ա. Տիմիրյանի վնա անդլիական համալսարանի դոկտորի միջնարժական
ասաբազութ:

Հատկանիշներն ել նման են իրար, ապա վատ թեեր ունենալու ոգտակար հատկանիշը յուրաքանչյուր նոր սերնդի հետ քիչ-քիչ սկսել է ավելի ու ավելի ուժեղ կերպով յերեան գալ:

Ահա ինչպես հենց իրենք, ըրջապատող պայմանները, առանց ամեն տեսակի «բարձրագույն բանականության» մասնակցության, թնարել են ոգտակարը և վոչընչացըրել վնասակարը։ Այդ պրոցեսը կարող է պատահել, վոր շատ հաղարածյակներ և տեսել, և, ինչպես յերեսամ ե, դեռևս չի ավարտվել, վորովհետեւ հինգհարյուր տեսակներից անթե են (այսինքն «կատարյալ» են Մաղեցրայի պայմանների համար) ընդումենք միայն յերկու հարյուր տեսակ։

թեև այդ քանակությունն առանց այդ ել չատ մէծ
ե յերկրադնդի ուրիշ վայրերի հետ համեմատած, բայց
և այնպէս ակներեւ ե, վոր յեթե այդ պրոցեսը հետա-
գայում ել այդպէս ընթանա, Մաղեցրա կղզում թեա-
վոր բղեները բոլորովին կվոչնչանան։ Յեվ կմնան
միայն «կատարյալները», այսինքն անթեները։ Ի հար-
կե, այդ տեղի կունենա այն դեմքում, յեթե չդադա-
րեն թուչող միջատների համար Մաղեցրա կղզում փչող
վտանգավոր քամիները։

Մարդը, — որինակ, մի վորսե «բզեզարուծ», —
նույն արդյունքին կարող եր հասնել շատ ավելի արագ
կերպով։ Եա կարող եր մի քանի տարվա ընթացքում
անթև բզեզների սերունդ ստանալ։ Կընտրեր ամենա-
կարծ թերե ունեցող բզեզներին և հնարավորություն
կտար նրանց բեղմնավորվել մյուսներից առանձին։
Նոր սերնդի միջից ելի կընտրեր ամենից կարծ թեավոր-
ներին, իսկ մնացածներին կվոչնչացներ։ Յեվ այլպես
շարունակ։ Այդ կլիներ արիեստական ընտրություն։
Դրանից ողտիւմ են պարտիզանները, յերք, ցանկա-
նալով վարուշ զույնի ծաղիկների տեսակ ստանալ, յու-
րաքանչյուր ցանքսի մեջ առանց խղճալու այրում

ին բոլոր անհամապատամիսան որինակները, այսպէս կոչված «քճերը», իսկ համապատասխան տեսակներին բազմանալու առանձին հնարավորություն են տալիս:

Արհեստական ընտրության են դիմում և՝ անաս-նաբուծները և՛ թոշնարուծները, յերբ ցանկանում են անասունի կամ թռչունի վորոշ տեսակ ստանալ: Յու- րաքանչյուր սերնդից ընտրում են հատուկ հատկու- թյուններ ունեցող որինակները, նրանց առանձնագ- ուամ են մյուսներից, վորպեսզի նրանց առանձին բազ- մացնեն:

Արհեստական ընտրության պատճառը մարդու ցանկությունը կամ կարիքն ե: Մարդը կարող է տե- սակներ ստանալ այնպիսի հատկանիշներով, վորոնք վոչ միայն ոգտակար չեն կենդանու համար, այլ ն ունիսկ վնասակար են: Այսպես որինակ, շատ գեր խոզեր են ստանում, վորոնք հազիվ են կարողանուած քայլել իրենց բարակ ու կարճ վոտիկների վրա:

Բնական ընտրության պատճառն այս կամ այն հատկանիշի ոգտակարությունն ե կենդանու կամ բույսի համար: Ոգտակար հատկանիշը կենդանուն կամ բույսին հնարավորություն ե տալիս վողջ միաժ և իրենից հետո սերունդ թողնել: Այդ ոգտակար հատ- կանիշը ժառանգականության ճանապարհով կուտակ- վելով հասնում ե չըջապատող պայմաններին «հրաշ- լիրեն» հարմարվելու այնպիսի աստիճանի, վոր մենք հիացած բացականչում ենք. «Վորպիսի՛ կատարելու- թյուն... ի՞նչպես ամեն ինչ նախատեսված ե»:

Տայց իրականում այդ կատարելությունը կույր, անդիտական խոտանման հետևանք ե: Մահը և ժամանակը — ահա ովքեր են այդ «խոտանողները» և ընության մեջ կատարելություն առաջ բերող կույր պատճառը: Վոչ մի նպատակ ընությունը չունի: Մի- այն մարդն ե նպատակներ դնում իր առաջ: Իսկ կեն- դանի արարածների զարմանալի հարմարվածությունը չըջապատող ընությանը՝ պետք ե բացատրել պատ- ճաներով և վոչ թե ինչ-վոր մեկի կողմից մտածված նպատակներով:

Այդ յեղբակացությունը Դարվինի առաջին հաբ- վածն եր այն բացատրությանը, վոր աստվածաշունչը և «առորյա իմաստությունը» տալիս են այսպես առած բնության «կատարելությանը»:

ՏԵՍԱԿՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Յերկրորդ հարվածը կենդանիների և բույսերի տեսակների ծագման պատճառների դարմին- յան բացատրությունն եր:

Ի՞նչ բան ե «տեսակը»: Բացատրենք որինակով: Եւ և ձին շատ բաներով նման են իրար— այդ պատ- ճառով ել նրանք մի ցեղի յեն դասվում: Բայց եշի և ձիու միջև ակնհայտ տարբերություններ կան, և ահա այդ տարբերությունների գումարով ել եշը և ձին ողատկանում են միևնույն ցեղի տարբեր տեսակներին:

— Տեսակը, — ասում ե նշանավոր գիտնական լինեյը, — դա այն անհատների հանրագումարն ե, վորոնք նման են իրար, ինչպես յերեխաները ծնող- ներին:

Տնային շունը և գայլը միևնույն ցեղի տարբեր տեսակներն են: Իսկ «շուն» տեսակի ներսում նկատ- վում են այլտեսակներ, փոփոխակներ: Որինակ՝ վուկը և «գայլախեղդը», թաղին և գամփոր, այդ բո- լորն ընտանի չների տեսակի փոփոխակներն են:

Վո՞րտեղից են առաջացել զանազան տեսակները: «Երանք այլպես են ստեղծվել», — պատասխանում եյին աստվածաշունչն ու հին գիտությունը:

Կարո՞ղ ե մի տեսակը փոխվել մյուսի: Կամ՝ կա- յո՞ղ են մի տեսակի փոփոխակից զարգանալ մի քանի ինքնուրույն տեսակներ:

— Վո՞չ մի դեպքում, — պատասխանում եր աստ- վածաշունչը և հին գիտությունը կրկնում եր նույն բանը: Գայլը — գայլ ե, շունը՝ շուն և յերբեք բանց միջև վոչ մի անցում տեղի չի ունեցել: Աստ- ված ված վորոշ քանակով տեսակներ ե ստեղծել, և նրանք այլպես ել պետք ե միան մինչև աշխարհի վերջը:

Իզուր եք գիտնականների առաջավոր մասը, այսպես կոչված եվլուցիոնիստները, նշում առանձին տեսակների միջև յեղած բացահայտ նմանությունը: Իզուր եյին ապացուցում, վոր յերկրի վրա դոյլություն ունեցող բոլոր կենսական ձևերի վողջ բազմազանությունն ունի մի ընդհանուր սկզբ— կենդանի ըլոնիջը: Իսկ նրանից արդեն միլիոնավոր տարիների ընթացքում առաջացել են կենդանի արարածների բոլոր ձևերը— ստորիններից մինչև վերինները: Յեվ վերիններն առաջացել են ստորիններից: Բարդերը ամենապարզերից:

Նույնիսկ կանգնելով իրենց հակառակորդների տեսակետների վրա, այսինքն ընդունելով «ստեղծողի» ըսոյւթյունը, եվլուցիոնիստներն այդ գեղքում նույնպես չեյին կարողանում հասկանալ, թե «ստեղծողի» ինչի՞ն եք հարկավոր անհամար տեսակներից յուրաքանչյուրի համար առանձին ստեղծագործական ակտ:

Վեճերի ժամանակ եվլուցիոնիստներն ամեն ինչում խփում եյին իրենց հակառակորդներին: Բայց նրանց ձեռքին մի կողիո կար, վորի գեմ եվլուցիոնիստներն անզոր գտնվեցին:

— Յեթե դուք պնդում եք,— նենդությամբ հարցնում եյին եվլուցիոնիստների թշնամիները,— վոր մի տեսակն առաջացել է մյուսից, ապա ասացեք՝ վո՞րտեղ են այդ անցման ձևերը, վո՞րտեղ են առանձին տեսակների միջև ընկած այդ «կամքակիները»: Ինչո՞ւ որինակ, չեն պահպանվել եշի և ձիու միջև յեղած անցման ձևերը: Զե՞օ վոր յեթե մենք մի հայացք ձգենք վողջ բնության վրա, — ասում եյին յեկեղեցականները, — ապա կտեսնենք, վոր տեսակների միջև վիճեր են ընկած, վորոնք վոչ մի ձևերով չեն լցված: Առանձին են ինքնուրույն ձևերի միջև յեղած նմանությունը յերբեք չի անցնում այն նմանությունից, վոր կա եշի և ձիու միջև...

Եվլուցիոնիստների թշնամիները հաղթահակու եյին միայն մինչև Դարվինի «Տեսակների ծագումը» նշանավոր գրքի լույս տեսնելը:

— Եվլուցիոնիստներն իրավացի յեն, — ասաց Դարվինը: — Կյանքի բոլոր ձևերն առաջ են յեկել Հեռավորագույն ժամանակներում ընդհանուր արմատից: Վերինները դարձացել են ստորիններից: Մի տեսակն աստիճանաբար կարող ե փոխարկվել մյուսի՝ իր փոփոխակինների իրարից ավելի ու ավելի հեռանալու միջոցով:

— Ինչո՞ւ յեն վոչնչացել առանձին տեսակների միջև յեղած անցողիկ ձևերը, — եվլուցիայի տեսության հակառակորդների այդ նենդ հարցին Դարվինն այսպես է պատասխանաւում:

— Դրա պատճառն ել նույն բնական ընտրությունն ե, նույն անընդհատ խոտանումն ե, մեռցնելը, վորոնք անընդհատ տեղի յեն ունեցել և տեղի ունեն ընության մեջ: Իսկ միենույն տեսակի սահմաններում տեղի ունեցող այդ խոտանումն առավելապես պետք է վերաբերի հենց այն անհատներին, վորոնք իրենց կենսական պահանջներով շատ նման են իրար:

Յուրաքանչյուր առանձին որդանիզմի համար խիստ ողտակար ե յուրաքանչյուր վոքրիկ շեղում իրեն նման, իրեն ցեղակից արարածներից: Այդ որդանիզմն ամեն նման շեղումով ավելի ու ավելի դուրս ե դալիս վտանգավոր մրցությունից և, հետեւապես, պահպանվելու ու բազմանալու ավելի շատ դրավականներ ե ստանում: Զե՞օ վոր շատ ավելի անվտանգ և, յերբ այդ որդանիզմի «շահերը» չեն համընկնում, չեն բախվում ուրիշ որդանիզմի շահերին:

Յեկ վորքան ավելի նշանակալից ե շեղումն, այնքան ավելի ակնհայր ե նրա ողտակարությունը: Վորեւե տեսակային ձևի հետնորդներից յուրաքանչյուր սերնդի մեջ պետք է նախապատվությամբ պահպես ամենից քիչ նմանները, այնպիսիները, վորոնք իրենց տաղբելակերպով, պահանջներով, կերտվածքով ավելի

Հեռու յեն իրարից: Այնոււհետև նկատի ունեցեք հաս-
կանիշների ժառանգումը և հարյուր հազարավոր տո-
բիների անընդհատ զարգացումը, և ձեզ համար հաս-
կանալի կլինի, թե ինչպես սկզբում թույլ, հազիվ
նկատելի տարբերությունները յուրաքանչյուր նոր
սերնդի հետ խտանում են և դրսեվորվում ավելի ուշ-
վելի ցայտուն կերպով: Փոփոխակները վերջիվերջո
այնքան կհեռանան իրարից և իրենց ընդհանուր նախ-
նիներից, վոր կառաջանան ինքնուրույն տեսակներ:

Այժմ պարզ ե, թե ինչու յեն անվնաս մնացել մի-
այն ծայրային, վոչ-նման ձեերը, իսկ անցողիկները,
իրար ավելի նմանները, իրար մեջ ավելի շատ մրցա-
կիցներ ունենալով՝ վատ դրության մեջ են ընկել և
մահացել, իրենց տեղը զիջելով իրար առավել քիչ
նման ձեերին:

Դարվինի գրքի յերեան գալուց հետո մի քանի
տարի յեր անցել, և յերկրաբանական պեղումների
ժամանակ, վերջապես, պանվեցին կենդանիների գո-
նաքան տեսակների միջև յեղած անցողիկ ձևերի մնա-
ցորդները:

Այդպես փուլ յեկալ տեսակների ծագման յեկե-
ղական հայցքը: Եվոլուցիոնիստները վերջնակա-
նապես հաղթեցին:

Գիտության պատմության մեջ նույնիսկ նրա ա-
մենաականավոր առաջնորդներից վորեւ մեկին հազ-
վագեալ ե այդպիսի հաջողություն վիճակիվել՝ մին-
ոււյն պատճառականությամբ (ընտրությամբ) միան-
գամից բացատրել յերկու համաշխարհային առելք-
վածներ— վերջ տալ այն վեճերին, վորոնք դարեր չա-
րունակ տեղի ելին ունենում են բնության կատարե-
յության պատճառների, և տեսակների ծագման
մասին:

ՏԻՄԻՐՅԱԶԵՎԸ ՅԵՎ ԴԱՐՎԻՆԸ

Կլիմենտ Տիմիրյազեվը քսան տարեկան եր, յերբ
առաջին անգամ ծանոթացավ Դարվինի գրքին: Այլ-
ժամանակից սկսած և մինչև իր կյանքի վերջը նա
անձնուրացությամբ իր տաղանդը, գիտնականի իր
հզոր խելքը, ժողովրդականացնելու վոչ վոքի կողմից
դեռևս չգերազանցված արվեստը նվիրեց այն բանի
տարածմանը, վորի մեջ նա տեսնում եր մեծ ճշմար-
տությունը, վորն ընդմիշտ վերջ տվեց աստվա-
գիտության ընթացքը, ընդմիշտ վերջ տվեց աստվա-
ծաշնչյան կոսմոգոնիայի*): մոլորությանը:

Տիմիրյազեվը մեծ ե իր ինքնուրույն գիտական
աշխատանքի մեջ: Նրա հետազոտությունները կանաչ
տերևի մասին, քլորոֆիլի մասին—մարդկության հա-
գիտենական սեկալանությունն են: Բայց նա, ով կը-
մոռանա, թե ի՞նչ եր դարվինիզմը Տիմիրյազեվի հա-
մար, նա մինչև վերջը չի հասկանա Տիմիրյազեվի
գործունեյությունն ու նշանակությունը: Այսուեղ ել
Տիմիրյազեվը նույն «կատաղի կլիմենտն» եր, ապաս-
փելի մեկը՝ ճշմարտության թշնամիների համար:

Թե ինչ եր Տիմիրյազեվը դարվինիզմի համար,
այդ մասին լավ և ասել Տիմիրյազեվի աշակերտներից
մեկը— Ա. Պ. Մողեստովը.

— Ի՞նչ ոգուտ աղբյուրից, թեկուզ վորքան ել
բուժիչ լինի նա, յեթե անհայտ ու անմատչելի յե պա-
տակած ժողովրդին: Տիմիրյազեվները հազեցրին
մասսաների ծարավը դարվինյան աղբյուրից: Իսկ
Դարվինն առանց նրանց Դարվին չեր լինի, ինչպես յե-
թե Ուատսոնի շողեմեքենան կանգնած մնար թանգարա-
նում և վոչ թե շարժման մեջ դներ գործարաններն ու
ֆարբիկաները, չչարժեր գնացքները և այլն, չոգե-
քարշ չեր լինի, չեր լինի արտադրության սիրուը, ոյլ

կոսմոգոնիա— ուսմունք աշխարհի և տիեզերքի ծագման
մասին:

միայն հետաքրքրական խաղալիք կամ թանդարանի եքսպոնատ:

Դարվինիզմի մասին գրած իր առաջին հոդվածը Տիմիրյաղեվը հրապարակեց «Ոտեչեստվեննիյն զապիսկի» ժուռնալում 1864 թվին: Այստեղ նա առաջին հակածարվածը տվեց Դարվինի սանձարձակ «քննադատներին ու մեկնարաններին» և քսանամյա ուսունողի հարվածները շփոթեցրին դարվինիզմի բոլոր ուսույալ թշնամիներին:

Իսկ վո՞րքան աճեց այդ հարվածների ուժգնությունը, յերբ ուսանողը դարձավ առաջնակարդ դիտական: Դարվինի և Տիմիրյաղեվի դեմ դուրս յեկան հալատացյալ և հավատարիմ հպատակ գիտնականներից ամենից ուժեղները: Ակադեմիկներ Կորժինսկին, Ֆամինցինը, Փիլիպովաներ և դրողներ Ստրախովը, Դանիլեվսկին:

Կորժինսկին սկզբում դարվինիզմի համոզված կողմանակիցն եր, հետո անցավ նրա թշնամիների ըստնակը: Յեկ—տարորինակ զուղարկվություն— նա անմիջապես քսանհինդ հագար ուուրի ստացավ «նորին մեծության սեփական դիվանատնից»՝ «մեծ ոգտակարություն ներկայացնող աշխատանքները»: Հարունակելու համար:

Տիմիրյաղեվի դեմ ուղղված «գիտական» հերքումների հետ միասին գործի դրին վոստիկանական ամենազգելի հետապնդումները: «Գրաժանին» ժուռնալի խմբագիր իշխան Մեշչերսկին մամուլում բացահայտ կերպով կոչ արագ դատաստան տեսնել Տիմիրյաղեվի հետ, հայտարարելով, թե «Պետրովսկի ակադեմիայի պրոֆեսոր Տիմիրյաղեվը պետության հաշվին աստծուն վոնդում և բնությունից»:

«Շուտով մինիստրի կողմից միջոցներ ձեռք առնը վեցին, վորակեսզի յես իմ վնասակար ներկայությամբ այլևս չվարակեմ Պետրովսկի ակադեմիան», — հիշում եր հետազայում Տիմիրյաղեվը:

Դարվինիստ—նշանակում և հեղափոխական և ա-

նաստված,— այդպես եր համարում ցարական կառավարությունը, և, իհարկե, այդ բանում նա չեր միալվում:

Տիմիրյաղեվի գիտական պայքարը Ստրախովի, Դանիլեվսկու և դարվինիզմի մյուս թշնամիների դեմ յերկարատե եր, բազմամյա:

Տիմիրյաղեվը հաղթանակեց: Հանուն ծշմարտություն Կլիմենտ Արկադյովիչը շխնայեց վոչ վոքի: Նա չխնայեց նույնիսկ իրեն՝ Դարվինին, յերբ նա ամենավերջին հիպոթեզներից*) մեկի մեջ անմտածվածություն նկատեց: Յեկ Դարվինը հետազայում ինքը թյուն նկատեց: Յեկ Դարվինը գիտակարտած հիպոթեզաժարվեց Տիմիրյաղեվի դատավարութած հիպոթեզից:

Իր արտասահմայան ուղեվորություններից մեկի ժամանակ իրականացավ Տիմիրյաղեվի— այն ժամանակ ունեմա յերկարաբուժ գիտնականի— յերազը տեսնել «Դառնյան մեծ մենակացին» և զրուցել նրա հետ:

Իսկ այդ համարյա անկարելի յեր: Դարվինը շատ թույլ առողջություն ուներ, շարունակ տկար եր, և միայն նրա ընտանիքի անխոնջ հոգատարությունն եր պահպանում նրա ուժերը, վորոնք հարկավոր եյին իր հանճարեղ աշխատությունների համար: Կողմնակի հարդկանց հետ ունեցած յուրաքանչյուր զրուց ուժասպառ եր անում Դարվինին:

Այդ պատճառով ել, թեև զինված մի հայտնի գիտնականի հանճարարական նամակներով, Կլիմենտ Արկադյովիչը դեպա Պատմա առանց վորոնք հույս ունենալու, թե Դարվինին կտեսնի— զնաց «յա բախտ»:

Դարվինի վորդին— Ֆրենսիս Դարվինը,— նրան չափազանց սիրալիք և սրտանց ընդունելով՝ առանց թագցնելու ասաց, վոր դժվար թե հաջողվի տեսնվել հոր հետ:

Տիմիրյաղեվն արդեն մտադիր եր վերադառնալու,

*) Հիպոթեզ—Գիտական յենթագրություն:

բայց Յրենսիսը վորոշեց նրան ներկայացնել իր մորը:
Յեվ այն պահին, յերբ Տիմիրյաղեվը զրուցում եր
Դարվինի կնոջ հետ, իր առանձնասենյակից դուրս յե-
կալ Զարլզ Դարվինը:

— ... Իմ առաջ, — պատմում ե Տիմիրյաղեվը, —
կանգնած եր վեհափառ մի ծերունի, ճերմակ ու մեծ
մորուքով, խորը ներս ընկած աչքերով: Նրա հան-
դարտ ու սիրալիր հայացքը հարկադրում եր մոռանալ
դիտնականի մասին, առաջ քաշելով մարդուն: Մի
խոսքով, ինքն իրեն ծաղսում եր համեմատություն հին
ժամանակների իմաստունի կամ հին կտակարանի պատ-
րիաքի հետ, մի բան, վոր արտահայտեցի յես այն
ժամանակ և վորը հետո այնքան հաճախ կրկնվում եր:

Տանտերն ինքն սկսեց խոսակցությունը հյուրի
հետ, իսկ մի քանի րոպե հետո զրուցն այնպիսի թե-
թև, անբունազբոսիկ բնույթ ընդունեց, վոր կարծես
նրանք վաղուց ճանաչում եյին միմյանց:

Գիտական խոսակցությունը մերթ-ընդ մերթ ընդ-
միջում եր կատակներով և ծիծաղով:

Այդ զրուցի կեսին Դարվինը Տիմիրյաղեվին տա-
րակուսանքի մեջ դցեց հետեւյալ անսպասելի հարցով.

— Ասացե՛ք, այդ գերմանական դիտնականներն
ինչո՞ւ յեն այդպես կովում իրար հետ:

— Դուք այդ ավելի լավ կիմանաք, — պատասխա-
նեց Տիմիրյաղեվը:

— Ինչպե՞ս թե յես, — զարմացավ Դարվինը. —
յես յերեք չեմ յեղել գերմանիայում:

— Այս, բայց այդ միայն նոր հաստատումն է
ձեր տեսության — ըստ յերեսութին նրանք շատ են
բաղմացել: Այդ գոյության կոմի մի ավելորդ որի-
նակ է:

Դարվինը շատ բարեսրտորեն ու սրտալի ծիծաղեց:

Զրույցը տևեց յերկու ժամից ավելի: Դարվինը
Տիմիրյաղեվին առաջնորդեց դեպի ջերմոցը և ցույց
տվեց իր փորձերն այն բույսերի վրա, վորոնց նա կե-
րակըրում եր մոռվ:

Զրույցը հոգնեցրեց Դարվինին: Նա գնաց հանգըս-
տանալու, բայց մի քիչ անց նորից ներկայացավ հյու-
րասենյակ, վորպեսզի նորից մի քանի սիրալիր խոսք
տափ իր հյուրին:

Յրենսիսը, ինչպես և Դառնի մյուս բնակիչները,
զարմացած եյին: Դարվինը իր «ճնավորության»
քսան տարիների ընթացքում առաջին անգամ այնքան
անորինակ կերպով խախտեց իր ապրելակերպը հանուն
այդ անհայտ և յերիտասարդ ոռւս դիտնականի:

Դարվինը հետագայում ել հաճախ շատ ջերմու-
թյամբ եր հիշում իր ոռւսաստանցի հյուրին, բարձր
զնահատելով վոչ միայն նրա անձնական հմայչու-
թյունը, այլ և խորը իմացությունը: Դարվինը նրան,
վորպես բույսերի ֆիզիոլոգի, շատ ավելի բարձր եր
դասում գերմանական դիտնականներից:

Պնդելով Անգլիայում Փիզիոլոգիական լաբորա-
տորիա ստեղծելու վրա, Դարվինը անգլիական գիտ-
նականներից մեկին հետևյալն է գրում.

«Յես կարծում եմ, վոր գերմանական լաբորա-
տորիաները կարող եյին որինակ ծառայել մեզ համար,
սակայն Մոսկվացի Տիմիրյաղեվը, վորը չընել ե վողջ
Յեվրոպան, յեղել ե բոլոր լաբորատորիաներում և
այնքան պատվական յերիտասարդ ե թվում ինձ, մեզ
համար կարող կլիներ կազմել ամենաանհրաժեշտ գոր-
ծիքների ամենալավ ցուցակը»:

Ա. ՀՈՒՅՍ ԵՐ ՃԱՌԱԴԱՅԹՈՒՄ

Բոլոր նրանք, ովքեր թեկուղ մի անգամ պատահել են Տիմիրյաղեվին և զրուցել նրա հետ, հիշում են նրա հետ անցկացրած ժամերը, վորակես իրենց կյանքի ամենաուրախ պահը:

— Բոլորին ել բերկրանք եր պատճառում նրա չրջանում լինելը, — հիշում ե Տիմիրյաղեվի ամենասիրելի աշակերտներից մեկի կինը—Նադեժդա Ալեքսանդրովնա Սարոգոնովան: — Կիմենտ Արկադյեվիչն անորինակ քնքուշ եր, մեղմ, ուշադիր բոլորի նկատմամբ: Ուշադիր եր ինչվոր առանձնահատուկ մեղմությամբ, յերբեմն նույնիսկ ամոթխածությամբ:

Նա շատ եր սիրում յերեխաներին: Նրա դրամանուերը միշտ լիքն ելին կանֆետով: Յերեխաները ձըդտում ելին դեսի նա, ինչպես յերկաթի մանրունքը՝ մագնիսին:

Սակայն յերեմն հասակավոր ուսանողները նույնպես յերեխաների ելին փոխվում՝ դեսի նա ունեցած սիրուց:

Պրոֆեսոր Տիմիրյաղեվը, վորը միշտ նրաղեղ եր, միշտ անթերի հազնված, յերեմն դասախոսության եր գալիս մի ահապին ձմերուկ կոնատակին: Նրա խոշոր կապույտ աչքերը ճառագայթում ելին ուրախ և համով կատակի կրակով:

Լսարանը, շունչը պահած, սպասում եր, թե ինչ ե լինելու:

Իսկ Կիմենտ Արկադյեվիչը կտրեց դանակի տակ ճրթճրթացող վառ կարմիր ձմերուկը, վորի պտղա-

մսի վրա կարծես շաքար եր պապղում, և այդ կտորները ցըեց ուսանողների շարքերի մեջ:

— Նայեցեք, հիշեցեք, — ասաց նա, — այդ գրեթե միակ դեպքն ե, յերբ կարելի յէ հասարակ, անզեն աչքով տեսնել բջիջը— այնքան խոշոր ե նա հասած ձմերուկի պաղամսի մեջ:

Դուքս գալիս Տիմիրյաղեվը ձմերուկը թողեց սեղանի վրա: Յեկ ի հարկե, մի քանի բոպե հետո այդ ձմերուկից վոչինչ չմնաց: Ամեն մեկը ցանկանում եր թեկուղ մի փշրանք ստանալ «տիմիրյաղեվյան» ձմերուկից:

Կլանված լինելով իր գիտական աշխատանքներով, Տիմիրյաղեվը միշտ ժամանակ եր գտնում գնալու ուսանողական հավաքույթները, այցելելու հիվանդ և աղքատ ուսանողի Կողճուկ սենյակը և իհարկե դրամով ոգնելու նրան:

Իսկ ինքը միշտ կարիքի մեջ եր, չնայած վոր կարող եր ահապին գումարներ ստանալ իր հրապարակացին դասախոսությունների համար, քանի վոր այն լսարանները, ուր նա դասախոսում եր, բազմությունից արագվում ելին:

Բայց Տիմիրյաղեվը բոլոր այդ համարված գումարները անխախտ կերպով հատկացնում եր կամ անբերբությունից տուժածների ողտին, կամ հրեական ջարդերի զոհերին, կամ վերջապես, կարիքավոր ուսանողներին ոգնելու գործին:

Միայն մեկ անգամ, յերբ վտարված եր ակադեմիայից, նա դասախոսություն կարդաց, վորից ստացված միջոցները ծախսվեցին անհրաժեշտ գործիքներն փորձանոթներ գնելու վրա: Ակադեմիայի գործիքներն ու անոթները Տիմիրյաղեվն եր հորինել ու սարքավորել, սակայն նրանք լարորատորիայի «ինվենտարն» ելին համարվում: Իսկ առանց նրանց Տիմիրյաղեվն այնպես եր, ինչպես մարդն առանց ձեռքերի և առանց աչքերի:

Տեղին ե ասել, վոր Տիմիրյագեվի սարքերը միշտ նույնպես նրբագեղ եյին և անթերի, ինչպես ինքը Տիմիրյագեվը։ Նա շատ անդամ է ասել, վոր ինքը յերազում է մի շարք այնպիսի սարքեր ստեղծել, վորոնք «տեղավորվելին բլինի մեջ» վորպեսզի ամբողջ լաբորատորիան կարելի լիներ տեղափոխել մի ճամպրուկով։ Հնարավոր ե, վոր այդ բանին խթանում եր նրա խական, անդադրում ձգտումը դեպի ճամբորդություն։

— Ճամբորդությունն ամենալավ խնայողությունն է սև որվա համար, — սիրում եր կրկնել նա։

Տիմիրյագեվի ոգնականներին միշտ զարմացնում եր նրա անսպառ աշխատունակությունը։

— Բնախույզների 1893 թվի համագումարի նախապատրաստական աշխատանքների ժամանակ, — պատմում է պրոֆեսոր կրաշենիններվ, — մենք, յերիտասարդներս, հալից ընկել եյինք գերլարումից։ Իսկ նա ցերեկային նիստերից հետո ամբողջ յերեկոն լարված կերպով աշխատում եր լաբորատորիայում, իսկ զիշերային ժամերին ուժ գտավ գրելու «Խուսական գիտության տոնը» հոդվածը։

Նրա յերիտասարդ ասիստենտները, վորոնք հետագայում ակադեմիկներ և պրոֆեսորներ դարձան — Վոտչալը, Պետրովսկին, Պոնյատովին, — յերեկոնները հաճախ դիտմամբ լուսավորում եյին լաբորատորիայի՝ Նիկիտսկուն նայող պատուհանները, վորպեսզի լույսով գրավեյին Տիմիրյագեվին։ Յեկ նա լաբորատորիայում լույս տեսնելով՝ ներս եր վազում ու չեր կարող չվագել։ իսկ տուն՝ իրեն սպասող ընտանիքի մոտ ճաշի, նա գնում եր գիշերվա ժամը տասներկումին։

Տիմիրյագեվիներն ապրում եյին համեստ, համարյա աղքատ։ Սկզբում կլիմենտ Արկադյեվիչի բնակարանը բազմահարկ տան վերին հարկումն եր։ Սակայն սանդուխքով հաճախակի բարձրանալը կլիմենտ Արկադյեվիչին հետզհետե սրտի հիվանդություն պատ-

ճառեց։ Այն ժամանակ համալսարանը նրան բնակարան հատկացրեց առաջին հարկում։ Բնակարանը խոնավ եր, նրա տակ մի սառը նկուղ եր, վորը միաժամանակ իրու սառցարան եր ծառայում։ Յերբ Կլիմենտ նրա կագեցիսի ոգնականները գնում եյին նրա մոտ, նրանք ավելի տաք եյին հազնվում, այնքան սառնություն եր վորում վոտներին։

Այստեղ արեն ընկնում եր միայն մայրամուտի ժամանակ, այն ել միայն սենյակներից մեկի մեջ։

Սակայն Տիմիրյագեվի նեղ ու սառը առանձնաւ սենյակը կահավորված եր մեծ ճաշակով և նույնիսկ շպտ հարմար եր թվում։ Պատերը զարդարված եյին զարմանալի վարպետությամբ պատրաստված գեղարվեստական լուսանկարներով։ Այդ լուսանկարները հանել եյին ինքը Տիմիրյագեվը և իր վորդի Արկադի Կիմենտյավիչը, վորը մանուկ հասակից ուղեկցում եր հորը նրա բոլոր ճամբորդությունների ժամանակ։

Միակ շքեղությունը, վոր յերբեմն կարող եր իրեն թույլ տալ Տիմիրյագեվը, վորը միշտ հպարտությամբ ասում եր, թե տասնհինգ տարեկան հասակից սկսած նրա ճախ ձեռքը չի ծախսել մի գրոշ անգամ, վոր աչ ձեռքը վաստակած չլինի, — նրա համար միակ շքեղությունը միայն թանկագին գրքեր գնելն եր։

Ինչքա՞ն յերջանկություն և ուրախություն եր առկայօնում նրա աշքերում, յերբ բոլոր իր այցելուներին նա ցույց եր տալիս «Բրիտանական ենցիկլոպեդիան» վորի հրատարակությունը հարմարեցված եր տեղափոխությունների համար։

Կլիմենտ Արկադյեվիչը մի «թուլություն» ևս ուներ, վորի վրա զեմ չեյին ծիծաղելու իր մտերիմները։ Նա սիրում եր կատուններին, սիրում եր նրանց հետ խաղալ, թելի ծայրին մի կտոր թուղթ ամրացնելով։

— Ինչպես եր Տիմիրյագեվին անցկացնում իր պատ ժամանակը, ինչո՞վ եր լցնում հանդստի ըռպեները, — հարցը ին մի անդամ մի մարդու, վորը Տիմի-

Քյաղեվին մոտ և կանգնած յեղել նրա վողջ կյանքի
ընթացքում:

— Հանդստություն— հետեւ մի քիչ տարակու-
սանք արտահայտող պատասխանը:— Բայց Կլիմենտ
Արկադյեվիչը հանդստություն եր համարում մի աշ-
խատանքից մյուսին անցնելը:

1909 թվին Կլիմենտ Արկադյեվիչին և նրա մտե-
րիմներին մեծ փորձանք պատահեց — արյունհոսու-
թյուն տեղի ունեցավ դեպի նրա ուղեղը և նրա մարմ-
նի ձախ կեսը անդամալուծվեց:

Սակայն ծանր հիվանդության պահին անդամ Կլի-
մենտ Արկադյեվիչը մնաց նույնպես պայծառ և արի,
ինչպես միշտ: Նա առաջվա նման ելի ուշադիր եր զե-
պի մարդիկ, առաջվա նման հմայող, սրամիտ խոսա-
կից եր, միայն նրա ձայնի մեջ իր նկատմամբ ինչուր
հեղնանք և թախիծ եր յերեան յեկել:

Յեկ կարծես աննշան, բայց խորապես հուզող մի
փաստ.— յերեխաները, վորոնք սովորաբար ինչ-վոր
բնազդորեն խուսափում են հիվանդներից, առանձ-
նապես անդամալուծներից, առաջվա պես «կալչում»
ելին Տիմիրյաղեվին իր շարժական բազկաթոռի մեջ:

Կաթվածից հետո մի քիչ կազդուրվելով՝ Տիմի-
րյաղեվը նորից դիտական աշխատանքի անցավ: Բայց
նա դժվարանում եր դրել— ձախ ձեռքին նա համարյա-
չեր տիրապետում և նույնիսկ չեր կարողանում նրա-
նով թուղթը բռնել:

Այնուամենայնիվ, նրա առողջությունը չուտով
այնքան վերականգնվեց, վոր նա լիովին կարող եր իր
դիտական աշխատանքները շարունակել համալսարա-
նում:

Սակայն 1911 թվին տեղի ունեցավ «կարմիր»
պրոֆեսորի վերջնական վտարումը բարձրագույն
դպրոցից, վորի ստեղծման համար նա տվել եր իր ա-
վելի քան յերեսուն տարվա ջանքերը:

ԴԵՊԻ ԲԱՐՁՐՈՒՄԲՆԵՐԸ

1914 թվին մարդկությունն ընկավ կապիտալիստ-
ների սարքած համաշխարհային արյունոտ սպանդի
մեջ: Արյունոտ մառախռուղը մթաղնեց նաև գիտու-
թյան ամենապայծառ մտքերը:

Մեծ գիտնականներն հանկարծ համակվեցին վայ-
րագ ու արյունաբրու ատելությամբ «ոտար» ժողո-
վուրդների նկատմամբ: Հզոր լինելով իրենց գիտու-
թյան մեջ, նրանք չկարողացան ըմբռնել այն բանը,
վոր ժողովուրդներն այստեղ միայն գոհ են, վոր պա-
տերազմը հորինվել է ցարերի, կապիտալիստների,
դիպլոմատների կողմից— աշխարհը վերաբաժանելու
համար, համաշխարհային շուկաների համար:

Ամերիկյան նշանավոր գիտնական Եդիսոնը նույ-
նիսկ ժամուլում լիտեռությամբ պարծենում եր, թե ին-
քը իր հայրենիքի ողտին այնպիսի վոչնչացնող հրա-
նոթներ կհորինի, վորոնք «մարդկության հոգին սար-
սափով կսառցնեն»:

Արյունից արբեցած այդ սարսափելի և անարդ
ժամանակներում ամբողջ աշխարհում միայն մի ձայն
եր ժողովուրդներին կոչ անում դադարեցնել յեղայ-
րասպան սպանդը, տապալել նրանց, ովքեր ճակատնե-
րում թափված արյունը վեր են ածում դոլլարների,
փունտ ստերլինգների և ոռուբլիների:

Այդ լենինի գլխավորությամբ դործող մի խումբ
անվեհեր բոլշևիկների ձայնն եր:

Այն որերին, յերբ Յեկը բարձրագույն բոլոր գործությունները կարող են անդամ
հանդիպեցին իրար:

«Մեծարգու Կլիմենտ Արկադյեվիչ, — այսպես
եր սկսվում Տիմիրյաղեվին ուղղված՝ Գորկու ա-
ռաջին նամակը:— Զեղ դիմում ե մի մարդ, վորն
իր հոգեկան զարգացմամբ շատ և պարտական Զեր
դաղափարներին, Զեր աշխատություններին: Հա-

Վանաբար Դուք լսել եք իմ անունը, յես — Ե՞ւ Գորկին եմ, գրականադես»:

Այնուհետև Ալեքսեյ Մաքսիմովիչը Տիմիրյազեվին հրավիրում եր աշխատակցելու իր նոր «Լետոպիս» ժուռնալին: Ինչի՞ համար եր այդ ժուռնալի կարիքն զգացվել: Այդ բանը Գորկին բացատրում եր իր նամակում.

«Արյունալի դեպքերը մեր որերում զարթեցրին և զարթեցնում են չափազանց շատ մութ զգացմունքներ և ինձ թվում ե, վոր արդեն ժամանակն ե փորձելու այդ մռայլ փոթորկի մեջ իրականության խելացի և քննադատական վերաբերմունքի չափավորող սկզբունք մտցնել»:

Տիմիրյազեվը վոչ միայն ինքը ջերմությամբ արձագանքեց այդ հրավերին, այլ և «Լետոպիսի» աշխատանքների մեջ գրավեց նաև իր վորդուն — Արկադի Կիմենտյեվիչին, վորն այն ժամանակ արդեն աչքի բնինող Փիզիկոս եր դարձել:

Տիմիրյազեվի ճանապարհը մեկ եր Գորկու հետ, և նինի հետ: Մեծ բնախույզի իր սուր, թափանցող խելքով նա թափանցեց համաշխարհային սպանդի նախապատրաստման գաղտնիքների խորքը: Նա գիտեր, թե ում համար ե ոգտակար պատերազմը:

...«Դիպլոմատները, — գրում եր Տիմիրյազեվը, — իրենց ժողովուրդների աչքերը կապած՝ տանում են անդունդի պոռնկը և անմիջապես հրում-զցում են նրա մեջ: Նույնն են անում նաև մյուս ամի դիպլոմատները: Իսկ յերբ վոչինչ չսպասող, վոչինչ չհասկացող ժողովուրդները կյանքի և մահվան պայքարի մեջ են ընկնում, ուր մնում ե մի բան միայն — վորքան կարելի յե շուտ կրծել-պոկել դիմացինի կոկորդը, քանի դեռ նա քոնը չի պոկել, — դիպլոմատները հաճույքով են նույնում իրենց սարքած գործին, բացատրելավ այն ցեղային ատելությամբ, պատմական խնդիրներով, կուլտուրայի համար մղվող պայքարով և ուրիշ դեղեցին խոսքերով...»

Յեռամյա արյունհոսությունից ուժասպառ յեղած ժողովուրդը 1917 թվի փետրվարին ապստամբեց և տապալեց ցարին: Բայց իշխանությունն անմիջապես զալթեց բուրժուազիան և դեմս իր ներկայացուցիչների — կերենսկիների և Միլյուկովիների:

Այսպես կոչված ժամանակավոր կառավարությունը, վերցնելով իշխանությունը, ամբողջ ուժերը ուղղեց այն բանին, վորպեսզի թույլ չտա, վոր պրոլետարական հեղափոխություն լինի յերկրում:

Կառավարությունը կոչ արավ՝

— Բոլորն ընդդեմ արտաքին թշնամու, բոլորն ընդդեմ գերմանացիների: Դասակարգային պայքարը կսպասի: Այժմ դեռ ժամանակը չի:

1917 թվի հունիսի 18-ին կերենսկին հյուծված ու արյունաքամ զինվորական զանդվածները քշեց դեպի նոր հարձակում:

Ինչպէս վերաբերվեց այդ բոլորին Տիմիրյազեվը: Ցարի տապալումը նա վողջունեց: Նա ժամանակավոր կառավարությանն արհամարհում եր և ատում:

— Արտակարդ ասլուշ, — ասում եր նա կերենսկումասին:

Յեկ նորից, բոլշևիկների հետ միասին, Տիմիրյազեվը կոչ արավ վերջ տալ իմալերիալիստական պատերազմին:

Մի ժամանակ նրան թվաց, թե բուրժուազիան իդեմս ժամանակավոր կառավարության կամրացնի իր իշխանությունը և կճնշի զինվորների ու բանվորների ապստամբությունը: Ինչպիսի՛ տաղնապով հեղափոխության բախտի նկատմամբ, ինչպիսի ցավով են համակված նրա այն ժամանակվա նամակներն ուղղված Մաքսիմ Գորկուն:

«Նորից ու նորից կրկնում եմ ներբառովները: «Ավելի վատ ժամանակներ են յեղել, բայց վոչ ավելի անարդ»:

Վողջ յեղեք, պահպանեցեք Զեղ — գուցե այս զարքելիությունն ել անցկացնենք, թեև դժվար եմ

Հավատում։ Ինչպես յերեսում և սրբիկաներն իրենց հաղթանակն են տոնում բոլոր գծերով և վաղը—մյուս որը պարոնայք Կորնիլովները, Միլյուկովները—Դարս դանելսկիները և Ռոճյանկոները — տխմարները կվերականգնեն «ստովիպինյան խաղաղացումը» կամ Պրանից վատթար ինչ-վոր բան։

Գլուխս խառնվել ե. ձեռքս բան չի բռնում։ Յեթե մենք այժմ չենք հասել «մինչև վերջին», ապա յես չգիտեմ ել ուրիշ ինչի՝ պետք ե սպասել։

Անկեղծորեն Ձեզ նվիրված

Կ. ՏիՄԻՐՃԱԶԵՎ»:

Տիմիրյազեվի յերկյուղն անտեղի յեր։ Գուրս յեկավ, վոր բուրժուազիան «խալիֆա յեր մեկ ժամով»։ Փետրվարին հետևեց Հոկտեմբերը։ Կերենսկիները, Ռոճյանկոները և Միլյուկովները շպրտվեցին պատմության աղբանոցը։ Բանվոր դասակարգը բոլշևիկների կուսակցության, Լենինի և Ստալինի կուսակցության ղեկավարությամբ իր ձեռքը վերցրեց ժողովը՝ յերկրի և հեղափոխության բախտը։

Յարը և բուրժուազիան սոսկալի ժառանդություն ելին թողել — յերկիրն ընկած եր քայլայված, անդամալույծ վիճակում, տարածվում եր տիֆը, սովը։

Այդ սարսափելի պահին յերկրի ամենից կրթված մարդկանց մեծ մասը դավաճանությամբ իրեն արտասալուեց։ Այդ դավաճանությունը սարսափն եր (նենդադուլը)։ Ինտելիգենցիայի ճնշող մեծամասնությունը հաղթանակող պրոլետարիատից խրտնեց ու մի կուշ նետվեց։ «Ինչպես են համարձակվում, ի՞նչպես կարող են ինչվոր խոհարարուհիներ և «գուեհիկ, անտառչ, տղետ» բանվորներ վտանգություն անել իշխանության «սրբության» դեմ։ Ինչպես կարելի յեթույլ տալ, վոր կոշտ ու անկարող ձեռքերը մոտենան պետության կառավարման նրբագույն ապարատին։

Յեկամա ահա այդ նրբագույն ապարատը նետվեցին

սաբոտաժնիկների դավաճանական «բոլտերն» ու «օլուտակամերները»։

Իսկ ծայրամասերում — Սիբիրում, Դոնի, Կուբանի վրա, Կոռնիլովները, Միլյուկով-Դարդանելսկիները և Ռոդճյանկո — Տիմիրյաներն արդեն կանչում հավաքում եյին իրենց ու ագռավներին՝ պատառութելու և քրքրելու համար ժողովրդի առանց այդ ել պատառութված մարմինը։

Թեժանում եր քաղաքացիական պատերազմը։ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ որերից Կլիմենտ Սրկադյեմիլիչ Տիմիրյագեվն իրեն ամբողջովին և անվերապահությամբ նվիրեց բոլշևիկներին, բանվոր դասակարգին, պրոլետարական հեղափոխությանը։

Նա խորին ծերության մեջ, մարմնի կեսն անդամալույծ վիճակում, պայծառությամբ պահպանել եր իր վիթխարի մտքի վողջ կարողությունը, իր գիտության վողջ անսպառ արսենալը և տիմիրյագելյան իր խոսքի վողջ կրակությունը։ Այդ բոլորով նա մի ժամանակ ահարկու ու սարսափելի յեր ժողովրդի և ճշմարտության թշնամիների համար։ Յեկամա ահա նա նորից թշնամիների դեմ բարձրացրեց իր վորքված զենքերը։

Իսկ ինտելիգենցիայի աշխատավոր մասի համար նրա որինակը ուժի և վոգեռության աղբյուր եր, նրա որինակը քաջալերում եր տատանվողներին։

— Տիմիրյազեվը բոլշևիկների հետ ե։

Այդ ահակու տարիներին «կատաղի կլիմենտը» պատմության և ժողովրդի դատաստանի առաջ փրկեց ուղական ինտելիգենցիայի ու գիտության պատիվը։

Բուրժուական պրոֆեսուրան, — բոլոր այդ Տիխոմիրովները, Ֆամինցիները — թշնամաբար Փշշացնում եյին նրա դեմ... և նզովք եյին ուղարկում նրան։

— Ծախվել ե բոլշևիկներին, դավաճանել ե կուլտուրային...»

Սակայն Տիմիրյազեվը շատ լավ գիտեր կուլտու-

բայի կործանման մասին բարձրացրած այդ վոռնոց-ների արժեքը: Նա տեսնում էր, վոր միայն բոլեվիկ-ները, միայն բանվոր դասակարգը կարող են ազատագրված ժողովրդին տալ այն բարձր կուլտուրան, վորը յերազել են մարդկության լավագույն մտքերը, — սոցիալիզմի կուլտուրան:

«Վաճառվել ե» — ցարական պնակալեզներ Ֆամինցիները, Տիխոմիրովներն իրենց թույլ եյին տալիս նրա հասցեյին այդպիսի խոսք շպրտել... Նրա-Տիխորյազեվի:

Նրանք արդեն հաջողեցրել եյին հապճեպ կերպով իրենց գույնը փոխել, աղերսելով հաջողեցրել եյին ստանալ վառելիք, ուտեստի ակադեմիական բաժիններ, իսկ այն տարիներին, յերբ քաղցում եր նույնիսկ ինքը լենինը, այդ բարձրագույն ապահովությունն եր, վոր բանվոր դասակարգը խնայում, հետ եր զցում իր մարտիկներից, իր սեփական մանուկներից և տրամադրում եր գիտնականներին:

Իսկ նա՝ «ծախված» Տիխորյազեվը: Նա Փիդիկապես գրեթե անողնական, գամլած իր բնակարանին, չեր ցանկանում վորեւ մեկին մի բառով անդամ ակնարկել իր կարիքների մասին և Մոսկվայի բոլոր պրուլետարների հետ հավասար արիությամբ տանում եր քայլայման այդ տարիների բոլոր սոսկալի զրկանքները:

— Ինչպես բոլորը, նա ապրում եր առանց վերակուն հանելու սառը, չտաքացված բնակարանում և հաճախ եր իր հացի կտորն ուտում առանց աղի, վոր չեր ճարպում: «Այ, հիմա յե, վոր գիտես, թե իսկապես ի՞նչ ե հարկավոր մարդու»՝ հաց և աղ, — տսաց նա ինձ՝ հրավիրելով իր հետ ալանի կերակուր ուտելու». — Այդպես ե պատմում Տիխորյազեվի անցկացրած այդ որերի մասին նրան այցի գնացած Պռնյատովին:

— Նա տառացի կերպով տանում եր քաղցն ու ցուրտը, բայց տանում եր համառ, անտրտունջ և նույնիսկ խանդավառությամբ. վոչ մի անդամ յետ

նրանից դժուհության ակնարկ անդամ չլսեցի, — հիշում և կրաշեններկովը:

Այդ պայմաններում Տիխորյազեվն, առանց ձեռքերը ծալելու, աշխատում եր իր «Գիտությունը և գեմովիրատիան» նշանավոր հոդվածների ժողովածուն հրատարակության պատրաստելու վրա:

Նրա կինը — Ալեքսանդրա Ալեքսեյենան բաժանում եր նրա հետ բոլոր աշխատանքներն ու զրկանքները: Նվիրելով նրան իր գրքերից մեկը՝ Կլիմենտ Արկադյեանը դիմում ե իր կյանքի այդ հավատարիմ ուղեկցին ու ընկերոջն այսպիսի խոսքերով.

«Դու ամենառուշագլիք ունենդրողն եյիր այդ դասիսությունների և կազմեցիր նրանց առաջին ուրվագիծը մեր աշխատանքային յերիտասարդության տարիներին: Այժմ դու ոգնում ես ինձ գրանց ուշացած հրատարակությունը պատրաստելու գործում և բաժանում ես մեր ազնիվ պրոլետարական ծերության բոլոր ձախորդություններն ու զրկանքները»:

Յերբ լույս տեսավ «Գիտությունը և դեմովիրատիան» գիրքը, Տիխորյազեվը նրա առաջին որինակն ուղարկեց Վլադիմիր Իլյիչին:

Շուտով նա Վ. Ի. Լենինից այսպիսի նամակ ստացավ.

«Թանկարկին Կլիմենտ Արկադյեվիչ.

Մեծապես շնորհակալ եմ Ձեզանից ձեր գրքի և բարի խոսքերի համար: Յես ուղղակի հրճվում եյի՝ կարդալով Ձեր դիտողություններն ընդունելութուազիայի և ի պաշտպանություն Խորհրդային իշխանության: Ամուռ, ամուռ սեղմում եմ Ձեր ձեռքը և ամբողջ հոգով ցանկանում եմ Ձեզ առողջություն, առողջություն և առողջություն:

Ձեր Վ. ՈՒ.ՑԱՆՈՎ (Լենին):

Ապրիլի 27-ին 1920 թ. Մոսկավա»:

Տիխորյազեվի կյանքի ամենայերջանիկ բոպեն եր առջել:


Իսկ դրանից վոչ շատ առաջ նա խորն ուրախություն ապրեց Մոսկվա-Կուրսկ յերկաթուղու վազոնա-վերանորոգման արհեստանոցների բանվորներից՝ ի նշան նրանց խորին հարգանքի, սիրո և վստահության բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների Մոսկվայի խորհրդի անդամության տոմս ստանալով։

Տիմիրյաղեվն իր այդ կոչմամբ ավելի շատ եր հպարտանում, քան բոլոր այն գիտական աստիճաններով, վորոնք մի ժամանակ տվել եյին նրան աշխարհիս զանազան համալսարաններն ու ակադեմիաները։

Վազոնա-վերանորոգման բանվորներին նա վող-ջույնի հուզմունքով լի նամակով պատասխանեց։

Ահա մի մասն այդ նամակի, վորն արժանի յե բոլոր գպրոցական քրեստոմատիաների մեջ մտցնելու։

«Աշխատել, աշխատել, աշխատել։ Ահա այն կոչը, վոր պետք ե հնչի առավոտից մինչեւ յերեկո և մարդկոց-մարդ՝ բազմաչարչար այն յերկրի, վորն որինական իրավունք ունի հպարտանալու նրանով, ինչ արդեն կատարել ե և վորը դեռ արժանի պարզեվ չի ստացել իր բոլոր զոհերի, իր բոլոր մեծագործությունների համար։ Այս պահին չկա անկարևոր և մանր աշխատանք, իսկ առավել ես չեա, ամոթալի աշխատանք։ Կա մի աշխատանք—անհրաժեշտ և խելամիտ։ Բայց ծերունու աշխատանքը կարող ե և առանձնահատուկ իմաստ ունենալ։ Ծերուկի այդ աշխատանքը, վոր ազատ ե, վոչ պարտադիր և չի մտնում համաժողովրդական նախահաշվի մեջ, այդ աշխատանքը կարող ե ենտուզիազմ վառել յերիտասարդների մեջ, կարող ե ամոթահար անել ծույլին։ Յես ընդամենը մի առողջ ձեռք ունեմ, բայց նա յել կարող ե պատել հաղորդակի բոնակը, յես միայն մեկ առողջ վատք ունեմ, բայց այդ ել չի կարող ինձ արգելել սովորանի վրա աշխատելու։





Կան յերկրներ, վորոնք իրենց ազատ են համառում, ուր այդպիսի աշխատանքը համարվում է ստորացուցիչ պատիժ հանցավորների համար, սակայն կրկնում եմ, մեր ազատ յերկրում ներկա պահին ամոթալի և ստորացնող աշխատանք չեղարող լինել:

Իմ գլուխն ալևոր ե, բայց նա չի հրաժարվում աշխատելուց: Իմ բազմամյա դիտական փորձառությունը գուցե կարող է գործադրվել դպրոցական գործերում կամ հողագործության բնագավառում: Վերջապես մի խորհրդածություն ես. մի ժամանակ իմ համոզված խոսքն արձագանք եր գտնում ուսանող սերունդների շարքերում: Մի գուցե այժմ ել այդ խոսքը տեղը յեկած ժամանակ ողնի տատանվողներին, ստիպի մտածել ընդհանուր գործից փախչողներին:

Այդպես ուրեմն, ընկերներ, առանց ձեռքներս ծալելու՝ բոլորս ընդհանրական աշխատանքի լըծվենք, և թող ծաղկի մեր Խորհրդային հանրապետությունը, վորն ստեղծվեց բանվորների և գյուղացիների անձնուրաց սիրագործությամբ և վորը հենց նոր մեր աչքերի առաջ փրկվեց մեր փառա-

ւոր բազուկության վողջ կրքոտությամբ կլիմենսա Ըրկադյեվիչը նվիրվել եր այդ նոր և իր համար սրբազն աշխատանքին բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների Սոսկվայի խորհրդում:

Գարնանը, բաց ավտոմոբիլով Մոսկովիարդից վերադառնալիս, նա մրսեց և հիվանդացավ թոքերի բոբրոքում:

Նրա հասակում (իսկ կլիմենսա Արկադյեվիչն այդժամանակ յոթանասուն յոթ տարեկան եր) այդ հիվանդությունն առողջանալու դրեթե վոչ մի հույս չեր թողնում:

Հիվանդի դրությունն ավելի ու ավելի յեր ծանրանում: Կյանքին սպառեացող վտանգն աճում եր որեցոր: Կլիմենսա Արկադյեվիչն զգում եր, վոր մահը մոտ ե:

Տիմիրյաղեվի կյանքի վերջին ժամերի մասին պատմում ե պրոֆ. Ա. Բուշը պոեմի բարձրունքներին հասնող խոսքերով:

Այդ խոսքերը, վորոնք յեղբակակված են իրեն Տիմիրյաղեվի իսկական խոսքերով, թող յեղբակակենաւե մեր պատմությունը նրա մասին, վորի կյանքը հանձարեղ պոեմ ե յեղել Արեգակի, ձշմարտուքյան և Սոցիալիզմի մասին:

« Հին համալսարանական բակում պրոֆեսորական նեղ բնակարանի լուսամուտներն եյին թափանցել գարնանային արևի չողերը: Արևը կանչում եր, դիեպի կյանք և ստեղծագործություն: Անկողնում պառկած եր, ալեղարդ և ծեր մի մարդ— կլիմենսա Արկադյեվիչ Տիմիրյաղեվը, վորի վողջ կյանքն անցել եր դիտական ստեղծագործությում: Նրա ստեղծագործական հետաքրքրությունները դիտության մեջ կենտրոնացած եյին արևի և կյանքի վրա, բնության այդ յերկու լեռներուց թների միջև յեղած կապի վրա: Արևը և այդ գարնանային որը դեպի կյանք ելին կոչում: Սակայն մարդն զգում եր, վոր մեռնում ե: Նրա հայոցքը

Ա. Ա. Տիմիրյաղեվ—8

Ա Խորյացի կմոլուց ոչ (*
ոչ մարդ)

կանդ առավիրեն շրջապատող մտերիմների վրա: Այս-
տեղ եր նրա կինը, ընկերը և ողնականը, վորը բա-
ժանել եղ իրենց ազնիվ՝ պրոլետարական ծերության
ըոլոր զրկանքներն ու ձախորդությունները: Այդտեղ
եր վորդին, արդեն կաղապարված գիտնական, վորն
իրականացրել եր նրա կյանքի յերազը, և դարձել եր
Փիզիկոս: Այդտեղ կային նաև իր աշակերտներից,
վորոնք նվիրվածությամբ և հավատարմությամբ հե-
տեւվում եյին նրան՝ գիտության մեջ նրա ընտրած ճա-
նապարհով: Սակայն նրա ուշադրությունը կանդ չա-
ռավ նբանց վրա: Կլիմենտ Արկադյեվիչի մտքերը
կանդ եյին առել լենինի վրա, այն բոլորի վրա, ինչ
արվում եր այն ժամանակ խորհրդացին յերկրում, այն
յերկրում, վորը ամենալածան գոտեմարտերի մեջ
պաշտպանում եր առլրելու և ստեղծագործելու իր
իրավունքները:

Նա իր մոտ կանչեց նրան, ով իրեն շրջապատող
մտերիմ ու հարազատ մարդկանց մեջ ներկայացնում
եր ըոլշեվիկներին*), և ասաց.

— Յես միշտ ձգտել եմ ծառայելու մարդկությանը
և ուրախ եմ, վոր ինձ համար լուրջ այս բութեներին
տեսնում եմ Ձեզ, ներկայացուցչին այն կուսակցու-
թյան, վորն իրոք ծառայում և մարդկությանը...
Յես միշտ յեղել եմ Ձերը և ձեզ հետ, և հույսով եմ,
վոր իմ վորդին կլինի իմ հավատարիմ հետնորդը և
կմնա միմիայն Ձեզ — բոլշևիկներիդ հետ: Վաղիմիր
իլյիչին հաղորդեցեք իմ հիացմունքը համաշխարհային
խնդիրների նրա հանձարեղ լուծման համար՝ տեսու-
թյան մեջ և գործնականում: Յես բախտավոր եմ հա-
մարում ինձ, վոր նրա ժամանակակիցն եմ և նրա
փառապանծ գործունեցության վկան: Յես խոնարհ-
վում եմ նրա առաջ և ուղում եմ, վոր ըոլորն իմանան
այդ մասին»:

*) Այդ հայտնի վիրաբուժ և պրօֆեսոր կոմունիստ Վեյ-
բրուն եր:

ԲՈԼԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Զարհուրելի նախագուշակություն	5
Իսկ ո՞ւր կանչետանա թթվածինը	6
Ազահ դաղը	7
Ինչով եր հիմնավորում Տոմսոնն իր նախագուշակությունները	9
Բուսաբանը Փեղմկոսի դեմ	11
Մուկը և անանուխի փունջը	13
Լաղաղոյեցի նիհար մարդը	16
Կանաչ տերեկի գաղտնիքը	18
Մենք սնվում ենք ողով	20
Արեկ «պահածոները»	21
Տիմիրյագելի հաշվարկումներն ու փաստարկումները	22

ՅԵՐԿՐԱՐԴ ԳԼՈՒԽ

Կայսերական համալսարանները	27
Կլիմենտ Տիմիրյագելը և Ռոտգեյան բարոնը	29
«Արևեստանոց և վոչ Բե տաճար»	32
Տերեները և արմատները	33
Կատաղի Կլիմենտը	37
Տիմիրյագելը և հողագործությունը	43
Հարյուր ութսունյերեցի գործը	50
Առաջին անգամ լենինի հետ	56

Հայրը և մայրը	59
Վաթունսական թվականներն ու Տիմիրյաղելը	64
Մտքերի տիրակալները	69

ՅԵՐԵՐԴԻ ԳԼՈՒԽ

Յերկու համաշխարհային ուժ	74
«Հոգատար մայրը»	78
Կույր խոստանողը	81
Տեսակների ծագումը	89
Տիմիրյաղելը և Դարվինը	93

ԶՈՐՅՈՐԴԻ ԳԼՈՒԽ

Նոր լույս եր ճառապայթում	98
Դեպի բարձունքները	103

Գառ. խմբադիր՝ Ավ. Ճուղուրյան
 Լեզվական խմբադիր՝ Հ. Պետրոսյան
 Տեխ. խմբադիր Լ. Ոհանյան
 Սրբագրիչ՝ Ա. Արզաքանյան
 Կանոնադատ սրբագրիչ՝ Յ. Տ-Մինասյան

Գլուխիսի լիազոր՝ Յ-1889 Հրամ. № 4515

Պատվեր 188. Տիրաժ 3000

Թուղթ 64×92, Տպագրական 7½ մամուլ.

Եկ մամ. 24,480 նշան.

Հանձնված է արտադրության 20 փետրվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության 20 փետրվարի 1938 թ.

Պետհրատի լ տպարան, Յերևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0261364

12664

40504